ABA RULE OF LAW INITIATIVE

Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն/Իրավունքի գերակայություն նախաձեռնություն

Դատավարական հմտությունների ուսուցանման ձեռնարկ



<u>Թեմա</u>	<u>Էջ</u>
Ներածություն	3
Մինչև դատարան գնալը	6
Բացման խոսք	9
Ուղիղ հարցաքննություն	19
Խաչաձև հարցաքննություն	31
Դատական վիճաբանություններ	54
Առարկություններ	63
Ցուցանմուշներ	81
Եզրափակիչ մտքեր	99

Սույն ձեռնարկը նախապատրաստվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն/Իրավունքի գերակայություն նախաձեռնության (ABA/ROLI) կողմից: Հեղինակն է Դանիել Լինհարդը, ով ունի քրեական իրավունքի բնագավառում պրակտիկ աշխատանքի մեծ փորձ: Ձեռնարկը տեղայնացվել և փաստաբանների ուսուցման նպատակով օգտագործվել է Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն/Իրավունքի գերակայություն նախաձեռնության Հայաստանյան ներկայացուցչության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրի շրջանակներում այն տեղայնացվել է փաստաբան Հայկ Ալումյանի և ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, համատեղությամբ դասախոս՝ Տաթև Սուջյանի կողմից: Խորհուրդ է տրվում քրեական իրավունքի բնագավառում մասնագիտացած փաստաբանների և իրավաբանական ԲՈՒՀ-երի ուսանողների համար

Ներածություն

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քրեադատավարական դատավարության մրցակցային մոդելը վերաիմաստավորվել և առավել ամրապնդվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նաև Նախագիծ): Քրեական դատավարության լիարժեք մրցակցային համակարգը, որին ծրագրվում է անցնել Հայաստանում քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ընդունման արդյունքում, լուրջ մարտահրավեր է պարունակում փաստաբանների համար: Նախագծով զգալիորեն ընդլայնվում են մրցակցային տարրերը նաև մինչդատական վարույթում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ պաշտպանին իրավունք է վերապահվել վարույթին կցելու և հետազոտելու համար ներկայացնել ապացույցներ[1], որին համապատասխանում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը վարույթին կցելու այդ ապացույցները: Պաշտպանն իրավունք ունի համաձայնության դեպքում մասնավոր հարցման ենթարկել ֆիզիկական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից պահանջել և ստանալ փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե դրանք չեն

[1] ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ևս պաշտպանն իրավունք ունի ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար, սակայն Նախագծում տեղ գտած օրենսդրական կարգավորման առավելություն նախ այն է, որ այդ նյութերն ի սկզբանե ճանաչվում են ապացույց, և բացի վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դրանք կցել քրեական գործին, իսկ նման պարտականություն գործող օրենսգիրքը չի նախատեսում:

պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք[2], մեղադրյալի պաշտպանության իրականացման հետ կապված հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով ստանալ փորձագետի կարծիք: Մինչդատական վարույթում մրցակցության ընդլայնման վառ դրսևորում է ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտի ներմուծումը: Մրցակցային դատավարական ձևն առավել լիարժեք դրևսորվում է բուն դատաքննության[3] փուլում և դրա երեք ենթափուլերում՝ նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումները: Այսպես, օրինակ, նախնական դատալսումների ենթափուլում կողմերի մասնակցությամբ հավասարության պայմաններում լուծվում են հետազոտման ենթակա ապացույցների շրջանակի, դրանց թույլատրելիության հարցերը:

Այսպիսով, Նախագիծը հանարավոր է դարձնում պաշտպանի ակտիվ մասնակցությունը ապացուցման գործընթացին[4]: Ուստի չափազանց կարևոր է, որ քրեական մասնագիտացմամբ փաստաբանները հասկանան և տիրապետեն մրցակցային դատավարության համակարգին:

Մրցակցային քրեադատավարական համակարգում յուրաքանչյուր կողմ ներկայացնում է այն ապացույցները, որոնք, իր կարծիքով, օժանդակում են իր գործին: Գոյություն ունի ապացույցների ներկայացման և հետազոտման օրենքով սահմանված որոշակի կարգ, որին պետք է հետևել: Այդ կարգը հասկանալը մրցակցային համակարգում արդյունավետ գործելու առաջին քայլն է:

Հիմնական դատալսումների բուն գործընթացը ներառում է մի քանի դատավարական մասեր (դատավարական ինստիտուտներ), այն է՝ բացման խոսք, ուղիղ հարցաքննություն, խաչաձև հարցաքննություն և եզրափակիչ ելույթներ[5], որոնիցից յուրաքանչյուրի դատավարական կարգի իմացությունը կարևոր է որակյալ փաստաբան լինելու համար: Միայն վերոհիշյալ դատավարական ինստիուտների մասին հստակ պատկերացումն է թույլ տալիս փաստաբանին պատրաստել այնպիսի գործ, որը ներառում է կիրառման ենթակա օրենքի հետ առնչվող փաստերը, համոզիչ է երրորդ կողմի համար, կոչված է կանխորոշելու գործի ելքը, և որի արդյունքում որոշում է կայացվում վստահորդի օգտին:

---

[2] Մասնավոր անձանց հարցման ենթարկելու, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր պահանջելու օրենսդրական հնարավորությունը նախատեսված է նաև ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում:

[3] ՀՀ գործող քրեադատավարական կարգավորման համաձայն՝ դատաքննությունը դատական քննության փուլի մի մասն է՝ կենտրոնական մասը, որն ընդգրկում է ապացույցների հետազոտման բուն գործընթացը: Մինչդեռ նախագծում «դատաքննություն» եզրույթն օգտագործվում է առաջին ատյանի դատարանում ողջ դատական քննության փուլը բնորոշելու համար:

[4] Խոսքն այստեղ միայն ապացուցման գործընթացին պաշտպանև մասնակցության շրջանակի ընլայնման, այլ ոչ թե զուգահեռ փաստաբանական քննություն իրականացնելու ինստիտուտի մասին, որը նախատեսված չէ ոչ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով և ոչ էլ Նախագծով:

[5] ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով եզրափակիչ ելույթներին համարժեք է դատական վիճաբանությունների փուլը:

Դատավարական հմտություններ ձեռք բերելու գործընթացը նման է ցանկացած այլ հմտություն ձեռք բերելու գործընթացի, ինչպես օրինակ՝ ֆուտբոլ խաղալու հմտություններ ձեռք բերելը: Անձը պետք է նախ սովորի ֆուտբոլի կանոնները և այս կանոնները սովորելուց և երկարատև փորձից հետո միայն նա կարող է հմուտ խաղացող դառնալ: Սա պարզապես կանոններ սովորելու և դրանք առանց մտածելու կիրառելու գործընթաց չէ: Դատավարությունը ստեղծարար գործընթաց է: Կանոնները ցուցանիշեր են, որոնք ուղղություն են տալիս: Բայց հաջողակ փաստաբանը պետք է այդ կանոնների շրջանակներում այնպիսի գործ պատրաստի, որը կհամապատասխանի իր անհատականությանը, գործի փաստերին և կիրառման ենթակա օրենքին: Անձը հմուտ փաստաբանի կարգավիճակ է ստանում միայն տարիների փորձից և բազմաթիվ դատավարություններից հետո, որոնց ընթացքում ձեռք բերված հմտությունները կատարելագործվում և զարգանում են:

Ստորև ներկայացված նյութը հիմնական տեղեկություն է տալիս հիմնական դատալսումների ենթափուլի և դրանում տեղ գտած վերոնշյալ դատավարական ինստիտուտների վերաբերյալ:

Ձեռնարկն ընթերցողներին խրախուսում է օգտվել նաև այլ աղբյուրներից և նյութերից, որոնք կօգնեն նրանց՝ հաջողակ փաստաբան դառնալու ճանապարհին:

Եվս մեկ միտք կցանկանայինք հայտնել այս ներածական մասում: Դատավարությունում հաղթելու կամ պարտվելու հարցում առավել կարևոր գործոնը կարող է ամփոփվել մեկ բառով՝ նախապատրաստում: Բացարձակապես ոչինչ չի կարող փոխարինել վերջինիս: Հազվադեպ է պատահում, որ գործը հաղթում են դատաքննության ժամանակ, գործի ելքը պարզ է լինում դեռևս դատաքննությունից առաջ: Գործի հաջող ելքը մեծապես կախված է այն նախապատրաստական աշխատանքից, որը տարվում է մինչև բուն դատաքննության փուլը: Այս ընթացքում դուք կազմելու եք ձեր բացման խոսքը, կատարելու եք ձեր ինքնուրույն «քննությունը», գտնելու եք վկաների և նախապատրաստելու նրանց հիմնական դատալսումների համար: Նաև այդ ժամանակ է, որ որոշելու և պատրաստելու եք բոլոր այն ցուցանմուշները, աղյուսակները և ապացույցների հետազոտմանն օժանդակող այլ միջոցները, որոնք օգտագործելու եք: Նախապատրաստական աշխատանքի մեջ մտնելու է նաև հակառակ կողմի վկաների խաչաձև հարցաքննությանը պատրաստվելը: Հիշեք՝ դատավարությանը նախապատրաստվելը հաջողության հասնելու գրավականն է:

Մինչև դատարան գնալը

Ինչպես արդեն նշեցինք ձեռնարկի նախորդ մասում, առավել հաճախ գործի ելքը պարզ է լինում դեռևս մինչև փաստաբանի դատական նիստերի դահլիճ ոտք դնելը: Գործի ելքը կանխորոշում է նախապատրաստական այն աշխատանքը, որը տարվում է մինչև դատաքննության փուլը: Որոշակի բաներ կան, որոնք ցանկացած փաստաբան պետք է անի մինչև բացման խոսքը նախապատրաստելը:

A. Դատաքննությանը նախապատրաստվելը

Աշխատանքը, որը տարվելու է դատաքննությանը նախապատրաստվելու համար չափազանց կարևոր է լինելու փաստաբանի համար: Այն ուղղակիորեն ազդելու է դատաքննության բոլոր փուլերի վրա: Օրինակ՝ փաստաբանը կարող է զգալ, որ ավելի շատ մարդկանց հարցաքննելու (մասնավոր հարցման ենթարկելու) կարիք կա հասկանալու համար՝ արդյոք հնարավոր է հերքել հակառակ կողմի վկայի ցուցմունքը: Փաստաբանը կարող է հասկանալ, որ նախապատրաստական աշխատանքի արդյունքում ձեռք բերված ապացույցների լույսի ներքո գործի վերաբերյալ իր վարկածն արժանահավատ չէ: Այսպիսով, փաստաբանը չի կարող բացման խոսքն ուրվագծել առանց իմանալու, թե ինչ խաղաքարտեր ունի իր հակառակորդը, և թե ինչ պատասխան փաստարկներով պետք է ինքը հանդես գա նրանց դեմ:

Ինչ վերաբերում է ուղիղ հարցաքննությանը, փաստաբանը պետք է ցանկանա ոչ միայն նոր վկաներ գտնել, այլև որոշակի գիտական հետազոտություններ հանձնարարել: Հնարավոր է՝ նա ցանկանա համոզվել, որ որոշ փաստեր ներառված են վկայի ուղիղ հարցաքննության մեջ, փաստեր, որոնք միգուցե հակառակ դեպքում ինքը կարծեր, որ վերաբերելի չեն: Խաչաձև հարցաքննության ժամանակ փաստաբանը կցանկանա իմանալ ոչ միայն թե ինչ է վկան ասել ամբիոնից, եթե նա տարբերվող վկայություն է տվել, այլև թե ինչ կասեն հակառակ կողմի այլ պոտենցիալ վկաներ: Միգուցե հնարավոր լինի բախում ստեղծել հակառակ կողմի վկաների միջև, որը կթուլացնի նրանց բոլորի ցուցմունքները: Պաշտպանը կարող է նաև ձեռք բերել փաստաթղթային ապացույց, որը կարող է օգտագործվել հակառակ կողմի վկաներին որակազրկելու համար:

Եվ վերջում, կողմերի եզրափակիչ ելույթները կախված են նրանից, թե ինչ ի հայտ կգա ապացույցների հետազոտման ժամանակ: Դատավարությանը պատրաստվելիս պաշտպանը

կցանկանա նախատեսել, թե ինչպիսին կլինեն եզրափակիչ ելույթները և համապատասխանաբար կպլանավորի իր մոտեցումը գործին: Առանց այդ բոլոր նախապատրաստական աշխատանքների անհնար է, որ փաստաբանը ճիշտ ձևով պլանավորի իր եզրափակիչ ելույթները:

B. Այցելություն դեպքի վայր

Կան որոշակի կատեգորիաների հանցանքներ, որոնց համար պաշտպանը պետք է անձամբ գնա դեպքի վայր: Սրանք այն հանցանքներն են, որոնցում տեղի ունեցածի վերաբերյալ վկայի ընկալումը շատ կարևոր է: Սրանք ներառում են այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են սպանությունը, կողոպուտը, ավազակությունը, հրկիզումը: Ոչինչ չի կարող փոխարինել դեպքի վայրն այցելելուն: Կարևոր չէ, թե որքան լավ է ինչ-որ մեկը նկարագրել այն, կամ թե որքան լավն են նկարները, կան որոշակի բաներ, որոնք պաշտպանը կտեսնի, երբ այցելի դեպքի վայր, որոնք անզնահատելի են և որոնց մասին կարելի է իմանալ միայն տեղանքն անձամբ զննելով: Սա թույլ կտա պաշտպանին հավելյալ հարցեր կազմել իր վկաների ուղիղ հարցաքննության համար և մյուս կողմի վկաների խաչաձև հարցաքննության համար: Դեպքի վայր պետք է այցելել հանցանքի կատարումից հետո հնարավորինս շուտ: Ամեն ինչ փոխվում է, ծառերը կարող են կտրվել կամ հեռացվել, շինությունները կարող են փոխվել, ծառերը կարող են կորցնել իրենց տերևները, լույսեր կարող են տեղադրվել, աղբը կարող են թափել կամ կուտակել և անթիվ այլ փոփոխություններ: Պաշտպանը պետք է դեպքի վայրը սկզբնական վիճակին հնարավորինս մոտ վիճակում տեսնի:

A. Երբ այցելել

Այցելեք դեպքի վայր օրվա այն ժամին, երբ հանցանքը կատարվել է: Եթե դեպքի վայր այցելում եք ամիսներ անց, ապա ընտրեք ժամանակ, երբ լուսավորությունը մոտավորապես նույնպիսին է, ինչպիսին եղել է հանցանքի կատարման ժամանակ: Օրինակ՝ եթե հանցանքը կատարվել է արևամուտից կես ժամ առաջ, գնացեք դեպքի վայր արևամուտից կես ժամ առաջ՝ չնայած ժամացույցով նույն ժամը չի լինի ինչ-որ հանցանքի կատարման ժամանակ: Սա անելիս հաշվի առեք, որ ամիս կամ ավելի շատ ժամանակ անցնելու հետ մեկտեղ արևի դիրքն էլ արևամուտից կես ժամ առաջ ուրիշ է համեմատած հանցանքի ժամանակ գտնված դիրքի հետ: Տարբերությունները հասկանալու համար կատարեք աստղագիտական դիտարկումներ:

Եթե գործի համար կարևոր է, թե ինչ է վկան լսել, ապա ճիշտ նույն ժամին դեպքի վայր գնալը՝ անկախ լուսավորության պայմաններից, պարտադիր է: Պաշտպանը կցանկանա իմանալ շրջապատող աղմուկի մակարդակը այդ վայրում, այդ ժամին: Օրինակ՝ եթե դեպքը պատահել է

դեկտեմբեր ամսին, ժամը 16:00-ին, լուսավորությունը հնարավոր է, որ չտարբերվի, բայց աղմկոտ երթևեկության հոսքը շատ կտարբերվի ժամը 23:00-ի դրությունից: Եթե այդ վայրը մոտ է դպրոցի, ապա աղմուկի մակարդակը կեսօրին, երբ երեխաները խաղում են դրսում, շատ է տարբերվում ժամը 14:00-ի իրավիճակից, երբ դպրոցում դասերն ավարտվում են: Նմանապես երթևեկության քանակը՝ մարդիկ, մեքենաները, բեռնատարները և ավտոբուսները, որոնք կարող են փակել վկայի տեսադաշտը, օրվա ժամից կախված կտարբերվի:

Փորձեք այցելել դեպքի վայր, երբ եղանակային պայմանները նույնն են: Սա կարող է հատկապես կարևոր լինել, եթե հանցանքի կատարման ժամանակ անձրևել կամ ձյուն է տեղացել, քանի որ սա կարող է ազդած լինել վկայի՝ տեսնելու և լսելու կարողության վրա:

B. Ինչ տանել ձեզ հետ

Տարեք ձեզ հետ տեսախցիկ: Լուսանկարներն արեք այնտեղից, որտեղից վկաների ասելով իրենք ականատես են եղել հանցանքին: Պահեք տեսախցիկը աչքերի մակարդակի վրա՝ փոխելով բարձրությունը և հնարավորինս համապատասխանեցնելով այն տարբեր վկաների աչքերի մակարդակներին: Նաև մեկ ուրիշին բերեք ձեզ հետ: Փաստաբանը չպետք է վերածվի վկայի: Եթե անհրաժեշտ է դառնում օգտագործել լուսանկարը վկային որակազրկելու կամ նույնիսկ պարզապես դեպքի վայրը դատավորին ավելի լավ ցույց տալու համար, փաստաբանը չպետք է իրեն վերածի վկայի: Մեկ այլ անձի ընտրելիս փաստաբանը պետք է ընտրի մեկին, ով վատ չի զգա վկայություն տալուց և հանդես կգա որպես լավ և արժանահավատ վկա: Բերեք նաև չափող գործիքներ, ինչպես օրինակ չափող ժապավեն, անիվ, վայրկեանաչափ և ցանկացած այլ բան, որը անհրաժեշտ կլինի որոշակի գործով տարածությունը, ժամանակը և հեռավորությունը չափելու համար:

C. Ինչ անել

Լուսանկար(ներ)ը պետք է արվի այնտեղից, որտեղ վկա(ներ)ն է կանգնած եղել մինչև ենթադրյալ հանցագործության կատարման տեղը: Եթե կան մեկից ավելի վկաներ, այս գործընթացը պետք է կրկնվի յուրաքանչյուր վկայի նպաստավոր դիտակետից: Այն դեպքում, երբ վկան տեսել է մեղադրյալին դեպքի վայրից հեռանալիս, լուսանկարը պետք է ցույց տա ամբողջ տարածքը, որով ենթադրվում է, որ մեղադրյալն անցել է: Եթե մեկից ավելի վկա կա, այս գործընթացը պետք է կատարվի յուրաքանչյուր վկայի տեսանկյունից: Սա ցույց կտա հնարավոր օբյեկտները, որոնք ժամանակավորապես կփակեին վկայ(ներ)ի տեսադաշտը ՝ այդպիսով կրճատելով այն ժամանակը, որ վկան(երը) ունեցել է մեղադրյալին տեսնելու համար:

Պետք է կազմվի տարածքի գծագիրը: Սրա համար պաշտպանից պահանջվում է իր հետ դեպքի վայր բերել չափող գործիքներ, որպեսզի բոլոր չափումները ճշգրիտ լինեն: Պաշտպանին օգնող անձը պետք է անի չափումները՝ չնայած պաշտպանը պետք է հետևի այդ ամենին, որպեսզի համոզվի, որ բոլոր չափումները ճշգրիտ են: Չափումները պետք է արվեն այնտեղից, որտեղից որ, ըստ վկա(ներ)ի, ինքը ականատես է եղել հանցագործությանը: Սկզբում գծագիրը պետք է գծվի գետնի վրա, իսկ հետո դրա հիման վրա պետք է կազմվի համապատասխան մասշտաբով գծագիրը: Սա կարող է օգտագործվել հակառակ կողմի վկաներին խաչաձև հարցաքննելու, ինչպես նաև փաստաբանի վկաների ցուցմունքները մեկնաբանելու և դրանց օժանդակելու համար, եթե այդ անձի ցուցմունքն անհրաժեշտ է հակառակ կողմի վկայ(ներ)ի ցուցմունքին հակասելու համար: Համոզվեք, որ հիմնական դատալսումների ժամանակ օգտագործվող գծագիրը և բոլոր լուսանկարները ներկայացվում են որպես ապացույցներ, որպեսզի գործի վերաբերյալ որոշում կայացնողը կարողանա դրանք հաշվի առնել խորհրդակցական սենյակում որոշում կայացնելիս:

Եթե գործողությունը շարունակական է եղել, այն պետք է վերստեղծել տեսնելու համար, թե որքան ժամանակ է անցել: Օրինակ՝ եթե վկան ասում է, որ տեսել է, թե ինչպես է մեղադրյալը վազել թաղամասով և հետո անկյունով թեքվել ու անհետացել, այդ վազքը պետք է վերստեղծել և դրա համար ծախսված ժամանակը հաշվել՝ օգտագործելով վայրկենաչափ: Վայրկենաչափը պետք է պահի այն անձը, ով ցուցմունք է տալու հիմնական դատալասումների ժամանակ, քանի որ նա պետք է կարողանա ասել, որ չափել է ժամանակը ոճրագործի ենթադրաբար առաջին անգամ հայտնվելուց մինչև ենթադրաբար անհետանալը: Սա կարող է կիրառվել նաև այն դեպքում, երբ, օրինակ, մարդը հայտնվում և կրակում է տուժողի վրա և հետո հեռանում դեպքի վայրից կամ ցանկացած այլ տեսակի հանցագործություն, որի համար այս տեսակի չափումը տեղին է: Փաստաբանին կհետաքրքրի, թե վկան իրականում որքան ժամանակ է ունեցել հանցանքին ականատես լինելու համար: Փաստաբանը պետք է ընդհանուր հաշվարկված ժամանակից հանի այն ժամանակը, որի ընթացքում վկայի տեսադաշտը փակված է եղել: Շատ հաճախ վկան կարծում է, թե շատ ավելի ժամանակ է ունեցել նայելու համար, քան իրականում ունեցել է և պաշտպանը պետք է ցույց տա, որ վկան շատ քիչ ժամանակ է ունեցել՝ այդպիսով կասկածի տակ դնելով վկայի կողմից հանցագործին ճանաչելը:

Բացման խոսք

Բացման խոսքով փաստաբանն առաջին տպավորությունն է թողնում դատավորի մոտ: Ձեզ միայն մեկ հնարավորություն է ընձեռնվում առաջին տպավորություն ստեղծելու կամ ստեղծածը ամրապնդելու համար: Դատավորի մոտ ձեր և ձեր գործի վերաբերյալ որոշակի տպավորություն է ստեղծվում, և այն հաճախ պահպանվում է դատաքննության ամբողջ ընթացքում: Բացման խոսքը նաև գործը դատավորին ներկայացնելու առաջին հնարավորությունն է ձեզ տալիս: Այն հիմնական դատալսումների կարևոր մասերից մեկն է, որը պետք է զգուշությամբ պատրաստել և ներկայացնել: Դժբախտաբար այն հաճախ անտեսվում է որպես հիմնական դատալսումների գործընթացի մաս, և դրան նույն կարևորությունը չի տրվում, ինչ մյուս մասերին:

Բացման խոսքում դուք ներկայացնում եք գործի վերաբերյալ ձեր վարկածը (դիրքորոշումը), որը շարունակելու և զարգացնելու եք հիմնական դատալսումների ընթացքում: Բացման խոսքում անհրաժեշտ է իրար կապել բոլոր այն վերաբերելի փաստերը, որոնք կնպաստեն ձեր օգտին որոշում կայացնելուն: Բացման խոսքը ստեղծում է մի մեծ պատկեր, որը հնարավորություն է տալիս դատավորին ապացույցը, օրինակ՝ վկայի ցուցմունքը, տեղավորել գործի ներկայացման այն պատկերի մեջ, որը ձեր տեսանկյունից առավել ճիշտն է:

Այս պահին պետք է անդրադառնանք նաև մեկ այլ կարևոր հարցի: Բացման խոսքը չպետք է պարունակի սխալ կամ ապակողմնորոշող հայտարարություններ այն ամենի վերաբերյալ, ինչը պարզվելու է ապացույցների հետազոտման ընթացքում: Սա ոչ միայն էթիկայի տեսանկյունից ոչ ճիշտ քայլ է, այլև ճշմարտությունը հայտնի դառնալուց հետո դուք կկորցնեք ձեր արժանահավատությունը դատավորի առջև: Փաստաբանի ամենակարևոր զենքն իր արժանահավատությունն է, և կորցնելուց հետո այն վերադարձնելը կարող է անհնար լինել: Երբ փորձում եք ինչ-որ հարցում ինչ-որ մեկին համոզել, ապա այդ անձը որոշում կայացնելիս որպես կարևոր գործոն նժարին ձեր արժանահավատությունն է դնում:

Բացման խոսքը կազմված է երեք մասերից, (1) թեմա, (2) պատմություն, (3) վերդիկտ (դատավճիռ) խնդրելը:

A. Թեմա

Թեման պարզապես գործի վերաբերյալ ձեր վարկածն է, այլ կերպ՝ «իրականում տեղի ունեցածի» ձեր տարբերակը: Այն պետք է լինի պարզ, տրամաբանական համապատասխանի փաստերին և գործի իրավական պահանջներին: Թեման հիմնականում մեկ կամ երկու նախադասությունից բաղկացած ելույթ է, որն ամփոփում է, թե ինչի մասին է գործը: Թեման դատավորին տալիս է «հոգեբանական խարիսխ», որն ամփոփում է ամբողջ գործը: Դա այն է, ինչին փաստաբանն անդրադառնալու է հիմնական դատալսումների ամբողջ ընթացքում: Սկզբում այն ներկայացվում է բացման ժամանակ, հետո դրան հղում կկատարեն վկաները, իսկ այնուհետև եզրափակիչ ելույթները կկենտրոնանան դրա վրա՝ ի մի բերելով հիմնական դատալսումների ողջ ընթացքը: Լավն է այն թեման, որը հիմնված է համընդհանուր ճշմարտությունների վրա: Այդպիսի թեմաների համար աղբյուր են սուրբ գրքերը, գրականությունը, հայտնի ասացվածքները և մշակութային փորձը: Ահա թեմայի մի քանի օրինակներ.

- *«Սա վրեժի հետ կապված գործ է»:*

- *«Մումական հարստության և ուրախության մասին էր երազում, ինչպես և մեզնից շատերը: Եվ սա մի պատմություն է այն մասին, թե ինչպես մեղադրյալն այդ երազանքը վերածեց մղձավանջի»:*

- *«Փողի նկատմամբ սերը բոլոր չարիքների արմատն է և այս գործում մեղադրյալն այդ չարի պատկերն է»:*

- *«Սա սխալ մարդու դեմ մեղադրանք առաջադրելու վերաբերյալ գործ է»:*

- *«Այս գործում իրական տուժողը մեղադրյալն է»:*

Առաջին տպավորությունը մնայուն է: Բացման խոսքի սկզբում ներկայացված լավ թեման երկար ժամանակ պահպանվում է դատավորի մտքում: Փաստաբանն այն կկրկնի նաև եզրափակիչ ելույթի ժամանակ, որպեսզի այն պահպանվի դատավորի մտքում գործի վերաբերյալ որոշում կայացնելիս:

Թեման և դրան հաջորդող պատմությունը ներկայացնելիս փաստաբանը պետք է ցույց տա գործի նկատմամբ իր ունեցած խանդավառությունը: Բացման խոսքը պետք է ուժեղ և եռանդուն ձևով ներկայացվի, որը թույլ կտա բոլորին մտածել, որ փաստաբանի դիրքորոշումը ոչ միայն ճիշտ է, այլև փաստաբանը հավատում է դրան: Նույնիսկ ամենալավ փաստերն ու թեման չեն համոզի դատավորին, եթե փաստաբանը գործում համոզմունք ցույց չտա: Լավ փաստաբաններն առաջնորդվում են հետևյալ կարգախոսով. «Մենք ակնկալում ենք հաղթել գործը, քանի որ մենք

ճիշտ ենք»: Այնուամենայնիվ հիշեք, որ դա բացման խոսք է, այլ ոչ թե եզրափակիչ ելույթ, որը հիմնական դատալսումների վերջում է լինում: Նաև տպավորություն ստեղծելիս, որ ձեր դիրքորոշումը ճիշտ է, երբեք չպետք է ասեք. «Իմ կարծիքով մեղադրյալը մեղավոր է» կամ «Ես անձամբ կարծում եմ, որ մեղադրյալն անմեղ է»: Ձեր կարծիքը նշանակություն չունի, քանի որ կարևորն ապացույցներն են: Կարող եք ասել. «Դատավարության ավարտին ապացույցները ցույց կտան, որ մեղադրյալը չի կատարել իրեն մեղսագրված հանցանքը» կամ «Դատավարության ավարտին ապացույցները ցույց կտան ցանկացած ողջամիտ կասկածից դուրս, որ մեղադրյալը սպանել է Աշոտ Գևորգյանին»:

B. Պատմություն

Հիմնական դատալսումների ընթացքում ներկայացվող պատմությունը բաղկացած է մի շարք փոքր պատմություններից: Ոչ մի վկա չի պատմի ամբողջ պատմությունը, այլ միայն դրա այն փոքր հատվածները, որոնք գիտի: Բացման խոսքում փաստաբանը ներկայացնում է ամբողջ պատմությունը՝ հիմնված այն փոքր պատմությունների վրա, որոնք կներկայացվեն վկաների կողմից: Բացման խոսքը թույլ է տալիս դատավորին հասկանալ ամբողջ պատկերը և տեղադրել վկաներից յուրաքանչյուրի պատմությունը ընդհանուր համատեքստի մեջ: Բացման խոսքի այս մասը պատմություն կոչելը չի նշանակում, որ այն փաստացի ճիշտ չէ: Դա պարզապես նշանակում է, որ փաստաբանը պատմում է, թե ինչ է տեղի ունեցել, ինչպես որ վկաներն են ներկայացնում հարցաքննության ժամանակ: Դա շատ չի տարբերվում նրանից, երբ մեկը պատմում է, թե ինչ է տեսնել կամ լսել լսողի համար հետաքրքիր ձևով: Օրինակ, բացման խոսքը ներկայացնելիս փաստաբանի կարող է պատկերացնել, որ ինքը Մաշտոցի պողոտայի վրա՝ օպերայի շենքի մոտ է կանգնած և պատմում է իր ընկերներին մի բանի մասին, որն իրեն իսկապես հետաքրքրում է և ինքը ցանկանում է համոզել իր ընկերներին, որ դա համապատասխանում է իրականությանը, և նրանք պետք է դրան հավատան:

Բացման խոսքում լավ պատմություն ներկայացնելու համար պետք է մի քանի կարևոր բան հիշել: Նախ, պատմությունը պետք է կենտրոնանա մարդկանց և ոչ թե խնդրի վրա: Դատավորը մարդ է, իսկ մարդիկ նայում են իրերին այլ մարդկանց միջոցով: Սա նշանակում է, որ հաջողակ փաստաբանը պետք է ներկայացնի գործն իր աչքերով: Փաստաբանը պետք է անհատականացնի իր վստահորդին կամ տուժողին՝ դարձնելով նրանց իրական մարդ: Նույնը վերաբերում է նաև վկաներին: Այս մարդկանց պետք է միս ու արյուն տալ բացման խոսքում, որպեսզի նրանց արժանահավատությունն արդեն իսկ ամրապնդված լինի նախքան ցուցմունք տալը:

Դատավարության բոլոր այս մասնակիցներին անհատականացնելը թույլ է տալիս դատավորին ավելի լավ տեսնել իրավիճակը իր իսկ տեսանկյունից, որպես մարդկային էակ: Ահա երկու օրինակ.

«Սա մի պատմություն է Ելենայի՝ Երևանի մշտական բնակչուհու մասին: Նա ուսանող էր Երևանի պետական բժշկական համալսարանում, ով քրտնաջան սովորում էր բժշկական աստիճան ստանալու համար: Բայց այդ ամենը փոխվեց հուլիսի 1-ին, երբ նրան հարվածեց մեքենան, որը վարում էր մեղադրյալը: Երեկոյան, դասերից հետո ընկերների հետ Մաշտոցի պողոտայով դեպի տուն էր քայլում, երբ մեղադրյալի մեքենան դուրս եկավ ճանապարհի երթևեկելի մասից և հարվածեց նրան: Երբ Ելենան մտածում էր ավարտելուց հետո աշխատելու մասին, մեղադրյալն իր վերջին բաժակ օղին էր խմում երկարատև երեկույթից հետո: Դրանք Ելենայի արած վերջին քայլերն էին, նա տեղում մահացավ»:

«Արմենի և Գագիկի միջև խնդիրներ կային: 2014թ-ի հուլիսի 14-ի երեկոյան, երբ Արմենը գնում էր շուկա կնոջ համար նվեր գնելու, փողոցում՝ իր տան մոտ Գագիկը մոտեցավ իրեն: Նա սպառնաց Արմենի ընտանիքին և գնալով ավելի ու ավելի մոտեցավ Արմենին: Նա հայհոյում ու շարունակում էր վիրավորել Արմենին և նրա ընտանիքին: Վերջապես Արմենը ետ հրեց Գագիկին: Այնուհետև Գագիկը բռունցքով հարվածեց Արմենին, ով պարզապես սկսեց պաշտպանվել: Սակայն Արմենն այժմ այստեղ է՝ դատարանում որպես մեղադրյալ՝ Գագիկի վրա հարձակում գործելու համար»:

Բայց զգու՛յշ եղեք: Հիշե՛ք լսարանի մասին: Գործը քննվում է միայն դատավորի առջև, ուստի ողբերգականության քիչ կարիք կա: Շատ դեպքերում դատավորները չեն սիրում չափից շատ ողբերգականություն, և դրա օգտագործումը կարող է վնասել գործին: Այս առումով փաստաբանից պլանավորում և ստեղծարար մոտեցում է պահանջվում: Հայաստանում, որտեղ դեռևս չկա երդվյալ ատենակալների դատարան, դատավորի մասնակցությամբ դատավարության պայմաններում փաստաբանը նաև պետք է փորձի տեղեկություններ հավաքել այն մասին, թե ինչպիսի ելույթներ է դատավորը սիրում, և դրան համապատասխան պատրաստի իր ելույթը:

Հաջող բացման խոսքի երրորդ կարևոր հատկանիշն այն է, որ խոսքը պետք է լինի պարզ և տրամաբանական: Հավանաբար այն պատրաստելու լավագույն ձևը ժամանակագրական հաջորդականությամբ առաջնորդվելն է, քանի որ մարդկանց մեծ մասը սովոր են պատմությունն այդ ձևով լսելուն: Դա դյուրին է և՛ փաստաբանի համար այն ներկայացնելու առումով, և՛ լսողի՝ այն հասկանալու առումով:

Բացման խոսքին ներկայացվող մյուս պահանջը դատավորին կողմնորոշելն է, թե ինչի վրա ուշադրություն դարձնի: Դատավորին նախնական պատկերացում տալն այն մասին, թե որն է

փաստաբանի կարծիքով կարևոր ցուցմունք, մեծացնում է նրա ակնկալիքներն ու պատկերացումները և կենտրոնացնում նրա ուշադրությունը այդ ապացույցի վրա դրա հետազոտման ժամանակ: Ահա մի օրինակ.

«Դատախազը կկանչի Լարիսային. ուշադիր լսեք նրա վկայությունը, որի ընթացքում նա ճանաչում է Միհրանին՝ որպես բանկը կողոպտողի: Ուշադի՛ր եղեք, թե օրվա որ ժամին է դա տեղի ունեցել և թե որտեղ է նա կանգնած եղել»:

Սրա նպատակն է հայտնել դատավորին, որ ձեր կարծիքով ականատես վկայի կողմից ձեր վստահորդին՝ որպես բանկի կողոպտիչ, ճանաչելու հետ կապված խնդիր կլինի: Ուշադրություն դարձրեք նաև այն փաստին, որ փաստաբանն իր վստահորդին ոչ թե մեղադրյալ, այլ իր անունով է կոչում: Մեղադրող կողմը կցանկանա ապաանձնավորել հանցանք կատարած անձին՝ կոչելով նրան մեղադրյալ[6] ամբաստանյալ, մինչդեռ պաշտպանը պետք է անձնավորի իր վստահորդին՝ միշտ կոչելով նրան իր անունով: Եվ նորից հիշեք ձեր արժանահավատության մասին: Մի՛ անցեք չափն այն հարցում, թե ինչ պետք է ձեր վկան ասի, և թե որքանով կորակազրկեք հակառակ կողմի վկաների ցուցմունքները:

C. Արդյունավետություն

Արդյունավետ է այն բացման խոսքը, որը չափից ավելի երկար չէ, բայց ներառում է բոլոր կարևոր տարրերը: Այն պետք է լինի 15-30 րոպեի սահմաններում: Դրանից երկար բացման խոսքը դատավորը չի լսի և այն կհամարի ոչ արդյունավետ մտածված և ծրագրված: Հիշե՛ք, որ փաստաբանն այս պատմությունը պատմում է իր ընկերներին Մաշտոցի պողոտայում: Հիմնականում այդ պատմությունները 30 րոպեից երկար չեն տևում, քանի որ ցանկացած մարդ, ով լսում է այն, դրանից հետո հետաքրքրությունը կորցնում է և ձանձրանում: Իհարկե մենք չենք առաջարկում քարացած մոտեցում ցուցաբերել բոլոր գործերի նկատմամբ, քանի որ յուրաքանչյուր

---

[6] Եթե ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ, ապա Նախագիծն օգտագործում է միայն մեղադրյալ եզրույթը՝ դրա տակ հասկանալով այն անձին, ում նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, և միաժամանակ, ում նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական կամ արդարացման դատավճիռ, իսկ դատապարտյալ և արդարացված եզրույթների փոխարեն օգտագործում է համապատասխանաբար դատապարտված մեղադրյալ և արդարացված մեղադրյալ հասկացությունները:

գործ կարող է առանձին մոտեցում պահանջել: Կարող են լինել բարդ գործեր, որոնք շատ ավելի երկար բացման խոսք են պահանջում:

<u>D. Ռազմավարական նկատառումներ բացման խոսքում</u>

1. Մի՛ վիճարկեք գործը. պահեք դա եզրափակիչ ելույթների համար

Բացման խոսքը փաստարկ չէ, այլ ելույթ գործի մասին: Եզրափակիչ ելույթների ժամանակ ներկայացվում են փաստեր, և հիմնական դատալսումների ժամանակ հետազոտված ապացույցների հիման վրա վիճարկվում են եզրակացություններն ու եզրահանգումները, վկաների արժանահավատությունը, ողջախոհությունը և այլ հարցեր: Բացման խոսքը պետք է լինի այն փաստական տվյալների շրջանակում, որոնք կհաստատվեն ներակայցվելիք ապացույցներով: Առաջին հայացքից սրանք հասարակ կանոններ են, սակայն անգամ փորձառու փաստաբանները խախտում են դրանք: Ուստի, շատ կարևոր է նախապես բացման խոսքը պլանավորելը: Գրեք այն և հետո ընթերցեք՝ որոշելու համար՝ արդյոք նշվածը փաստարկ է, թե պարզապես փաստ: Ահա ճիշտ և սխալ բացման խոսքի մի քանի օրինակ.

<u>Ճիշտ</u>

Մեքենան 45կմ /ժ թույլատրելի

արագությամբ գոտով մոտավորապես

80կմ/ժ արագությամբ էր ընթանում:

<u>*Սխալ*</u>

Նա գժի պես էր վարում՝ ամբողջ

ճանապարհին այս ու այն կողմ տատանվելով:

Ոստիկանության սպան կհայտարարի, որ

Մեղադրյալը հարձակվել է 100կգ-անոց

տուժողի վրա և վիրավորել նրան: *Ողջախոհությունը կհուշի ձեզ, որ սպայի պնդումն առ այն, որ մեղադրյալը հարձակվել է տուժողի վրա իրականությանը չի համապատասխանում:*

Ժամանակ կպահանջվի, բայց որոշակի փորձ ձեռք բերելով՝ հմուտ փաստաբանը կհասկանա, թե որն է բացման խոսքում առարկելի և որն է ճիշտ փաստարկը:

Փաստաբանը պետք է խուսափի բացման խոսքում իր անձնական կարծիքն արտահայտելուց: Այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Կարծում եմ», «Իմ կարծիքով» կամ «Գիտեմ» պարզապես տեղ չունեն բացման խոսքում: Սա վերաբերում է ոչ միայն բացման խոսքին, այլև հիմնական դատալսումների ցանկացած այլ մասի: Եզրափակիչ ելույթների ժամանակ ևս փաստաբանի կարծիքի վերաբերյալ հայտարարություններ չպետք է արվեն: Փաստաբանը վիճարկում է այն, թե ինչ է ցույց տալիս ապացույցը, այլ ոչ թե փաստաբանի կարծիքը, և դատավորները գործի վերաբերյալ որոշում են կայացնում ապացույցի հիման վրա:

2. Մի՛ չափազանցրեք ապացույցները

Ինչպես արդեն նշել ենք, փաստաբանի համար ամենաթանկ գործիքն իր արժանահավատությունն է: Երբ փաստաբանն իր բացման խոսքում ներկայացնում է ապացույց, որն այդպես էլ ի հայտ չի գալիս ապացույցների հետազոտման ժամանակ, փաստաբանը կորցնում է իր արժանահավատությունը դատարանի առջև: Ավելին, հնարավոր է, որ հակառակ կողմը եզրափակիչ ելույթների ժամանակ դատավորին հիշեցնի խոստացածի և իրականում տեղի ունեցածի միջև տարբերության մասին, որն ավելի կվնասի փաստաբանի արժանահավատությանը: Ուստի, ավելի լավ է ապացույցի վերաբերյալ ինչ-որ բան պակաս ասել և հետո միայն լրացնել պակասը:

3. Մտածեք բացման խոսքի ընթացքում ցուցանմուշներ օգտագործելու մասին

Այս ձեռնարկի մի մասը նվիրված է հիմնական դատալսումների ընթացքում ցուցանմուշներ ներկայացնելուն: Դա կարող է լինել գծագիր, լուսանկար կամ նույնիսկ քարտեզ, որը բացման խոսքի համար համատեքստ է ապահովում: Որոշ դեպքերում աղյուսակի կամ գծագրի օգտագործումը կարևոր է գործը բացատրելու համար: Այս նպատակով օգտագործվող ցուցանմուշը ամրապնդում է բացման խոսքը, դատավորի համար այն դարձնում առավել հիշվող, ինչն էլ վերջինիս թույլ է տալիս ապացույցների հետազոտման ընթացքում ավելի լավ հետևել ցուցմունքներին: Համոզվեք, որ ձեր ցուցանմուշը ճիշտ է: Սխալ ցուցանմուշը առարկության տեղիք կտա կամ եթե ապացույցը չի

հաստատում ձեր ցուցանմուշը, ապա այն կօգտագործվի որպես ձեզ ջախջախելու միջոց: Բացման խոսքի ժամանակ օգտագործված ցուցանմուշը չի կարող որպես ապացույց ընդունվել և հաշվի առնվել դատավորի կողմից անձի մեղավորության կամ անմեղության հարցը որոշելիս:

Մյուս կողմից՝ իբրև ցուցանմուշ կարող են օգտագործվել գործում առկա ապացույցները: Այսպես, Նախագծի 331-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմն իրավունք ունի իր ներկայացրած և հետազոտման ենթակա ապացույցների ցանկում ընդգրկված իրեղեն ապացույցները, ապացուցողական և այլ վարութային գործողությունների արձանագրությունները կամ արտավարութային փաստաթղթերը հետազոտման ներկայացնել սահմանված հաջորդականությունից ավելի շուտ՝ հարցաքննության ընթացքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմն իրավունք ունի հետազոտման ենթակա ապացույցների ցանկում ընդգրկված իրեղեն ապացույցները, ապացուցողական և այլ վարութային գործողությունների արձանագրությունները կամ արտավարութային փաստաթղթերը, առանց հետազոտման, ներկայացնել հարցաքննվողին՝ դրա վերաբերյալ տալով հարցեր: Եթե պատրաստվում եք օգտագործել ցուցանմուշ, որն ապացույց է, փորձեք այնպես անել, որ հակառակ կողմը չվիճարկի դրա թույլատրելիությունը: Եթե չեք կարող դրան հասնել, ի սկզբանե միջնորդեք, որ դատավորը թույլատրելի ճանաչի այդ ապացույցը:

4. Սպասեք գործում թույլ կողմերի

Գործում թույլ կողմեր թույլ տալը կամ չտալը փաստաբանի ռազմավարական որոշումն է, սակայն անհրաժեշտ է առնվազն հաշվի առնել այս տարբերակը: Այդ որոշումը կայացնելիս փաստաբանը պետք է մտածի՝ արդյոք այդ «բացասական» ապացույցները կբացահայտվեն, թե ոչ, արդյոք նա ընդունում է դրանք, թե ոչ: Եթե փաստաբանի գործողություններից անկախ պատճառներով ապացույցը բացահայտվելու է, ապա նա պետք է ընդունի այն իր բացման խոսքում: Ավելի լավ է, որ այդ ապացույցն առաջինը ձեր կողմից ներկայացվի: Այն որպես թույլ կողմ ընդունելը թույլ է տալիս ձեզ այն դնել համապատասխան համատեքստում՝ նվազագույնի հասցնելով դրա ազդեցությունը և ներկայացնելով այն ձեր տեսանկյունից: Օրինակ՝

«Այո, Միհրանը վարում էր 2009 BMW մակնիշի ավտոմեքենան, որի բեռնախցիկում 50կգ հերոյին կար, բայց ապացույց չկա, որը կվկայեր, որ նա տեղյակ է եղել դրա մասին»:

Թույլ կողմն ընդունելը, իհարկե այնպես, որ դրա ազդեցությունը հասցվի նվազագույնի, կարող է ամրապնդել փաստաբանի արժանահավատությունը և նպաստել պաշտպանությանը: Բաց

թողնելով և անտեսելով թույլ կողմի առկայությունը՝ կարող եք դատավորին ստիպել մտածել, որ հակված եք թաքցնել որոշ բաներ կամ որ գործը համապատասխան համատեքստում չեք տեսնում: Սա կարող է դատավորի մոտ կասկած հարուցել ձեր արժանահավատության վերաբերյալ:

Մյուս կողմից էլ հայտնի չէ, թե արդյոք հակառակ կողմը տեղյակ է այդ թույլ կողմի մասին: Ընդունելով այն՝ հնարավոր է՝ հուշեք ձեր հակառակորդին, որ սա այն հենքն է, որից նա կարող է կառչել հիմնական դատալսումների ընթացքում:

Եթե փաստաբանը որոշում է ընդունել գործում առկա թույլ կողմը, նա դա պետք է անի բացման խոսքի միջնամասում: Թույլ կողմով սկսելը կամ ավարտելը դատավորի ուշադրությունը կկենտրոնացնի դրա վրա: Ներկայացնելով թույլ կողմը բացման խոսքի միջնամասում՝ ցույց եք տալիս, որ ազնիվ եք, և միևնույն ժամանակ նվազեցնում եք համապատասխան ապացույցի ազդեցությունը: Մարդիկ ավելի շատ հակված են հիշելու գործի ուժեղ կողմերը, որոնց մասին խոսվել է բացման խոսքի սկզբում և վերջում, քան թույլ կողմերը, որոնք մեկ անգամ հիշատակվել են միջնամասում:

5. Բացման խոսքի բովանդակությունը

Բացման խոսքի կառուցման հետևյալ մոդելն օգտագործելը կօգնի փաստաբանին հիմնական դատալսումների սկզբում իր գործը ներկայացնելիս.

1. Ներածություն (թեմա)
2. Ներկայացրեք գործով հանդես եկող կողմերին
3. Ներկայացրեք դեպքի վայրը
   a. Որտե՞ղ է դեպքը պատահել
   b. Ո՞ր ամսաթվին
   c. Ժամը քանիսի՞ն
   d. Ինչպիսի՞ն էր եղանակը (եթե դա կարևոր է)
4. Պատմեք եղելությունը
5. Ո՞րն է այն կարևոր հարցը, որի շուրջ դատավորը պետք է որոշում կայացնի
6. Ո՞րն է մեղադրյալին մեղավոր կամ անմեղ ճանաչելու հիմքը

Այս մոդելն օգտագործելը փաստաբանին կօգնի մշակել այնպիսի բացման խոսք, որը դատավորին արդյունավետորեն կփոխանցի փաստերը, կներկայացնի այն ապացույցները, որոնք փաստաբանը հույս ունի, որ կընդունվեն: Այս մոդելի օգտագործմամբ փաստաբանը կարող է արդյունավետորեն ներկայացնել իր գործը:

6. Արդյոք հանդես գալ բացման խոսքով

Այս հարցադրումը չի վերաբերում դատախազին. նա պետք է հանդես գա բացման խոսքով: Սակայն պաշտպանության կողմի համար պարտադիր օրենսդրական պահանջ նախատեսված չէ: Ընդհանրապես, բացման խոսքով հանդես գալու օրենսդրական հանրավորությունից չօգտվելը լավ միտք չէ պաշտպանության կողմի համար: Դատավորը չի տեղեկանա գործի ձեր վարկածի մասին և կարող է բաց թողնել կարևոր կետեր, որոնց անդրադառնալու եք մեղադրանքի կողմի վկաներին խաչաձև հարցաքննելիս: Դատավորը կարող է նաև բաց թողնել կարևոր կետեր, որոնք ցանկանում եք ներկայացնել ձեր իսկ վկաների միջոցով: Պաշտպանի՝ բացման խոսքով հանդես չգալու որոշման միակ պատճառը կարող է լինել այն, որ նա դեռևս գաղափար չունի, թե ինչպես է իրականացնելու պաշտպանությունը և հույս ունի, որ ինչ-որ բան կզարգանա գործի քննության ժամանակ: Եթե նա բացման խոսքում ասի, թե ինչպիսին է լինելու պաշտպանությունը, ապա ավելի դժվար կլինի փոխել այդ վարկածը եզրափակիչ ելույթների ժամանակ:

<u>Եզրափակիչ մտքեր</u>

Բացման խոսքը փաստաբանի՝ դատարանի մոտ ստեղծած տպավորությունն է: Առաջին տպավորությունը մնայուն է: Հիմնական դատալսումներից շատ ժամանակ առաջ գործին նախապատրաստվելը կօգնի փաստաբանին ներկայացնել այնպիսի բացման խոսք, որը մեծ տպավորություն կգործի դատավորի վրա: Ինչպես արդեն նշվել է, նախապատրաստվելը հաջողության գրավականն է:

Ուղիղ հարցաքննություն

Հիմնական դատալսումների ընթացքում ամենակարևոր խնդիրը դատավորին ձեր գործը ներակայացնելն է: Փաստաբանը ներակայացնում է փաստերն իր տեսանկյունից և հետո եզրափակիչ ելույթների ժամանակ դրանք կապում կիրառելի օրենքի հետ՝ նպատակ ունենալով դատավորին ստիպել հասկանալ, ընդունել և հիշել վկաների ցուցմունքները:

Ուղիղ հարցաքննության ժամանակ ոչ թե փաստաբանը, այլ վկան պետք է լինի ուշադրության կենտրոնում: Փաստաբանը պետք է վկայի հարցաքննությունն այնպես կատարի, որ դատավորի ուշադրությունը կենտրոնանա վկայի վրա: Հիշեք, որ ապացույցը գալիս է երդում տված վկաներից և ոչ թե փաստաբաններից, ուստի պետք է այնպես անեք, որ դատավորը լսի և ընկալի այն ամենը, ինչ ձեր վկան պետք է ասի: Ձեր վկային կհավատան և կհիշեն ոչ թե ձեր գիտելիքների, այլ նրա պատասխանների ձևի և բովանդակության շնորհիվ: Այս է պատճառը, թե ինչու է պետք վկաներից յուրաքանչյուրին նախապատրաստել հիմնական դատալսումների ընթացքում ցուցմունք տալուն:

A. Տարրեր

Ուղիղ հարցաքննությունն ավելին է, քան պարզապես հարցնելը. «Խնդրում եմ պատմեք դատավորին, թե ինչ է պատահել 2010 թվականիի հուլիսի 14-ի գիշերը»: Փաստաբանը ինքը պետք է որոշեք, թե ցուցմունքի որ մասերն են կարևոր, որ մասերի վրա պետք է կենտրոնանալ և որ մասերը պետք է հանել: Փաստաբանը պետք է պատկերացնի, որ ինքը գրող է և մտածի, թե պատմությունը լսողին, այս դեպքում՝ դատավորին ինչպես ներկայացնի, որ նա զգա և ընկալի, թե ինչ է պատահել:

Արդյունավետ ուղիղ հարցաքննությանը ներակայացվում են պահանջներ, որոնք ընդհանուր են բոլոր վկաների հարցաքննության համար: Դրանք հանգում են հետևյալին.

1. Եղեք պարզ

Իրականում սա մի պահանջ է, որին պետք է հետևեք ձեր բոլոր ելույթների ժամանակ: Վկան շատ բան գիտի, բայց դրանք ոչ բոլորն են կարևոր: Պետք է վկայի ցուցմունքը կենտրոնացնել կարևոր հանգամանքների վրա՝ դուրս թողնելով մնացածը: Եթե վկային պատմել տաք այն ամենը, ինչ նա գիտի, դատավորը կձանձրանա կամ, որ ավելի վատ է, կընկնի շփոթմունքի մեջ՝ ինչն է

կարևոր, ինչը՝ ոչ: Օրինակ՝ խարդախության գործով կարևոր չէ, թե մարդկանցից մեկը սպիտակ վերնաշապիկով է եղել, թե կապույտ կամ արդյոք արևոտ օր է եղել, թե անձրևոտ: Նույնը վերաբերում է ամսաթվերին և ժամերին. որոշ դեպքում դրանք կարևոր են, իսկ որոշ դեպքում՝ ոչ: Ուստի կենտրոնացեք միայն այն ամսաթվերի և ժամերի վրա, որոնք նշանակություն ունեն: Դա ցուցմունքն ավելի քիչ շփոթեցնող և ավելի կարճ է դարձնում: Ոչ ոք չի ցանկանա անվերջ շարունակվող ցուցմունքներ: Լսողը մտքի մեջ կասի. «Պարզապես անցի՛ր բուն ասելիքին»: Սովորաբար առաջին 15-20 րոպեների ընթացքում է լսողն ուշադրությամբ լսում: Վկային նախապատրաստելիս դուք պետք է հանեք ոչ վերաբերելի նյութը և ներակայացնենք ձեր հարցերն այնպես, որ տրվի միայն կարևոր տեղեկություն:

2. Վկայի հարցաքննության կազմակերպումը

Սովորաբար պետք է այնպես անել, որ պահպանվի այն ժամանակագրական հաջորդականությունը, որով տեղի են ունեցել դեպքերը: Վկայի հարցաքննության ժամանակ նույնպես դեպքերը պետք է ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացվեն, քանի որ այդպես է մարդկանց մեծ մասը մտածում, ուստի դատավորի համար ավելի դյուրին է լինում ցուցմունքը հասկանալն ու հիշելը:

Վկայի հարցաքննություն կազմակերպելիս առավել տարածված և տրամաբանական հաջորդականությունը հետևյալն է.

(a) Վկայի անձնական տվյալները:

Այլ կերպ՝ ինչու է այս անձի ցուցմունքը կարևոր: Սա պետք է արագ արվի: Օրինակ՝ այն բանից հետո, երբ վկան ներկայանում է, պետք է հաստատվի, որ նա եղել է Ազատության պողոտայի և Ներսիսյան փողոցի անկյունում այն օրը, երբ այդտեղ գտնվող բանկը կողոպտվել է: Եթե վկան պարզապես պատմում է, թե ինչ է տեսել, բոլորովին անտեղի է ներկայացնելը, թե արդյոք նա ամուսնացած է, ունի երեխաներ և թե ինչպես են նրանք դպրոցում սովորում: Եթե վկան փորձագետ է, պետք է ներկայացնեք նրա որակավորումը, օրինակ, որ նա մատնահետքերի փորձագետ է: Այնուհետև պետք է անցնել նրա վերապատրաստման և փորձի ներկայացմանը:

Իրականում վկային ներկայացնելը սկսվում է մինչ նրա ամբիոնի մոտ կանգնելը: Մարդիկ այլ մարդկանց վերաբերյալ կարծիք են կազմում մինչ նրանց որևէ բառ արտասանելը նրանով, թե ինչպիսի տեսք ունեն նրանք: Եթե վկան դատարան է գալիս կեղտոտ հագուստով՝ ասես նոր մահճակալից վեր կացած, ապա նա նույն արժանահավատությունը չի ունենա, ինչ-որ մեկ այլ անձ,

ով ավելի լավ տեսքով է դատարան գալիս: Վկան և մեղադրյալը պետք է իրենց աշխատանքին համապատասխան հանդերձանքով ներկայանան: Գործարար մարդը պետք է կոստյումով և փողկապով գա: Սակայն եթե ավտոմեխանիկին նույն հանդերձանքով ներկայացնեք, այնպիսի տպավորություն կլինի, թե դիտավորյալ եք այդպես արել և նա կկորցնի արժանահավատությունը: Ավտոմեխանիկը պետք է մաքուր տաբատով և վերնաշապիկով ներկայանա: Մի վստահեք վկային կամ մեղադրյալին՝ ասելով՝ «Պատշաճ կհագնվեք». ասեք նրանց, թե ինչ հագնեն:

(b) Նկարագրեք դեպքի վայրը

Որտեղ է եղել վկան, երբ տեսել է այն, ինչի մասին ցուցմունք է տալիս: Վկան պետք է նկարագրի դեպքի վայրն առանց մանրամասների, ինչպես օրինակ՝ ճշգրիտ տարածությունը, ժամը և այլն. դա կարվի խաչաձև հարցաքննության ժամանակ, այլապես կդանդաղեցվի պատմության ընթացքն ուղիղ հարցաքննության ժամանակ: Որոշ փաստաբաններ օգտագործում են լուսանկարներ կամ այլ ցուցանմուշներ դեպքի վայրը նկարագրելու համար, մինչդեռ այլ փաստաբաններ գտնում են, որ դա շեղում է հարցաքննության ընթացքը: Դեպքի վայրը նկարագրելու նպատակն այդ վայրի պատկերը դատավորին ներկայացնելն է, մինչ բուն ցուցմունքին անցնելը: Եթե օգտագործում եք լուսանկարներ, ապա այնպես արեք, որ վկան շփվի դրանց հետ: Օրինակ՝ լուսանկարները բացատրելիս մատնացույց արեք, թե որտեղ է դեպքը պատահել: Սա ցուցանմուշն ավելի հասկանալի և հետաքրքիր է դարձնում:

(c) Գործողությունը

Սա ցուցմունքի այն մասն է, որտեղ վկան հասնում է իր ցուցմունքի սրտին: Օրինակ՝ դեպքի վայրը նկարագրելիս հաստատել եք վկայի տեղը և հիմա պետք է հետևյալ հարցերը տաք.

Q: Դուք ասացիք, որ Ազատության պողոտայի և Ներսիսյան փողոցի անկյունում եք եղել հուլիսի 14-ին, ժամը 10:00-ին: Ինչ-որ բան գրավե՞ց ձեր ուշադրությունը:

A: Այո:

Q: Ի՞նչն էր առաջին բանը, որ գրավեց ձեր ուշադրությունը:

A: Ես լսեցի հրազենի կրակոցի ձայներ:

Q: Նայեցի՞ք, թե որտեղից էին այդ ձայները:

A: Այո, դրանք բանկից էին գալիս:

Q: Եվ ի՞նչ տեսաք:

Q: Տեսա, թե ինչպես էին բանկից դուրս եկող երկու մարդիկ օդում թափահարում իրենց ատրճանակները:

Փաստաբանը կարող է հարցաքննության տեմպը կարգավորելով այնպես անել, որ դատավորը զգա, թե ինչ է տեղի ունեցել: Սա նաև վկայի ցուցմունքի այն մասն է, որը փաստաբանը պետք է շեշտի, որին նա կհասնի ցուցմունքը փոքր մասերով վերցնելով: Վկայի՝ բանկը կողոպտողներին գործողության մեջ տեսնելը, միգուցե մի քանի վայրկյան է տևել, բայց փաստաբանը պետք է այնպես անի, որ այդ իրավիճակը դանդաղեցված նկարագրվի և նկարագրվի իր վերահսկողության տակ: Փաստաբանը պետք է այնպես անի, որ դատավորը ընկալի բոլոր մանրամասները և շեշտի գործի հետաքրքրաշարժ մասը: Այնուհետև փաստաբանը պետք է հարցեր տա մարդկանցից յուրաքանչյուրին նկարագրելու համար. արդյոք նրանք շարունակել են կրակել (եթե կրակելիս են եղել), դեպի ուր են վազել, արդյոք մեքենա են նստել և մեծ արագությամբ վարել են Ազատության պողոտայով՝ գրեթե վրաերթի ենթարկելով երկու տարեց կանանց: Այլ կերպ ասած փաստաբանը պետք է դատավորին ներկայացնի տեղի ունեցածի ամբողջական պատկերը: Վկային դատաքննությանը նախապատրաստելու աշխատանքի մի մասն էլ այն է, որ զգուշացնեք ձեր վկային, որ նա պետք է լսի հարցերը և պատասխանի միայն տրված հարցերին:

3. Պարզ լեզվով խոսեք

Որոշ փաստաբաններ և վկաներ կարծում են, թե խրթին բառեր կամ արտահայտություններ օգտագործելով տպավորություն են գործում մարդկանց վրա: Սովորաբար սա ճիշտ չէ, և ավելին, սրանով կորցնում ենք հուզմունքը, որ պետք է զգային լսողները: Վկայի նախապատրաստման ժամանակ փաստաբանը պետք է հրահանգի վկային օգտագործել պարզ լեզու և հեռու մնալ «ոստիկանական խոսվածքից» կամ տեխնիկական լեզվից, եթե միայն դրա բացարձակ անհրաժեշտությունը չկա: Եթե վկան պետք է տեխնիկական եզրույթներ օգտագործի նկարագրելու համար, օրինակ, գիտական փորձարկման արդյունքները, այնպես արեք, որ այդ եզրույթները բացատրվեն օգտագործելուց անմիջապես հետո: Ոչ մի դատավոր չի ցանկանում իրեն հիմար զգալ՝ չհասկանալով, թե ինչի մասին է խոսում վկան, և դա կնյարդայնացնի նրան: Ավելին, փաստաբանը կկորցնի ցուցմունքի ազդեցությունը, եթե դատավորը չհասկանա այն: Ահա մի քանի օրինակ, թե ինչ պետք է և ինչ չպետք է անել.

Վատ. «Նրա հետ զրուցելու առիթ ունեցե՞լ եք»:

Լավ. «Երբևէ խոսե՞լ եք նրա հետ»:

Վատ. «Որքա՞ն ժամանակ է, որ ձեզ աշխատանքի են ընդունել»:

Լավ. «Որքա՞ն ժամանակ է, որ ավտոմեխանիկ եք աշխատում»:

Որպես պատասխան՝վատ. «Ես դուրս եկա տրանսպորտային միջոցից և մոտեցա մեղադրյալին»:

Լավ. «Ես դուրս եկա մեքենայից և քայլեցի դեպի մեղադրյալը»:

Վատ. «Ոչ թե մեղադրյալը, այլ Արսենն է վարկային հաշվից գումար հանել»:

Լավ « Ոչ թե մեղադրյալը, այլ Արսենն է գումար հանել ստուգման հաշվից»:

(d)   Ներկա ժամանակաձևի օգտագործումը

Փաստաբանի հարցերում ներկա ժամանակաձևի օգտագործումը թույլ է տալիս, որ դատավորը վերապրի դեպքը, և դա ավելի մեծ տպավորություն է գործում: Այսպիսով, բանկի կողոպուտի մեկնաբանման հետ կապված հարցերն ու պատասխանները հետևյալ կերպ պետք է կազմվեն.

Q. Կրակոցները լսելուց հետո ի՞նչ արեցիք:

A. Շրջվեցի և նայեցի այնտեղ, որտեղից, որ ըստ իս գալիս էին կրակոցի ձայները:

Q Երբ արեցիք դա, ի՞նչ տեսաք:

A. Տեսա, թե ինչպես են երկու մարդիկ դուրս վազում բանկից:

Q. Տեսա՞ք՝ արդյոք նրանց մոտ հրազեն կար:

A. Այո:

A. Այնտեղ, որտեղ նրանց տեսաք, դրանք հանվա՞ծ էին ի տես:

A. Այո

(d) Ոչ ուղղորդող հարցերի օգտագործումը

Համաձայն հայաստանյան օրենսդրության՝ վկաների ուղիղ հարցաքննության ժամանակ ուղղորդող հարցեր տալն արգելված է (Նախագծի 332-րդ հոդված)։ Ուղղորդող է այն հարցը, որը հուշում է պատասխանը։ Օրինակ. «Բանկի կողոպտիչներից մեկը 1 ու *¾ մետր հասակ ուներ, այնպես չէ՞»* կամ «Այն բանկը, որից նրանք դուրս եկան <<Արցախ>> բանկն էր, այնպես չէ՞»։ Ահա թե ինչպես պետք է տրվեն այդ հարցերը. «Ինչպիսի՞ հասակ ունեին բանկը կողոպտողները» և «Ի՞նչ էր այն բանկի անունը, որտեղից, նրանք դուրս եկան»։ Երկրորդ օրինակը թույլատրելի է, եթե վկան արդեն ասել է, որ տեսել է, թե ինչպես են բանկը կողոպտողները դուրս վազում բանկից։ Սա հանգեցնում է նրան, որ հղում կատարեք ձեր հարցի մեջ մի բանի, որը վկան նախկինում ասել է՝ գործով ցուցմունք տալու ժամանակ։ Իսկապես, նախընտրելի է ցուցմունքի նախորդ մասի վրա նորը կառուցել, քան թե պարզապես անընդհատ հարցնել վկային. «Իսկ հետո ի՞նչ տեղի ունեցավ»։ Այդ հարցն ընդունելի է, եթե չափից շատ չի օգտագործվում։ Անընդհատ այն օգտագործելը հարցաքննությունը ձանձրալի է դարձնում։ Իրականում ցուցմունքի նախորդ մասի վրա նորը կառուցելը լավ մեթոդ է, քանի որ դա ձեզ հնարավորություն է տալիս կրկնել այն, ինչ հատկապես լավն էր։ Նորից օգտագործելով մեր օրինակը՝ կարող եք ասել. «Ասացիք, որ բանկը կողոպտողները մեքենա նստեցին և մեծ արագությամբ վարեցին փողոցն ի վար՝ գրեթե վրաերթի ենթարկելով երկու տարեց կանանց։ Ի՞նչ ուղղությամբ էին նրանք ընթանում»։ Հարցի առաջին մասը հիշեցնում է դատավորին կամ երդվյալ ատենակալներին, որ բանկը կողոպտողները գրեթե վրաերթի են ենթարկել երկու տարեց կանանց։

(e) Այնպես արեք, որ վկան բացատրություն տա

Եթե վկան մի բան է ասում, որն իմաստ չի արտահայտում կամ եթե նա օգտագործում է տեխնիկական եզրույթ, որը ձեր կարծիքով դատավորը կարող է չիմանալ, այնպես արեք, որ վկան բացատրի իր պատասխանը։ Սա պետք է այնպես արվի, որ վկան իրեն անհարմար չզգա կամ որ այնպիսի տպավորություն չստեղծվի, թե նա չգիտի՝ ինչ է խոսում՝ այդպիսով վնասելով իր արժանապատվությունը։

Օրինակ՝ ի պատասխան շփոթեցնող պատասխանի՝ կարող եք ասել. «Ներեցեք, ես չհասկացա այդ պատասխանի մի մասը, խնդրում եմ նորից բացատրեք դա»։ Կամ տեխնիկական եզրույթի օգտագործման դեպքում. «Դուք օգտագործեցիք ԴՆԹ հապավումը, ի՞նչ է դա նշանակում»։ Դատավորը կգնահատի, որ հստակեցնում եք ցանկացած անորոշություն կամ պարզաբանում տեխնիկական եզրույթները։

(f) Օգտագործեք ցուցանմուշներ փաստերն ամփոփելու համար

Փաստաբանը պետք է լրջորեն մտածի ցուցանմուշների և աղյուսակների օգտագործման մասին, երբ գործ ունի մի շարք փաստերի հետ: Սա հատկապես ճիշտ է, երբ գործ ունենք մեծ քանակությամբ թվերի կամ անունների հետ, որոնք շփոթեցնող են, ինչպես նաև ձանձրալի: Նմանապես, դեպքի վայրը նկարագրելիս օգտակար կարող են լինել գծագրերը, որոնք ցույց են տալիս, թե որտեղ ինչն է գտնվել: Սա դարձնում է վկայի պատմությունն ավելի հասկանալի: Օրինակ՝ մեր բանկի կողոպուտի գործով գծագիրը, որը ցույց է տալիս փողոցը, որտեղ բանկն է գտնվել, նշում է, թե որտեղ էր կանգնած վկան, դեպի ուր են փախել կողոպտիչները և այլն: Ինչպես արդեն նշվել է, ցուցանմուշներ, աղյուսակներ և գծագրեր օգտագործելիս վկան պետք է շփվի դրանց հետ՝ մատնացույց անելով որոշակի մասեր և բացատրելով:

Մեծ քանակությամբ թվերի հետ առնչվելիս, օրինակ՝ խոշոր տնտեսական խարդախության գործով, ունեցեք ցուցանմուշ, որը պարզապես ներկայացնում է տարբեր ամփոփումներ, օրինակ՝ ավանդների և հաշվից հանված գումարների հանրագումարներ: Այդտեսակ գործերում կարևորը հանրագումարն է և ոչ թե առանձին ավանդների և հանված գումարների չափը: Այս մեթոդը դյուրին է դարձնում պատկերի ընկալումը և դատավորի ուշադրությունը կենտրոնացնում է ընդհանուր պատկերի վրա:

(g) Լսեք պատասխանները

Ահա մի իրական ամոթալի օրինակ առ այն, թե ինչ է տեղի ունենում, երբ փաստաբանը չի լսում վկայի պատասխանները.

Q: *Քանի՞ երեխա ունեք:*

A: *Երեք:*

Q: *Նրանցից քանի՞սն են տղա:*

A: *Ոչ մեկը:*

Q: *Իսկ աղջիկներ ունե՞ք:*

Եվ վերջում, փորձեք տեսողական կապ պահպանել վկաների հետ նրանց հարցաքննության ժամանակ: Դա ցույց է տալիս դատավորին, որ հետաքրքրված եք նրանց պատասխաններով, և այդ հետաքրքրվածությունն անցնում է նրանց: Սա նաև տպավորություն է ստեղծում, որ վկան պարզապես չի ներկայացնում նախապես պատրաստված սցենար:

(h) Նախապատրաստեք վկաներին

Վերը արդեն ներկայացրել ենք վկայի նախապատրաստման հետ կապված որոշակի հարցեր, ինչպես օրինակ վկայի հանդերձանքը: Սակայն կան վկայի նախապատրաստման նաև այլ կողմեր, որոնք ներկայացման կարիք ունեն:

Շատ վկաներ երբեք չեն եղել դատական նիստերի դահլիճում, ուստի նրանք վախեցած կլինեն: Փաստաբանը պետք է բացատրի վկային ներկայանալու հետ կապված ընթացակարգը, այդ թվում՝ ուր պետք է վկան գնա, որտեղ պետք է սպասի մինչ ցուցմունք տալու համար ներս հրավիրվելը և թե ինչ տեղի կունենա նրա՝ դատական նիստերի դահլիճ մտնելուց հետո, որտեղ է գտնվում վկայի ամբիոնը, երբ պետք է երդումը տրվի և այլն: Տեղեկացրեք վկային, որ այն բանից հետո, երբ վերջացնեք ձեր հարցերը, որոնք նախապես քննարկել եք իրար հետ, նա ենթարկվելու է խաչաձև հարցաքննության: Բացատրեք նրան, թե ինչ է խաչաձև հարցաքննությունը և թե ինչպիսին կլինեն հնարավոր հարցերը, որոնք կտրվեն նրան խաչաձև հարցաքննության ժամանակ: Վկային նաև պետք է տեղեկացնել, որ ոչ մի վատ բան չկա դատաքննությունից առաջ վկայությունը նախապատրաստելու նպատակով փաստաբանի հետ հանդիպում ունենալու մեջ և որ եթե խաչաձև հարցաքննության ժամանակ նրան հարցնեն, թե արդյոք հանդիպել է փաստաբանի հետ, նա պետք է պատասխանի՝ այո:

Վկա լինելու հետ կապված որոշակի հուշումներ կան, որոնք պետք է տրվեն վկային: Այդ թվում՝

1. Ասացեք ճշմարտությունը, սա ամենակարևոր բանն է: Պետք է ճշմարտությունն ասեք անգամ եթե պատասխանը անհարմարություն կպատճառի ձեզ կամ այն կողմին, որը հրավիրել է ձեզ որպես վկա:
2. Եթե հարցը չեք լսել, խնդրեք, որ կրկնեն այն՝ անկախ նրանից, թե ով է հարցը տվել՝ անգամ եթե դատավորն է այն տվել:
3. Եթե չեք հասկանում հարցը, խնդրեք, որ բացատրեն այն՝ անկախ նրանից, թե ով է հարցը տվել՝ անգամ եթե դա դատավորն է տվել: Եթե վկան փորձում է կռահել, թե ինչ հարց է տրվել, նա կարող է դա սխալ անել: Դա այնպիսի տպավորություն է ստեղծում, թե վկան խուսափում է հարցին պատասխանելուց, այնինչ նա պարզապես չի հասկացել հարցը:
4. Եթե ձեզ հարց է տրվում և հետո երկու կողմերի իրավաբանների միջև վեճ է բռնկվում այդ հարցի շուրջ, իսկ այդ վեճի ընթացքում մոռանում եք հարցը, խնդրեք, որ կրկնեն այն:
5. Մի փորձեք կռահել, եթե չգիտեք պատասխանը, ասացեք, որ չգիտեք:

6. Եթե մոռացել եք ինչ-որ տեղեկություն, պարզապես ասացեք, որ մոռացել եք. մեզնից յուրաքանչյուրն էլ կարող է մոռանալ բաներ, որոնք մի ժամանակ իմացել է:

7. Ամբողջ ընթացքում քաղաքավարի և հարգալից եղեք բոլորի նկատմամբ` այդ թվում հակառակ կողմի պաշտպանի:

8. Լսեք, թե ձեզ ինչ են հարցնում և պատասխանեք միայն նրան, ինչ ձեզ հարցրել են. կամավոր կերպով տեղեկություն մի տվեք:

9. Խաչաձև հարցաքննության ժամանակ պատրաստ եղեք չհամաձայնել փաստաբանի հետ: Եթե նրա ասածը ճիշտ չէ, այդպես էլ ասեք և տվեք ճիշտ տեղեկությունը, բայց փորձեք դա քաղաքավարի ձևով անել:

10. Մի փորձեք խուսափել հարցին պատասխանելուց: Դատավորը կտեսնի, թե ինչ եք անում և, հավանաբար, կենթադրեն, որ ճիշտ պատասխանն իրականից ավելի վատն է:

11. Եթե ձեզ այնպիսի հարց է տրվում, որն անհարմար վիճակի մեջ է ձեզ դնում, ամեն դեպքում ուղղակիորեն պատասխանեք դրան: Եթե չպատասխանեք, փաստաբանը կշարունակի այդ թեմայի վերաբերյալ հարցեր տալ և այդ դեպքում ոչ միայն այնպիսի տպավորություն կստեղծվի, թե խուսափում եք հարցերին պատասխանելուց, այլև այդ մի հարցը, մեծ պատմության վերածելով, ավելի վատ դրության մեջ կընկնեք:

12. Եթե ձեզ ցույց են տալիս փաստաթուղթ, որը վերջերս չեք տեսել կամ որը բոլորովին չեք տեսել, նախ կարդացեք այն և հետո միայն պատասխանեք դրա վերաբերյալ հարցերի: Մինչ փաստաբանի կողմից այդ փաստաթղթի վերաբերյալ ձեզ հարցեր ուղղելը դուք դրա հետ ծանոթանալու իրավունք ունեք: Եթե պաշտպանը ձեզ հարց է տալիս փաստաթղթի մի մասի վերաբերյալ, որը չեք հիշում որ տեսել եք փաստաթուղթը կարդալիս, խնդրեք պաշտպանին մատնացույց անել փաստաթղթի այն մասը, որին հղում է կատարել:

13. Դուք պարտավոր չեք համաձայնվել պաշտպանի` փաստաթղթի մեկնաբանման հետ: Եթե չեք համաձայնվում, ասացեք, որ դուք այդպես չեք մեկնաբանում և ներկայացրեք ձեր կարծիքը այս կամ այն մասի նշանակության հետ կապված:

14. Եթե փաստաթղթի բովանդակությունը հիշելու համար այն տեսնելու կարիք ունեք խնդրեք, որ այն ձեզ ցույց տան: Ոչ ոք չի կարող ակնկալել, որ հիշեք բոլոր փաստաթղթերը:

15. Եթե հակառակ կողմն առարկություն է անում, մի պատասխանեք հարցին, քանի դեռ դատավորը չի ներկայացրել իր որոշումը: Եթե դատավորն ընդունում է առարկությունը, մի պատասխանեք հարցին անկախ նրանից, թե ես եմ տվել հարցը թե հակառակ կողմը: Եթե դատավորը մերժում է առարկությունը, դուք պետք է պատասխանեք հարցին:

16. Ինձ կամ դատավորին մի նայեք հարցին պատասխանելու օգնության ակնկալիքով:

17. Եթե ձեզ հարցնեն՝ արդյոք դատաքննությունից առաջ քննարկել եք ձեր ցուցմունքը փաստաբանի հետ, ասացեք՝ այո, դուք և նա քննարկել եք գործի փաստերը և նա ձեզ ասել է, որ միշտ ճշմարտությունն ասեք:

18. Ցուցմունք տալուց հետո վկայի ամբիոնից հեռանալիս ձեզ վստահ պահեք և ոչ թե գլխիկոր:

19. Որպես վերջին հարց պաշտպանը հարցնում է վկային՝ արդյոք որևէ բան կա, որ կարող է բացահայտվել գործի քննության ժամանակ և որը ամոթալի վիճակի մեջ կդնի իրեն կամ պաշտպանի գործը: Եթե այո, ապա պաշտպանը կարող է դրա մասին հարցնել տալ վկային ուղիղ հարցաքննության ժամանակ և հնարավորություն տա վկային բացատրել հնարավոր ամոթալի նյութը:

Վերոհիշյալ ցուցակն ավարտուն չէ: Իր գործունեության ընթացքում փաստաբանը բացահայտում է նոր խնդիրներ, որոնց առջև կանգնում են վկաները և ստեղծում է իր ավելի երկար ցուցակ: Եթե մի վկա ունենում է ինչ-որ խնդիր, ապա շատ մեծ հավանականություն կա, որ մեկ այլ վկա նույնպես կունենա նմանատիպ խնդիր: Ցուցակը պարզապես ապագայում վկայի համար խնդիրներ նախատեսելու ճանապարհ է ՝ հիմնված անցած փորձի վրա:

Փաստաբանը պետք է հիմնական դատալսումներից առաջ մեկ առ մեկ վկաների հետ քննարկի, թե ինչպիսին է լինելու նրանցից յուրաքանչյուրի ցուցմունքը և անհրաժեշտության դեպքում վերաձևակերպի: Փաստաբանը պետք է վերանայի վկայի տված բոլոր սկզբնական ցուցմունքները և հարցնի նրան՝ արդյոք այլ տեղեկություն նրան հայտնի է: Փաստաբանը պետք է վկային տա այն հարցերը, որոնք նա պատրաստվում է տալ դատարանում՝ տեսնելու համար՝ արդյոք նա տալիս է իր ակնկալած պատասխանները: Պատահում է, որ վկան չի հասկանում փաստաբանի տված հարցը: Նախապատրաստումը ճիշտ ժամանակն է սա բացահայտելու և հարցը վերաձևակերպելու համար այնպես, որ վկան հասկանա, թե ինչ է փաստաբանը փորձում իրենից ստանալ:

(a) Կամավոր կերպով թուլությունները ներկայացնելը

Եթե վկային ինչ-որ բան է հայտնի՝ կապված անցյալի կամ այլ բանի հետ, որը կարող է վնասել վկայի արժանահավատությանը, այդ վկային հովանավորող փաստաբանը պետք է ներկայացնի դա: Սա թույլ է տալիս, որ վկայի խնդիրը իր համար ամենաբարենպաստ լույսի ներքո ներկայացվի և տպավորություն չստեղծվի, թե վկան փորձում է ինչ-որ բան թաքցնել: Հնարավոր թուլությունները վեր հանելը փաստաբանի համար ռազմավարական հարց է: Նա պետք է որոշի՝ արդյոք այդ փաստն այնպիսի փաստ է, որ հակառակ կողմի վկան վեր կհանի խաչաձև հարցաքննության ժամանակ: Փաստաբանը պետք է որոշի՝ արդյոք հակառակ կողմին անհայտ և իր գործին վնասող

բանը ինքը ներկայացնի, թե սպասի և տեսնի, թե ինչ է բացահայտվում խաչաձև հարցաքննության ժամանակ և համապատասխան հակահարված հասցնի: Ահա հնարավոր վտանգները հաղթահարելու երկու օրինակ.

Q Ցուցադրված լուսանկարներից ընտրություն կատարելիս դուք մեղադրյալի՞ նկարն եք ընտրել:

A. Ոչ:

Q Ինչու՞ ոչ:

A. Կարծես նա գիրացել է, քանի որ նկարը, որ ես տեսա արվել էր տարիներ առաջ:

Կամ

Q: Պարոն Ղազարյան, այդ դու՞ք էիք հուլիսի 14-ին ժամը 10-ի սահմաններում վազում Մաշտոցի պողոտայով:

A: Այո:

Q Ինչու՞ էիք դա անում:

A: Ուշանում էր բժշկիս հետ հանդիպումից:

Եթե հնարավոր է՝ այնպես արեք, որ վկայի թույլ կողմը վկայության միջնամասում ներկայացվի, որի շնորհիվ այն ավելի փոքր տպավորություն կթողնի, քան այն դեպքում, եթե դա արվի վկայության սկզբում կամ վերջում:

(b) Եզրակացություն

Ուղիղ հարցաքննությունը պետք է ավարտվի շեշտակի հարցով կամ հարցով, որն ամփոփում է, թե ինչի համար է վկան կանգնել ամբիոնում: Եթե վկան մեղադրյալն է, ապա վերջին հարցը պետք է լինի հետևյալը.

Q: Եվ վերջում, պարո՛ն Ղազարյան, դուք կատարե՞լ եք բանկի կողոպուտը, որում մեղադրվում եք:

A: Բոլորովին:

Կամ

Q/: Եվ վերջում, օրիորդ վկա, դուք բացարձակապես համոզվա՞ծ եք, որ մեղադրյալին եք տեսել 2010թ-ի հուլիսի 14-ին հրազենը ձեռքին բանկից դուրս վազելիս:

A.: Այո:

Խաչաձև հարցաքննություն

Կինոնկարներում խաչաձև հարցաքննությունը դատաքննության փառավոր մասն է: Այդ ժամանակ է, որ պաշտպանը կամ դատախազը կոտրում է հակառակ կողմի ամենագլխավոր վկային, ով խոստովանում է, որ ամբողջ ընթացքում սուտ է ասել և ներկայացնում է ճշմարտությունը: Մոռացեք սրա մասին, այսպիսի բան տեղի չի ունենա: Ոչ ինքս եմ դրան ականատես եղել, ոչ էլ գիտեմ որևէ մեկի ով դրան ականատես է եղել: Ինչպես որ այս բաժնում ավելի մանրամասն կնշվի, խաչաձև հարցաքննությունը կատարվում է երկու նպատակով. (1) գործի ձեր տեսության համար օգտակար վկայություն վերցնելու համար (2) վարկաբեկելու համար վկային կամ նրա վկայությունը:

Ինչպես որ դատաքննության ցանկացած այլ մասի այնպես էլ խաչաձև հարցաքննության համար պետք է նախապատրաստվել: Փաստաբանը պետք է վկայությունից առաջ ուշադիր վերանայի բոլոր վկաների սկզբնական ցուցմունքները կամ հայտարարությունները և ծանոթանա բոլոր փաստաթղթային ապացույցների հետ: Առանց այս մինչդատական աշխատանքի փաստաբանը չի կարողանա որակազրկել վկային հիմնված սկզբնական ցուցմունքի կամ հայտարարության վրա, որը հակասում է այլ ապացույցներին, ինչպես օրինակ՝ բանկային փաստաթղթերին, փորձագետների եզրակացություններին և այլն:

A. Արդյո՞ք անել խաչաձև հարցաքննություն

Սա խաչաձև հարցաքննության հետ կապված ամենահիմնարար հարցն է: Չափազանց շատ փաստաբաններ են կատարում խաչաձև հարցաքննություն, քանի որ գտնում են, թե ստիպված են դա անել: Նրանք սխալվում են: Ոչ տեղին խաչաձև հարցաքննությունը կարող է վնասակար լինել փաստաբանի գործի համար, կամ էլ լավագույն դեպքում նյարդայնացնել դատավորին՝

ներկայացնելով հարցեր, որոնք գործին ոչինչ չեն տալիս: Մինչ խաչաձև հարցաքննություն կատարելը հարցրեք ինքներդ ձեզ, թե իրատեսորեն ձեր կարծիքով ինչի կարող եք հասնել դրանով: Կարող եք արդյոք այնպիսի հարցեր առաջ քաշել, որոնք կվնասեն հակառակ կողմի գործի տեսությանը: Կարող եք արդյոք կասկածի տակ դնել վկայի արժանահավատությունը: Կարող եք արդյոք ստանալ վկայություն, որը կօժանդակի ձեր գործի տեսությանը:

Փաստաբանից չի պահանջվում խաչաձև հարցաքննության ենթարկել վկային: Որոշ անփորձ փաստաբաններ մտահոգվում են՝ կարծելով, թե վկային խաչաձև հարցաքննության չենթարկելը դատավորի մոտ այնպիսի տպավորություն կստեղծի, թե այդ վկան վնաս է հասցրել այդ փաստաբանի գործին: Դա ճիշտ չէ: Պարզապես դատավորին ասելը, որ խաչաձև հարցաքննություն չեք անում հաճախ նրանց մոտ տպավորություն է ստեղծում, որ վստահ եք ձեր վրա: Իսկապես, դուք կարող եք ցանկանալ բացատրել նրանց, թե ինչու չեք այս կամ այն վկային խաչաձև հարցաքննության ենթարկել: Մինչ խաչաձև հարցաքննություն նախաձեռնելը յուրաքանչյուր փաստաբան պետք է ինքն իրեն տա հետևյալ վեց հարցերը.

(1) Արդյոք վկան վնա՞ս է հասցրել ձեր գործին

Բոլոր վկաները հավասար կարևորություն չունեն: Որոշ վկաների պարզապես կանչում են որևէ տեխնիկական տարր հաստատելու կամ փաստաթուղթ վավերացնելու համար: Օրինակ՝ վկային կարող են կանչել դատարան, որպեսզի նա հաստատի, որ տվյալ հանրային գրությունը հրապարակվել է թերթում, կամ՝ որ որոշակի բանկային փաստաթղթեր վավեր են: Քանի դեռ վկային կասկածելու համար պատճառ չունեք, նրան խաչաձև հարցաքննության ենթարկելու իմաստ չկա.

(2) Արդյոք վկան կարևո՞ր է

Վկան կարող է հաստատել մի բան, որը ձեզ համար կարևոր չէ: Օրինակ՝ թմրամիջոցների գործով պաշտպանական կողմի համար կարող է կարևոր լինել ոչ թե այն որ առգրավված թմրամիջոցը կոկային չէ, այլ այն, որ այն չի պատկանել մեղադրյալին, ուստի և չպետք է խաչաձև հարցաքննության ենթարկել փորձագետին, ով վկայում է, որ առգրավված նյութը կոկային է, այլ պետք է միայն մատնանշել, որ վկան ոչինչ չգիտի այն բանի վերաբերյալ, թե ում է պատկանում թմրամիջոցը: Այն դեպքում, երբ վկան կարևոր է, սովորաբար փաստաբանը նրան խաչաձև հարցաքննության ենթարկելու ցանկություն է հայտնում, քանի որ դատավորը նույնպես կարող է դա ակնկալել: Խաչաձև հարցաքննության չափը, ինչպես որ վերը բերված օրինակում, կարող է արտացոլել փաստաբանի գործի համար այդ վկայի կարևորությունը կամ անկարևորությունը:

(3) Արդյոք վկայի վկայությունը հավաստի՞ էր

Որոշ վկաներ պարզապես անարժանահավատ են լինում: Օրինակ՝ վկան վկայություն է տալիս, որ ցատկել է երեք մետրանոց ցանկապատի վրայով, որպեսզի փախչի կողոպտիչներից: Երբեմն, վկայի վկայությունը հերքում են նույն փաստաբանի կողմից հրավիրված այլ վկաներ: Այդպիսի իրավիճակներում վկայությունն արդեն իսկ այնքան վատն է, որ այլևս ոչ մի այլ բանի կարիք չկա: Եթե այդ դեպքում որևէ հարց տաք վկային, ապա իր ցուցմունքը ուղղելու հնարավորություն կտաք. մի տվեք նրան այդ հնարավորությունը: Օրինակ՝ եթե պաշտպանը հարցնի, թե արդյոք ցանկապատն իսկապես երեք մետրանոց է եղել, վկան, հասկանալով, որ ծիծաղելի բան է ասել, կարող է փորձել ուղղել իր վկայությունը՝ ասելով, որ շփոթվել է և որ ցանկապատն իրականում միայն մեկուկես մետր բարձրություն է ունեցել: Այլ կերպ ասած, եթե վկայի վկայությունը ձեր օգտին է ծավալվում, թողեք, որ վկան այն հանգիստ իր ավարտին հասցնի և միայն դատական վիճաբանությունների ժամանակ նշեք, թե որքան ծիծաղելի էին նրա պատասխանները:

(4) Արդյոք ուղիղ հարցաքննության ժամանակ վկան սպասվածից ավելի քի՞չ է ասել

Երբեմն (ձեր կարծածից ավելի հաճախ) անփույթ մինչդատական նախապատրաստման արդյունքում կամ վկայի սխալի պատճառով, որը չի նկատվում մեղադրողի կողմից, վկան բաց է թողնում վկայության կարևոր մի մաս (կամ էլ մեղադրողն է մոռանում ճիշտ հարցը տալ): Շատ անփորձ պաշտպաններ անմիջապես կնշեն բացթողումը խաչաձև հարցաքննության ժամանակ: Սա միայն հնարավորություն կտա վկային լրացնել բացթողածը կամ մեղադրողին հնարավորություն կտա ծածկել դա կրկնակի ուղիղ հարցաքննության ժամանակ:

Երբեմն, որպես խաղի արվեստի մաս, վկան կամ մեղադրողը միտումնավոր բաց են թողնում բաներ՝ հուսալով, որ հակառակ կողմի պաշտպանը դրանք առաջ կքաշի խաչաձև հարցաքննության ժամանակ: Երբ դա տեղի է ունենում, վկայությունը շատ ավելի վնասատու է լինում, քանի որ դատական վիճաբանությունների ժամանակ մեղադրողը կշեշտի, որ վնասող վկայությունը ոչ թե իր հարցաքննությունից է եկել, այլ՝ հակառակ կողմի վկայությունից: Եթե հակառակ կողմի փաստաբանը /մեղադրողը/ սխալ է թույլ տալիս և բաց է թողնում կարևոր նյութ, մի օգնեք նրան՝ ինքներդ դա ներկայացնելով:

(5) Իրատեսորեն ի՞նչ կարող եք ակնկալել բացահայտել խաչաձև հարցաքննության ժամանակ

Հիմնականում հիմնված ձեր մինչդատական նախապատրաստման վրա հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյոք վկայի դեմ լավ զենք ունեք, թե ոչ: Կա՞ն արդյոք անհամապատասխանություններ

վկայի սկզբնական և դատաքննության ժամանակ տրված վկայությունների միջև: Ունեք արդյոք բանկային փաստաթղթեր, հեռախոսային խոսակցության ձայնագրություններ և այլ բաներ, որոնցով կկարողանայիք դիմագրավել վկային: Եթե վկան արժանահավատ լինելու տպավորություն է ստեղծել և դուք չունեք ոչինչ, որով կկարողանայիք նրան հակասել, միգուցե պետք է հրաժարվել խաչաձև հարցաքննությունից կամ պարզապես կարճ հարցաքննություն անել՝ պարզապես ցույց տալու համար, որ վկային խաչաձև հարցաքննության եք ենթարկել: Այնպես մի արեք, որ նրա վկայությունը կետ առ կետ կրկնվի, եթե իհարկե չեք գտնում, որ դրանից ձեր գործի համար օգուտ կքաղեք: Եթե նրա վկայությունը վատն է եղել ձեզ համար, երբ առաջին անգամ է արվել, ապա նրան այդ ամենը կրկնել տալով ամեն ինչ էլ ավելի եք վատացնում:

(6) Ի՞նչ ռիսկերի եք պատրաստ գնալ

Այն, թե արդյոք պետք է կատարել խաչաձև հարցաքննություն և թե ինչ ծավալ պետք է այն ունենա, կախված է նրանից, թե որքանով է ձեր կարծիքով ձեր գործն ուժեղ: Եթե ձեր գործն ուժեղ է և դուք իրատեսորեն կարծում եք, որ առավելություններ ունեք, հավանաբար պետք է խաչաձև հարցաքննության ժամանակ ավելի պահպանողական լինեք և ռիսկերը նվազագույն մակարդակում պահեք: Սակայն, եթե ձեր գործը թույլ է, պետք է ռիսկի գնաք և ծավալուն խաչաձև հարցաքննություն անեք, քանի որ կորցնելու շատ բան չունեք: Երբեմն այդպես վարվելով, փաստաբանը հաջողության է հասնում՝ վերածելով տանուլ տրվող գործը հաղթած գործի:

C. Խաչաձև հարցաքննության հիմնական տարրերը

Կան խաչաձև հարցաքննության հիմնական տարրեր, որոնք առկա են նրանց մեծ մասում: Դրանք ներկայացված են ստորև: Սակայն այս ձեռնարկում ներկայացված ամեն ինչ, բացառությամբ մինչդատական նախապատրաստման, առաջարկություններ են և չպետք է դրանց կուրորեն հետևել: Հիշեք, որ գործերը տարբերվում են և անհրաժեշտ է այս կետերը հաշվի առնել՝ փոփոխելով դրանք՝ կախված առանձին գործերից:

Պատկերացրեք, որ խաչաձև հարցաքննությունը պարտիզանական պատերազմի հարձակում է: Արագ ներս խուժեք, կրակեք մի քանի մարդկանց և փախեք:

(1) Սահմանափակեք ձեր հարցաքննությունը մի քանի կետերի շրջանակների մեջ

Փաստաբանը չի կարող միավորներ հավաքել վկայի խաչաձև հարցաքննության բոլոր մասերից, ուստի սահմանափակվեք այն մի քանի բնագավառներով, որտեղ կարող եք արդյունավետ

լինել: Հազվադեպ է պատահում, երբ լինում են վկայի խաչաձև հարցաքննության երեքից կամ չորսից ավելի մասեր, որտեղ միավորներ եք հավաքում: Սրանք այն բնագավառներն են, որտեղ կարող եք վարկաբեկել վկային, վնասել նրա արժանահավատությանը կամ այնպես անել, որ նա օժանդակի ձեր գործի տեսությանը: Ավելին, երբ չափից ավելի կետեր եք ունենում, թուլացնում եք ուժեղագույն կետերը: Եթե միտքը, որը փորձում եք առաջ քաշել մի բան է, որը չէիք ներառի դատական վիճաբանությունների մեջ, հավանաբար չարժե այն ներկայացնել: Բացառություն է այն դեպքը, երբ վկան կարևոր վկա է հակառակ կողմի համար և խաչաձև հարցաքննության համար որևէ մեծ բնագավառ չունեք, բայց գտնում եք, որ ինչ-որ բան պետք է անեք: Այդ դեպքերում, միգուցե պետք է մանր կետեր առաջ բերեք պարզապես ցույց տալու համար, որ վկան կատարյալ չէ:

(2) Սկսեք և ավարտեք տպավորիչ կերպով

Ինչպես դատաքննության մյուս բոլոր մասերը այնպես էլ բացման խոսքն ու դատական վիճաբանությունները պետք է սկսեք և ավարտեք տպավորիչ կերպով: Պետք է այնպես անեք, որ թեմայի վերաբերյալ ձեր առաջին հարցը կամ հարցերի շարքը ուղղված լինեն դեպի կարևորագույն թիրախները: Նույնը վերաբերում է նաև խաչաձև հարցաքննությանը: Հիշեք, մարդկանց մոտ սկզբում է տպավորություն ստեղծվում և նրանք լավագույնս հիշում են, թե ինչ է տեղի ունեցել սկզբում և վերջում:

(3) Մի հետևեք ուղիղ հարցաքննության հաջորդականությանը

Վկան, հավանաբար, շատ մարդկանց պես ժամանակագրական հաջորդականությամբ կմտածի: Չսկսելով ձեր խաչաձև հարցաքննությունը վկայի ցուցմունքի սկզբով, կարող եք շփոթեցնել նրան: Այս մեթոդի շնորհիվ վկան նաև չի կարողանա կանխատեսել ձեր հարցերը: Նա նաև չի հասկանա, որ ձեր քայլերը տանում են ինչ-որ կարևոր բանի հաստատմանը՝ մինչև ձեր կողմից այն վերջնականապես հաստատելը: Այնուամենայնիվ, չպետք է չափից շատ հաջորդականությունից դուրս գաք, որպեսզի չշփոթեցնեք դատավորին:

(4) Միանգամից թշնամական վերաբերմունք մի ցուցաբերեք

Միգուցե ցանկանաք որոշ վկաների վրա ի սկզբանե հարձակում գործել նրանց հավասարակշռությունից հանելու համար: Բայց շատ վկաների դեպքում ավելի լավ է կեղծ անվտանգության զգացում ստեղծել: Կարող եք հարցաքննությունը սկսել մի քանի դյուրին հարցերով, որոնք անգամ ձեզ մոտ ժպիտ կարող են առաջացնել: Վկան կթուլանա և կկորցնի զգոնությունը: Հետո կարող եք, այսպես ասած, միացնել նրան: Հիշեք, դուք կարող եք բարուց չար դառնալ, բայց երբեք հակառակը:

(5) Մոլորեցրեք վկային

Պահեր կան, երբ կարող եք վկային իր ուղիղ հարցաքննության ժամանակ տրված վկայությամբ բռնած ուղով դեպի առաջ առաջնորդել: Կարող եք փորձել այնպես անել, որ վկան անգամ ավելի բարձր աստիճանի որոշակիություն արտահայտի, քան արել է ուղիղ հարցաքննության ժամանակ: Այս մարտավարությունը պետք է օգտագործեք միայն այն դեպքում, երբ ինչ-որ բան ունեք, որը բոլորովին կհակասի նրան: Օրինակ՝ այնպես արեք, որ վկան վկայի, որ մի ռեստորան կա, որտեղ նա միշտ աշխատանքից հետո գնում է, երբ ունեք վկա, ով կվկայի ձեր գործում, որ իսկապես այդ վկան ամեն հինգշաբթի եկել է իր սրճարան: Կարող եք նույնը անել նաև այն դեպքում, երբ ունեք փաստաթղթեր, որոնք կհակասեն վկային: Օրինակ՝ այն դեպքում, երբ վկան վկայել է ուղիղ հարցաքննության ժամանակ, որ երբեք փող չի փոխանցել ընկերությունից, խաչաձև հարցաքննությունը հետևյալ կերպ կընթանա.

Q: Ուղիղ հարցաքննության ժամանակ ասացիք, որ երբեք ընկերության հաշվից փող չեք փոխանցել:

A Այո:

Q:Հնարավոր չէ, որ մեկ-երկու անգամ դա արած լինեք, չէ՞:

A: Ոչ:

Q: Եվ դա չանելու պատճառն այն է, որ դա սխալ արա՞րք կլիներ, գողությու՞ն կլիներ:

A: Այո:

Q: Եվ դուք գող չեք, չէ՞:

A: Ոչ:

Q: Ներկայացնում եմ HSBC բանկի ձեր հաշվի պատճենը, որը ապացույց է ճանաչված: Այն ձեր բանկային հաշիվն է, չէ՞:

A: Այո:

Q: Նայեք հաշվի երկրորդ էջի ստորին մասին: Այն ցույց է տալիս, որ երեք անգամ փող է փոխանցվել ընկերության հաշվից ձեր հաշվին, չէ՞:

A: Այո:

Q: Ուստի բանկային հաշիվը չի համապատասխանում ձեր վկայությանը, չէ՞:

Կրկին, ինչպես և նախորդ օրինակում է ցույց տրվել, չպետք է ուղղակիորեն մեղադրեք վկային խաբեության մեջ: Միգուցե նա բացատրություն տա: Դատական վիճաբանությունների ժամանակ կարող եք ասել, որ կամ վկան է խաբել, կամ էլ բանկի հաշիվը: Դա էլ արդեն դատավորը կորոշի:

(6) Մի կրկնեք ուղիղ հարցաքննությունը

Շատ փաստաբաններ վկային կրկնել են տալիս իր՝ ուղիղ հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքը՝ ղեկավարվելով այն անհիմն տեսությամբ, որ վկայությունը վերապատմվելով ինչ-որ կերպ կմասնատվի: Դա չի լինի, բացառությամբ այն հազվագյուտ դեպքերի, երբ վկան անգիր արած է լինում վկայությունը և վերապատմելու ընթացքում մոռանում է սովորածը: Հույսներդ դրա վրա մի դրեք: Ինչպես վերը նշեցինք, եթե վկայությունը վատն է հենց առաջին անգամ ներկայացումից, երկրորդ անգամ այն ներկայացնելը իրավիճակը միայն ավելի կվատթարացնի:

D. Խաչաձև հարցաքննության կանոններ

(1) Միշտ ուղղորդող հարցեր տվեք

Ուղղորդող հարցը հարց է, որը հուշում է պատասխանը: Խաչաձև հարցաքննության ժամանակ պետք է կենտրոնանաք վկայի պատասխանների վրա և այնպես անեք, որ նա համաձայնի այն մտքերի հետ, որոնք փորձում եք առաջ քաշել: Այսպիսով, օրինակ՝ երբ փորձում եք ցույց տալ, որ վկան չէր կարող ճշգրտորեն ճանաչել մեղադրյալին, հարցաքննությունը այսպես կարող էր ընթանալ.

Q: 2011թ-ի հուլիսի 14-ի գիշերը դուք գնացել էիք Առագաստ սրճարան, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ այնտեղ 5 բաժակ օղի եք խմել, այնպես չէ՞:

A: 4 կամ 5:.

Q: Եվ այնտեղ ընդամենը 45 րոպե՞ եք անցկացրել:

A: Դե, իմ կարծիքով փոքր-ինչ ավելի երկար:

Q: Եվ անմիջապես դրանից հետո՞ էր, որ քայլեցիք Մաշտոցի պողոտան ի վար և տեսաք, որ բանկը կողոպտված է:

A: Այո, շատ չանցած:

Q: Բանկը Առագաստ սրճարանից երկու րոպե քայլելու հեռավորության վրա է, այնպես չէ՞:

A: Իմ կարծիքով՝ այո:

Q: Եվ այդ ժամանա՞կ է, որ պնդում եք, որ տեսել եք պարոն Ղազարյանին բանկից դուրս վազելիս:

A: Այո:

Պատճառներով, որոնք ներկայացվել են վերջին օրինակում և որոնց մասին դեռ կխոսվի, խաչաձև հարցաքննությունը պետք է սրանով ավարտեք:

Ի տարբերություն ուղիղ հարցաքննության՝ խաչաձև հարցաքննության ժամանակ փաստաբանն է ուշադրության կենտրոնում: Ուղղորդող հարցեր տալը փաստաբանի համար ուշադրությունն իր կողմը և իր ասածի կողմը գրավելու ճանապարհներից մեկն է: Սա նաև նեղացնելով կենտրոնացնում է դատավորի ուշադրությունը փաստաբանի կողմից ներկայացված տեսության վրա, այս դեպքում՝ այն բանի վրա, որ ականատես վկան չափազանց հարբած է եղել մեղադրյալին լավ ճանաչելու համար: Փաստաբանը փաստի վերաբերյալ հայտարարություն է անում և այնպես անում, որ վկան համաձայնի դրա հետ:

Խաչաձև հարցաքննության ժամանակ փաստաբանը պետք է կարճ փաստական վկայությունների շարք օգտագործելով հասնի իր հիմնական ասելիքին: Մի փորձեք մի հարցով ներկայացնել ձեր հիմնական ասելիքը: Նպատակն այն է, որ քայլ առ քայլ վկային մտցնեք մի արկղի մեջ, որտեղից դուրս գալու ելք նա այլևս չունենա և նրան ոչինչ չմնա, քան համաձայնել ձեր հիմնական ասելիքի հետ, կամ էլ այնպիսի տպավորություն ստեղծվի, որ նա ճիշտը չի ասում:

Եթե փորձեք հենց առաջին հարցով խորտակիչ հարված հասցնել, վկան կհասկանա, թե ինչ կա ձեր մտքում և կխուսափի ձեր ակնկալած պատասխանները տալուց: Հետևյալ օրինակը վերաբերում է գործի, որտեղ մեղադրյալը մեղադրվում է սպանության մեջ: Փաստաբանը ցանկանում է հաստատել, որ վկան չի տեսել դեպքը: Եթե պաշտպանը հարցնում է. «Դուք չեք տեսել այն մարդուն, ով ենթադրվում է, որ սպանվել է պարոն Աղայանի կողմից, այդպես չէ՞», վկան կպնդի, որ տեսել է: Սակայն, եթե պաշտպանը մոտենում է դանդաղորեն, փոքր հարցերի շարքի միջոցով,

որոնք պետք է վկայից կորզեն դրական պատասխաններ, վկան կտա պաշտպանին այն պատասխանը, որին նա սպասում էր:

Q: Դուք ծանոթ եք Աբովյան փողոցի հատվածին, որն ընկած է Թումանյան և Սայաթ-Նովա փողոցների միջև, այնպես չէ՞:

A Այո:

Q Հարյուրավոր անգամներ քայլել եք այդ թաղամասով, այնպես չէ՞:

A: Կարծում եմ՝ այո:

Q: Փաստորեն ամեն օր աշխատանքի գնալիս և աշխատանքից վերադառնալիս քայլե՞լ եք այդտեղով:

A: Այո:

Q: Նախկինում երբևէ չե՞ք տեսել, որ այնտեղ մարդ սպանած լինեն:

A: Ոչ:

Q: Նոյեմբերի 14-ը այն սովորական օրերի՞ց էր, պարզապես մի փոքր ավելի ցուրտ առավոտյան և երեկոյան:

A: Այո:

Q: Երեկոյան ժամը 5:00-ին երթևեկությունը նորմա՞լ էր Աբովյան փողոցում այդ ժամի համար:

A: Այո:

Q: Ոչ մի անսովոր բան տեղի չէ՞ր ունեցել, որը կստիպեր ձեզ ավելի մեծ ուշադրություն դարձնել քան սովորաբար դարձրել եք հարյուրավոր անգամներ, երբ քայլել եք այդ մայթեզրով:
A: Ոչ:

Q: Աշխատանքից տուն էիք վերադառնում, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Լա՞վ աշխատանքային օր էիք ունեցել:

A: Դե, միգուցե եղել են մի քանի ոչ այնքան լուրջ խնդիրներ:

Q: Ուրեմն, մտածում էիք օրվա ընթացքում տեղի ունեցածի մասի՞ն և այն մասին, թե ինչպես լուծել այդ խնդիրները:

A: Միգուցե, բայց հաստատ չեմ հիշում:

Q: Ուրեմն առաջին անսովոր բանը, որ նկատեցիք կրակոցի ձայնն էր, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ դա այն ժամանակ, երբ արդեն ինչ-որ մեկի վրա կրակել էին:

A Այո:

Ինչի է ուզեցել սրանով հասնել պաշտպանը: Նա, օգտագործելով առաջին հայացքից անմեղ թվացող հարցերի շարք, փորձել է հասցնել վկային մի կետի, երբ նա կընդունի, որ իրականում չի տեսել, թե ինչպես է կրակոցը արձակվել և ուստի ցանկացած ցուցմունք, որ նա տվել է այն բանի վերաբերյալ, թե ինչ է տեղի ունեցել ճակատագրական կրակոցից առաջ կամ դրանից առաջ տեղի ունեցած ցանկացած այլ բանի վերաբերյալ, չի ընդունվի:

(2) Մի հարց կա, որից պետք է խուսափեք

Դուք նաև կնկատեք, ինչպես որ բանկի կողոպուտի վերոհիշյալ օրինակում է արված, որ վերջին հարցը, այն է՝ վկան չի տեսել է, թե ինչպես է կրակոցն արձակվել, չի տրվել: Եթե այն տրվեր, վկան պետք է իր սխալն ուղղելու նպատակով ասեր այո և փորձեր բացատրություն տալ: Վերջին հարցը տալու կարիք չկա, որովհետև պաշտպանն արդեն իսկ իր փնտրած պատասխանն ունի և վկան որևէ ճանապարհ չունի, որով կկարողանար փախչել այն կետից, որտեղ, նրան ուղղորդել են: Դատական վիճաբանությունների ժամանակ պաշտպանը նորից դատավորի առջև պետք է առաջ քաշի այն միտքը, որ վկան հայտնել է, որ չի տեսել, թե ինչպես է կրակոցն արձակվել, քանի որ առաջին անգամ, երբ նա անսովոր բան է նկատել, եղել է այն ժամանակ, երբ նա կրակոցի ձայնն է լսել, իսկ դա կարող է լսվել միայն արձակումից հետո: Բանկի կողոպուտի գործով պաշտպանն արդեն իսկ հաստատել է, որ վկան բոլորովին հարբած է եղել, ուստի և չէր կարող ճշգրտորեն ճանաչել հանցագործին: Եթե պաշտպանը վկային հարցներ, թե արդյոք նա կարող էր ճանաչել կողոպտիչին, այդպիսով նրան հնարավորություն կտար պատճառներ առաջ բերելու, թե ինչու էր նա կարող դա անել. մի տվեք վկային այդ հնարավորությունը:

Իմաստն այն է, որ պետք է կանգ առնեք, երբ արդեն բավականին բան եք ստացել վկայից: Կարիք չկա, որ փորձեք ստիպել վկային ընդունել, որ նա խաբել է. դա ինքնին կբխի

ապացույցներից: Չափազանց շատ փաստաբաններ կան, ովքեր իրենց համար անհրաժեշտ ամեն ինչ ստացել էին վկայից և չափից ավելի անգամներ տալով նույն հարցը վկային, նրան բացատրություն տալու հնարավորություն են տվել:

(3) Վկային վերահսկողության տակ պահեք

Պաշտպանը վերահսկողության տակ է պահում վկային՝ տալով նրան ճշգրիտ հարցեր, որոնց կարելի է <<այո>> կամ <<ոչ>> պատասխանել: Եթե վկան սկսում է ոչ վերաբերելի, հարցից դուրս մանրամասներ ներկայացնել, պաշտպանը պետք է խնդրի դատավորին ընդհատել վկայի պատասխանները, որոնք տրված հարցին չեն վերաբերում:

Այն դեպքում, երբ վկան չի պատասխանում ձեր տված հարցին, այլ փորձում է իրեն ավելի հարմար պատասխան տա, պաշտպանը չպետք է ամեն ինչ այդպես թողնի: Նա պետք է կրկնի հարցը, նշելով վկային, որ նորից է հնչեցնում հարցը, քանի որ նա խուսափել է դրան պատասխանելուց: Դրանով իսկ պաշտպանը տեղեկացնում է վկային, որ նա չի կարողանա խուսափել պատասխանելուց այն հարցին, որ ինքը պատրաստվում է տալ: Նաև սրանով ցույց է տալիս դատավորին, որ վկան խուսափում է պատասխաններից, որը վնաս է հասցնում վկայի արժանահավատությանը:

(4) Փաստաբանի զգացմունքները

Լավ փաստաբանը պետք է նաև փոքր-ինչ դերասան լինի: Եթե ուղիղ կամ խաչաձև հարցաքննության ժամանակ վկան ասում է մի բան, որը վնաս է հասցնում պաշտպանի գործին, նա չպետք է որևէ զգացմունք ցույց տա: Եթե զգացմունքներով ցույց տաք, որ ձեր գործին վնաս է հասցվել, դրանով վկայությունն էլ ավելի ջախջախիչ կդարձնեք: Եթե որևէ արձագանք չտաք, դատավորը կարող է կարծել, թե վկայությունն այնքան վատը չէ, որքան, որ իրականում է:

Երբ վկան ակնհայտորեն խաբում է, պաշտպանը պետք է տեսանելիորեն նյարդայնանա: Դրանով դուք ցույց եք տալիս դատավորին, որ ձեզ բարկացնում է այն, որ իրեն և ձեզ խաբում են: Դա դատավորին ցույց կտա, որ դուք կարծում եք, որ վկան ճշմարտությունը չի ասում: Այս դեպքում զգացմունքները ցույց չտալու արդյունքում դատավորը կարող է մտածել, որ ձեր կարծիքով վկան չի խաբում:

(5) Երբեք մի տվեք բաց հարցեր

Խաչաձև հարցաքննության ժամանակ պաշտպանը փորձում է որոշակի նեղ կետեր հաստատել: Եթե պաշտպանը խնդրում է վկային ինչ-որ բան բացատրել, նա բացում է վկայի

ցուցմունքը և կորցնում է հսկողությունը նրա նկատմամբ: Ակնհայտ է արդեն, թե ինչ կասի վկան, երբ նրան բացատրելու հնարավորություն տրվի: Պետք է միայն այո կամ ոչ ակնկալող հարցեր տրվեն: Ուստի «ինչու», «ինչպես», «ինչ», «բացատրեք» հարցեր երբեք չպետք է տրվեն:

(6) Լսեք վկայի պատասխանները

Ճիշտ այնպես, ինչպես ուղիղ հարցաքննության դեպքում, որոշ փաստաբաններ նախապես պատրաստում, գրում են հարցերը, որոնք պետք է տան նույն հերթականությամբ, որով որ դրանք գրվել են: Նրանք այնքան զբաղված են լինում հարցեր տալով, որ չեն լսում պատասխանները և ուշադրություն չեն դարձնում, որ միգուցե վկան մի բան ասի, որն իրենց հետաքրքրի:

(7) Մի տվեք հարցեր, որոնց պատասխանները ինքներդ չգիտեք

Պաշտպանը պետք է հարցերը տալուց առաջ իմանա դրանց պատասխանները: Երբ պաշտպանը չգիտի պատասխանը կամ առնվազն լավ պատկերացում չունի, թե ինչպիսին է լինելու պատասխանը, նրա գործը լրջորեն կտուժի պատասխանից: Սա հատկապես ճիշտ է, երբ պաշտպանը ոչինչ չունի ցուցմունքը որակազրկելու համար: Այդ դեպքում նա այդ վատ պատասխանից փախչելու որևէ ելք չունի:

Այս կանոնը ճիշտ է նաև ուղիղ հարցաքննության համար. իսկապես, վատ պատասխանը նույնիսկ ավելի վատ է ուղիղ հարցաքննության ժամանակ: Պաշտպանն է հրավիրել վկային, ինչը հուշում է դատարանին, որ պաշտպանն է հովանավորում այդ անձին, քանի որ գտնում է, որ վկայի ճշմարիտ վկայությունը կօժանդակի իր գործին: Երբ պաշտպանը ստիպված փորձում է որակազրկել իր իսկ վկային, սա մի սարսափելի տպավորություն է ստեղծում գործը քննողի վրա: Բայց ավելի լավ բան չկա հակառակ կողմի համար, քան դատական վիճաբանությունների ժամանակ մատնանշելը հակառակ կողմի վկայի ցուցմունքը, որը տրվել է ուղիղ հարցաքննության ժամանակ և վնաս է հասցրել հենց այդ կողմին:

Սակայն պետք է զգուշավորություն ցուցաբերեք թե՛ այս, և թե՛ ձեռնարկում զետեղված այլ կանոնների մեծ մասի կիրառման դեպքում: Այս կանոնները կարող են վերաբերվել ոչ բոլոր գործերին: Եթե պաշտպանը հուսահատված է, և արդեն կորցնելու ոչինչ չունի, հնարավոր է հաջողության հասնելու հույսով տալ այնպիսի հարց, որի պատասխանը չգիտի:

(8) Խաչաձև հարցաքննության հետ կապված կարևոր կետեր

a.Բարենպաստ ցուցմունք ձեռք բերելը

Պաշտպանը միշտ չէ, որ ցանկանում է վնաս հասցնել հակառակ կողմի վկաներին: Լինում են դեպքեր, երբ նրանք կարող են օժանդակել իր գործին: Օրինակ՝ եթե մեղադրող կողմի վկայի

ցուցմունքը վերանայելիս իմացել եք, որ այդ վկան մի բան է ասել, որը կօգնի ձեր գործին, դա պետք է առաջ բերվի խաչաձև հարցաքննության ժամանակ: Օրինակ՝ եթե վկան մինչդատական վարույթում տրված ցուցմունքում ասել է, որ կողոպուտի գիշերը բանկի առջևի փողոցի լույսն անջատված է եղել, ապա պաշտպանը պետք է նշի դա: Օգտակար է լինում, երբ դատական վիճաբանությունների ժամանակ մատնանշվում է հակառակ կողմի վկայի կողմից տրված վկայությունը, որը պաշտպանի կարծիքով օգտակար է իր գործի համար:

Այն դեպքում, երբ պաշտպանն ունի այնպիսի բաներ, ինչպիսիք են սկզբնական ցուցմունքը կամ փաստաթուղթը, հակառակ կողմի պաշտպանի վկայի մասին հարցեր տալն ապահով է: Եթե վկան փոխում է իր ցուցմունքը կամ վկայություն է տալիս ընդդեմ հստակ ապացույց հանդիսացող վավեր փաստաթղթի, նրան կարելի է դրանով որակազրկել և այդ ժամանակ նրա տված ամբողջ ցուցմունքը կասկածի տակ կդրվի:

Որակազրկումը վկային խաչաձև հարցաքննության ենթարկելու գործընթացն է, որը, հաջողության դեպքում, կասկածի տակ կդնի վկայի սկզբնական ցուցմունքը: Դրան հասնելու մի քանի ճանապարհներ կան, որոնցից մի քանիսին ստորև կանդրադառնանք: Չնայած այժմ Հայաստանր Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում ցուցմունքների վերաբերյալ հոդվածները շատ փոքր թիվ են կազմում, ձեռնարկում կներկայացվեն օրինակներ, որոնք օգտագործվում են ամերիկյան դատարաններում:

Այն դեպքում, երբ չունեք որևէ սկզբնական ցուցմունք կամ լավ փաստաթուղթ, տրամաբանությունը կամ հավանականությունը ենթադրում են, որ վկան պետք է ինչ-որ ցուցմունք տա: Չնայած վերջին նշածը պակաս անվտանգ է, քան առաջինը, այնուամենայնիվ արժե փորձել: Օրինակ՝ եթե բանկի վրա ավազակային հարձակման գործով մեղադրանքի կողմի վկաներից մեկն այդ բանկում է եղել որպես հաճախորդ, երբ ավազակներն այնտեղ էին, հավանաբար այնպես անեք, որ նա ընդունի, որ վախեցել է, երբ ավազակները սկսել են բանկում հրազենից կրակոցներ արձակել: Որպես պաշտպան դուք պետք է ցույց տաք, որ նա չափազանց վախեցած է եղել հարձակվողներին ճշգրտորեն ճանաչելու համար: Եթե նա հերքի դա, դատավորը, հավանաբար, չի հավատա նրա ցուցմունքի այդ մասին, իսկ ցուցմունքի մնացած մասին ավելի մեծ կասկածանքով կմոտենան:

b. Անբարենպաստ ցուցմունքը նվազագույնի հասցնելը

Սա խաչաձև հարցաքննության այն մասն է, որտեղ փորձում եք վնաս հասցնել հակառակ կողմի ցուցմունքը: Կախված գործից կան կողմեր, որոնց վրա պաշտպանը պետք է կենտրոնանա:

c. *Ընկալում.*

Նկատի է առնվում պաշտպանի կողմից վկայի տեսնելու, լսելու, հոտառության կամ ցանկացած այլ զգայական գործառույթների օգտագործման կարողությունը փորձելը, զգայական գործառույթներ, որոնց վրա և հիմնված է վկայի վկայությունը: Վերը նշվեցին երկու օրինակներ, որոնք ներառում էին սպանության և բանկի վրա ավազակային հարձակման գործերը: Մեկ այլ օրինակ կարող է ներառել այն, թե ինչ հեռավորության վրա էր գտնվում վկան դեպքի վայրից կամ այն, որ մութ էր և տարածքը լուսավորված չէր: Ինչպես քննարկվել է նախորդ մասում, պաշտպանը չպետք է միանգամից նշի իր վերջնական ասելիքը, որն ուզում է հաստատել:

Q: Ասացիք, որ ժամը 8:00-ին քայլում էիք Ազատության պողոտայով, այնպես չէ՞:

A' Այո:

Q: Եվ դա հունվարի 27-ի՞ն էր:

A: Այո:

Q: Ուրեմն դրսում մու՞թ էր:

A: Այո:

Q: Եվ դուք կանգնած էիք Ազատության պողոտայի վրա, Նորսիսյան փողոցի մոտ, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Ազատության պողոտայի այդ մասից յուրաքանչյուր կողմով չորս ճանապարհ է ձգվում, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Ուրեմն առնվազն 25 մետր հեռավորության վրա եք գտնվել բանկից, որտեղից, որ կողոպտիչները դուրս են վազել:

A: Կարծում եմ՝ մոտավորապես այդ հեռավորության վրա էի գտնվում:

Q: Իսկ Ազատության պողոտայի մյուս կողմի փողոցի լույսը անկյունու՞մ էր, որտեղ Ազատության պողոտան և Նորսիսյան փողոցն են հատվում:

A: Կարծում եմ՝ այո:

Q: Եվ դա բանկի մուտքից մոտավորապես 7 կամ 8 մետր հեռավորության վրա՞ է գտնվում:

A: Չգիտեմ, միգուցե:

Q: Եվ ավազակները բանկից դուրս վազելուց հետո վազեցին Ազատության պողոտայով՝ Ներսիսյան փողոցից հեռու, հեռու այնտեղից, որտեղ դուք էիք կանգնած, այնպես չէ՞:

A: Այո:

Այդ պահին պաշտպանը կընդհատեր վկայի խաչաձև հարցաքննությունը: Վկան, հավանաբար, դեռևս կպնդեր, որ ճշգրտորեն ճանաչել է հանցագործին, ուստի իմաստ չունի փորձել ստիպել նրան ընդունել, որ հնարավոր չէ, որ նա կարողանար որևէ մեկին ճանաչել: Ուշադրություն դարձրեք այն բանի վրա, որ պաշտպանն առանց վկային սպառնալու հարցերի միջոցով դանդաղորեն տեղ հասցրեց իր բուն ասելիքը: Եվ հարցերն այնպիսին չեն, որոնց հետ վկան չէր համաձայնի: Իսկ եթե վկան ցանկանում է վիճել հեռավորության մեկ-երկու մետրի համար, պաշտպանը պետք է զիջի չհակաճառելով վկային և այնպես անելով, որ նա իրեն պաշտպանված զգա: Պաշտպանը նաև հաստատել է, որ նույնիսկ եթե ավազակային հարձակում կատարողները վազելիս են եղել դեպի մյուս փողոցի լույսը, նրանք պետք է որ մեջքով շրջված լինեին վկայի նկատմամբ, ուստի հնարավոր չէր լինի ճանաչել նրանց:

d. Հիշողություն

Սրա հետ կապված պաշտպանը պետք է ցույց տա, որ՝ կամ հնարավոր չէ, որ վկան կարողանար հիշել, թե ինչ է տեղի ունեցել, կամ էլ՝ որ տեղի ունեցածի վերաբերյալ վկայի հիշողությունն այնքան աղքատիկ է, որ չպետք է ապավինել նրա ցուցմունքի վրա: Ահա մի գործ, որտեղ մեղադրյալի դիրքորոշումն այն է, որ ինքը հանցագործության վայրում չի եղել, այլ եղել է մեկ այլ վայրում և նա կանչել է վկայի, ով վկայում է, որ նա իր ռեստորանում է եղել.

Q: Տիկին Խաչիկյան, որքա՞ն ժամանակ է, որ աշխատում եք «Shadow» ռեստորանում:

A: 10 տարի:

Q: Ռեստորանի գործերը լավ են ընթանում, չէ՞:

A: Այո:

Q: Ուրեմն օրական առնվազն 200 հաճախո՞րդ եք ունենում:

A: Մոտավորապես, օրեր կան ավելի շատ, օրեր կան ավելի քիչ:

Q: Համոզված եմ, որ դուք լավ աշխատող եք և, ինչպես երևում է, զբաղված եք լինում հաճախորդների պատվերները կատարելու նպատակով այս ու այն կողմ վազելով, չէ՞:

A: Այո, դժվար աշխատանք է:

Q: Ուստի շաբաթական ավելի քան 1000 հաճախորդի՞ եք տեսնում:

A: Առնվազն այդքան:

Q: Եվ, հավանաբար, նրանց մեջ ամեն տեսակի մարդիկ են հանդիպում, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ ուղիղ հարցաքննության ժամանակ ասացիք, որ չգիտեք մեղադրյալին, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ դուք ասացիք, որ նա քաղաքավարի է և հագնված է այնպես, ինչպես շատ մարդիկ են հագնվում Երևանում, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Այլևս հարցեր չունեմ, շնորհակալություն:

Դատախազը հաստատեց, որ վկան չգիտի մեղադրյալին, նրա մեջ ինչ-որ հիշվող բան չկա, իսկ վկան շաբաթական ավելի քան 1000 հաճախորդ է տեսնում: Նրա համար այս մեկ անձին հիշելը շատ անհավանական է: Դատախազը, հավանաբար, չի ցանկանա վկային տալ վերջին հարցը, այն է, թե ինչու է նա հիշում մեղադրյալին, քանի որ հնարավոր է, որ նա պատասխան ունենա այդ հարցին: Նաև անհավանական է այն, որ նա կընդունի, որ խաբել է, երբ ասել է, որ հիշում է նրան: Դատական վիճաբանությունների ժամանակ դատախազը կվիճարկի այն, որ մեծ ջանքեր են պահանջվում հավատալու համար, որ նա հիշել է մեղադրյալին: Հիշեք. եթե պաշտպանը հրավիրում է վկայի հենց նոր նշված իրավիճակի դեպքում, ապա նա պետք է ուղիղ հարցաքննության ժամանակ բացահայտի, թե ինչու է վկան հիշել, որ մեղադրյալն իր ռեստորանում է եղել:

Խաչաձև հարցաքննության այս կատեգորիայի մյուս կողմերի մեջ մտնում է մանրամասների մեջ խորանալը: Բանկի վրա ավազակային հարձակման գործով՝ հարցնելը, թե ինչ գույնի վերնաշապիկ էր հագել ավազակը, ինչ արագությամբ էր նա վազում, այլ այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են՝ որքան ժամանակ պահանջվեց նրանից հասնելու համար իր մեքենային: Եթե

ոստիկանությունը որոշել է, թե որտեղ է կանգնած եղել մեքենան, պաշտպանական կողմը կարող է ուղարկել մեկին չափելու և տեսնելու՝ արդյոք վկայի՝ հեռավորության նկարագրությունը ճիշտ է: Պաշտպանը կարող է նաև ուղարկել անձի, ով կվազի այդ հեռավորությունը և կհաշվի դրա վրա ծախսված ժամանակը: Եթե անհամապատասխանություն հայտնաբերվի վկայի ասածի և իրական փաստերի միջև, պաշտպանը կարող է որպես վկա կանչի անձին, ով իր գործով կատարել է չափումները: Սա կհաստատի, որ մեղադրող կողմի վկան լավ չի հիշում իր տեսածը կամ այդքան էլ լավ չի նկարագրում դեպքի վայրը, հետևաբար նրա վկայությունը կարող է սխալ լինել մյուս տեսանկյուններից:

e. *Որակազրկում*

Սա խաչաձև հարցաքննության ամենակարևոր մասն է, երբ պաշտպանը որակազրկում է վկային կամ նրա ցուցմունքը: ԱՄՆ-ի պրակտիկայի դասական օրինակներից մեկն այն է, երբ պաշտպանը ցույց է տալիս, որ վկան տվել է սկզբնական ցուցմունք, որը հակասում է իր՝ դատաքննության ժամանակ ասածին: Մեծ հակասության դեպքում վկայությունների տարբերությունը հաստատելուց հետո պաշտպանը կարող է հարցնել վկային. «Այն ժամանա՞կ էիք խաբում, թե՞ հիմա»: Կամ եթե սկզբնական ցուցմունքն ավելի լավ է ձեր գործի համար կարող եք հարցնել վկային՝ արդյոք կհամաձայնի, որ սկզբնական ցուցմունքը տալիս դեպքերն ավելի թարմ էին նրա հիշողության մեջ: Այս մոտեցմամբ ոչ թե ցանկանում եք ցույց տալ, որ վկան խաբում է, այլ որ տեղի ունեցածի վերաբերյալ նրա հիշողությունն այնքան լավ չէ, որքան որ առաջին անգամ ցուցմունք տալիս:

Սկզբնական ցուցմունքի հետ անհամապատասխանության վրա հիմնված վկային որակազրկելիս նախ պետք է այնպես անել, որ նա հավատարիմ մնա դատաքննության ժամանակ տրված իր ցուցմունքին և հաստատի, որ ինքն այդպես է ցուցմունք տվել: Հետո խնդրեք նրան վերհիշել, թե ինչպես է ցուցմունք տվել այն ամսաթվին և այնտեղ, որտեղ իր այժմյան ցուցմունքին չհամապատասխանող ցուցմունք է տվել: Նա կարող է չհիշել ճիշտ ժամանակը, բայց պաշտպանը պետք է այնպես անի, որ նա ընդունի, որ սկզբնական ցուցմունք է տվել: Հետո տվեք նրան սկզբնական ցուցմունքը: Ահա այս մեթոդի մի օրինակ: Նկատեք, թե ինչպես է պաշտպանը ստիպում վկային ընդունել, որ տվել է սկզբնական ցուցմունք և հիշել, թե ինչպես է նա դա արել և հետո ընկնում է ծուղակը:

Q: Ուղիղ հարցաքննության ժամանակ դուք ասացիք, որ մեղադրյալից 5 մետր հեռավորության վրա եք գտնվել, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ դա ճի՞շտ ցուցմունք էր:

A: Իհարկե:

Q: Եվ հանցագործին ճանաչելու հարցում այդքան համոզված եք այն պատճառով, որ շատ մոտ եք գտնվել, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Կողոպուտի օրը ձեզ քննիչ Հարությունյա՞նն է հարցաքննել:

A: Չեմ հիշում քննիչի ազգանունը, բայց այո, ես խոսել եմ մի կին ոստիկանի հետ:

Q: Եվ դա կողոպուտից անմիջապես հետո՞ էր:

A: Այո:

(Այս պահին պաշտպանը պետք է այն ցուցմունքի պատճենը, որը նա պատրաստվում է օգտագործել, տա հակառակ կողմի պաշտպանին և վկային մոտենալու թույլտվություն խնդրի դատավորից:)

Q: Ձեզ այժմ ցույց եմ տալիս վկայի ցուցմունք, որը վերցրել է քննիչ Հարությունյանը և որը կցանկանայի, որ նշվեր որպես պաշտպանական ապացույց, ցուցմունքի վերևում ձեր անունն է, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Եվ ստորև դրված ստորագրությունը ձե՞րն է:
A: Այո:

Q: Խնդրում եմ բարձրաձայն կարդալ ցուցմունքի դեղինով ընդգծված մասը:

A: Ես մոտավորապես 15 մետր հեռավորության վրա էի գտնվում այնտեղից, որտեղից դանակով հարվածել էին այդ մարդուն:

Q: Այլևս հարցեր չունեմ:

Սակայն, մինչ վկային սկզբնական ցուցմունքի անհամապատասխանության վրա հիմնված որակազրկելը, պաշտպանը պետք է հիշի, թե Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի համաձայն, ինչ պարագաներում է թույլատրվում դատաքննության ժամանակ հրապարակել վկայի՝ նախկինում տրված ցուցմունքը:

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 356-րդ հոդվածում ասված է՝

<<1. Կողմի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ մինչդատական վարույթում կամ դատարանում սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ տրված ցուցմունքի, ինչպես նաև դրան կցված հավելվածների (նկարների, գծագրերի, սխեմաների, լուսանկարների, ձայնագրությունների, տեսագրությունների, նկարահանումների, տեսաֆիլմերի) հրապարակումը թույլատրվում է, եթե՝

1) առկա է էական հակասություն անձի՝ դատարանում և նախկինում տված ցուցմունքների միջև.

2) անձն օգտվելով իր սահմանադրական իրավունքից՝ իրավաչափորեն հրաժարվել է դատարանում ցուցմունք տալուց.

3) անձը մահացել է կամ չի կարող հարցաքննվել ֆիզիկական կամ հոգեկան ոչ լիարժեքության պատճառով.

4) անձը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս կամ գործում է անձի դատարան ներկայանալուն խոչընդոտող անհաղթահարելի ուժ և չկա տեսահաղորդակցության տեխնիկական միջոցներով նրան հարցաքննելու հնարավորություն.

5) հայտնի չէ անձի գտնվելու վայրը կամ սպառվել են նրան դատարան ներկայացնելու բոլոր ողջամիտ միջոցները.

6) մինչդատական վարույթում անձի ցուցմունքը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան դեպոնացվել է:

2. Անձի՝ նախկինում տված ցուցմունքը կարող է հրապարակվել միայն դատարանում նրա հարցաքննությունն ավարտելուց կամ այդպիսի հարցաքննության անհնարինությունը հաստատելուց հետո: Մինչև ցուցմունքի հրապարակումն արգելվում է դրան կցված հավելվածների հետազոտումը:>>:

Որակազրկման մյուս ճանապարհը վկայի կողմ կամ դեմ շահագրգռվածությունը կամ կողմնակալությունը ցույց տալն է: Օրինակ.

Q: Դուք մեղադրյալի մա՞յրն եք:

A: Այո:

Q: Եվ դուք սիրում եք ձեր որդուն, այնպես չէ՞:

A: Այո:

Նորից հիշեցնենք, որ պաշտպանը չպետք է այլ հարցեր տա, ինչպես օրինակ՝ արդյոք վկան կխաբե՞ր պաշտպանելու համար իր որդուն, քանի որ նա այդպիսի բան չի ասի: Պաշտպանը պետք է այդ հարցին պատասխանի դատական վիճաբանությունների ժամանակ:

Ահա բացասական կողմնակալության մի օրինակ.

Q: Անցյալ տարի ձեր և պարոն Ահարոնյանի միջև վեճ է տեղի ունեցել, այնպես չէ՞:

A:Այո:

Q: Եվ այդ վեճի ժամանակ պարոն Ահարոնյանը կոտրե՞լ է ձեր ձեռքը:

A: Այո:

Q: Ուստի չեք սիրում պարոն Ահարոնյանը, այնպես չէ՞:

Վերը նշված օրինակում պաշտպանը ցույց տվեց, թե ինչու է վկայի ցուցմունքը մեղադրյալի դեմ ուղղված:

Մյուս ճանապարհին այն է, որ ցույց տրվի, որ վկան գործի ելքի մեջ շահ ունի: Հաճախ վկան հարուցում է քաղաքացիական հայց, որտեղ ինքը կարող է քաղաքացիական հայցով դատական ակտ ստանալ՝ հիմնված դատավճռի վրա: Վկային կարելի է հարցնել. «Եթե պարոն Ահարոնյանը դատապարտվի, դուք դրանից շատ փող կշահեք, այնպես չէ՞»:

Հարցերի այս հաջորդականությանը կարելի է հետևել նաև այն դեպքում, երբ մի կողմը փորձագետ է վարձել: ԱՄՆ-ում սովորաբար նման դեպքերում խաչաձև հարցաքննություն է կատարվում:

Q: Պարոն փորձագետ, այս գործով ձեզ պաշտպանական կողմն է վարձել, այնպես չէ՞:

A: Այո;

Q: Այստեղ այսօր տված ձեր ցուցմունքի համար որքա՞ն եք վճարվում:

A: Ես 20,000 դոլարի պայմանագիր եմ կնքել այսօր այստեղ ցուցմունք տալու համար:

Վկայի ընկալումը փորձելու մեկ հասարակ օրինակ է, երբ վկան ճանաչում է մեղադրյալին և պնդում, որ բանկի մուտքից 100 մետր հեռավորությունից տեսել է, թե ինչպես է նա ավազակային հարձակումից հետո դուրս վազել բանկի: Հետո պարզվում է, որ նա աչքերի հետ կապված խնդիր ունի, ասենք, վատ տեսողություն (ֆիզիկական հիվանդություն) և սովորաբար ակնոցներ է կրում, որը նա չի կրել այն ժամանակ, երբ ինչպես պնդում է, տեսել է մեղադրյալին բանկի վրա ավազակային հարձակման օրը: Ուստի, փաստը ցույց է տալիս, որ վկան անկարող էր ճշգրտորեն տեսնել և ճանաչել ավազակին և հիմք է ստեղծում ապացույցն (վկայի ցուցմունքը) անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու համար: Սա այն դեպքն է, երբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն իսկապես փաստաբանի կողմից է: Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետը.

<<Որպես վկա չեն կարող հարցաքննվել և գործի համար կարևորություն ներկայացնող առարկաներ, փաստաթղթեր և այլ նյութեր հանձնել՝

1) անձինք, ովքեր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.>>:

Ապացույցների թույլատրելիությունը և դրա օգտագործման սահմանափակումները նախատեսող՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝

(…)

2. Օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

3. Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝

(…)

5) այն անձից, ով հոգեկան կամ ֆիզիկական ոչ լիարժեքության հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.

(…)

f. Մինչդատական գործարքով ստանձնած պարտավորություններ

Այն դեպքում, երբ վկան դատախազի հետ համագործակցելու դիմաց նշանակված պատժաչափը նվազեցնելու կամ պատիժ չնշանակելու վերաբերյալ նրա հետ համաձայնագիր է կնքել, պաշտպանը պետք է նշի համաձայնագրի մասին և այն, որ գործարք կնքած անձն իր համաձայնագրի համար վճարում է՝ տալով ցուցմունք, որը դատախազը ցանկանում է լսել: Սա պատշաճորեն անելու համար պաշտպանին անհրաժեշտ է դատաքննությունից առաջ ձեռք բերել մինչդատական համաձայնագրի պատճենը, որը ներառի բոլոր այն պարտավորությունները, որոնք որ ստանձնել են մեղադրող կողմի վկաները և դատախազը: Սա փաստաբանին՝ վկային որակազրկելու համար անհրաժեշտ փաստաթղթային ապացույց կտա, եթե մինչդատական համաձայնագրի պայմանների վերաբերյալ վկայի ցուցմունքը տարբերվում է գրավոր համաձայնագրից: Ահա մի օրինակ.

Q: *Պարո՛ն Լալայան, երկու ամիս առաջ դուք մեղադրվել եք ավազակության համար, այնպես չէ՞:*

A: *Այո:*

Q: *Եվ այդ մեղադրանքի արդյունքում դատապարտվել եք 5 տարի ազատազրկմա՞ն:*

A: *Այո:*

Q: *5 տարին երկար ժամկետ է, այնպես չէ՞:*

A: *Ոչ այդքան:*

Q: *Այնքան երկար էր, որ գործարք կնքեցիք, որն այդ ժամկետը նվազեցրեց՝ հասցնելով 3 տարվա, այնպես չէ՞:*

A: *Կնքել եմ գործարք:*

Q: *Եվ համաձայն այդ գործարքի պետք է այսօր գայիք դատարան և ասեիք, որ վստահորդս՝ պարոն Ղազարյանը, թմրամիջոցների մաքսանենգությամբ է զբաղվում, այնպես չէ՞:*

A: *Գործարքս այն էր, որ ճշմարտությունն ասեմ այն ամենի վերաբերյալ ինչ-որ գիտեմ Ղազարյանի մասին:*

Q: *Պարոն Լալայան, ձեզ ցույց եմ տալիս մի փաստաթուղթ, խնդրում եմ այն աչքի անցկացրեք:*

A: *Լա՛վ:*

Q: *Այդ փաստաթղթի ներքևում դրված ստորագրությունը ձերն է, այնպես չէ՞:*

A: *Այո:*

Q: *Եվ այդ փաստաթուղթը մինչդատական գործարքն է, որ ստորագրել եք, այնպես չէ՞:*

A: *Այո:*

Q: *Եվ, համաձայն այդ մինչդատական գործարքի, ձեր վկայության դիմաց դատախազը պետք է ձեր սկզբնական պատիժը կրճատեր երկու տարով, այնպես չէ՞:*

A: *Այո՛, իմ ճշմարտացի ցուցմունքի դիմաց:*

Q: *Եվ այսօրվա ձեր վկայության արդյունքում դուք երկու տարի քիչ կմնաք բանտում, այնպես չէ՞:*

A: *Այո:*

Q: *Եվ առանց ասելու այն ինչ ասել եք, պետք է ստիպված լինեիք բանտում ևս երկու տարի մնալ, այնպես չէ՞:*

A: *Այո՛:*

Q: *Եվ դատախազն է որոշելու՝ արդյոք ձեր վկայությունն իրեն այնքան է դուր գալիս, որ խնդրի կրճատել ձեր պատիժը, այնպես չէ՞:*
A: Չգիտեմ, փաստաբանիս հարցրեք:

Որակազրկման այլ ճանապարհներ ևս կան: Օրինակ՝ այն դեպքում, երբ պաշտպանը կարող է ցույց տալ, որ վկան խաբել է անցյալում, ունի նախկին դատվածություն, որ վկան նախապաշարմունք է ցուցաբերել ընդդեմ, օրինակ, էթնիկ խմբի կամ կրոնի, ռասայի, քաղաքական կուսակցության, որին պատկանում է մեղադրյալը: Սրանք վկայի կողմնակալությունը և նախապաշարմունքը ցույց տալու այլ ճանապարհներ են:

Ձեռնարկում ներկայացվում են վկային խաչաձև հարցաքննության ենթարկելու մի քանի ճանապարհներ: Ինչպես որ ձեռնարկի մնացած մասերին, այնպես էլ այս մասին չպետք է բացարձակ մոտեցում ցուցաբերել: Այն մի քանի օրինակ է ներկայացնում, բայց լավ փաստաբանը նաև այլ օրինակների մասին կմտածի: Իհարկե, խաչաձև հարցաքննության նշված ոչ բոլոր

հնարավոր մոտեցումները կարող են կիրառվել բոլոր վկաների դեպքում և, իրականում, որոշ դեպքերում նշված օրինակներից ոչ մեկն էլ կարող է կիրառելի չլինել:

Այն, թե ինչպես և երբ պետք է խաչաձև հարցաքննության ենթարկել վկային, մի հմտություն է, որի ձևավորման համար ժամանակ և փորձ է պահանջվում: Պահանջվում է նաև նախապատրաստվել: Լավ փաստաբանը խաչաձև հարցաքննությանը նախապատրաստվում է ձեռք բերելով հակառակ կողմի վկաների վերաբերյալ հնարավորինս շատ տեղեկություն: Պաշտպանը պետք է փորձի ձեռք բերել բոլոր այն փաստաթղթերը, որ նա կարող է ձեռք բերել, որպեսզի այն դեպքում, երբ վկան փորձի խուսափել ճշմարտությունից, պաշտպանը կարողանա որակազրկել նրան: Եթե սա չարվի, պաշտպանը պետք է ստիպված լինի բավարարվել վկայի տված ցանկացած պատասխանով:

<u>Դատական վիճաբանություններ</u>

Դատական վիճաբանությունը պաշտպանի՝ դատավորի վրա ազդելու վերջին հնարավորությունն է: Ուստի շատ կարևոր է, որ պաշտպանն իր փաստարկները տրամաբանորեն և վստահորեն ներկայացնի: Պաշտպանը պետք է բացատրի դատավորին, թե ինչու են ապացույցները պաշտպանի կողմից ակնկալվող դատավճռի օգտին:

Ինչպես դատաքննության մյուս փուլերին, այնպես էլ այս փուլին անհրաժեշտ է նախապատրաստվել: Եվ իսկապես, նույնիսկ մինչև դատաքննության սկսվելը պաշտպանը արդեն կարող է գաղափար ունենալ իր եզրափակիչ խոսքի բովանդակության մասին: Դատաքննության ժամանակ պաշտպանը որոշում է, թե որոնք են այն ապացույցները, որոնց վրա հիմնվելու է դատական վիճաբանությունների փուլում՝ նախապես նախապատրաստվելով: Ակնհայտ է, որ եթե դատաքննությունը պլանավորածի պես չի ընթանում, և հազվադեպ է պատահում, որ այն պլանավորածի պես ընթանա, պաշտպանը պետք է ստիպված լինի համապատասխան փոփոխություններ կատարել դատական վիճաբանությունների ժամանակ:

Եթե ամեն ինչ պաշտպանի ցանկացածով է ընթացել, դատական վիճաբանությունների ժամանակ նա պետք է կրկնի թեման, որը բացման խոսքում է ներկայացրել:

A. Ուշադրություն գրավող սկիզբ

Դատական վիճաբանությունների առաջին կամ երկու րոպեների ընթացքում, երբ պաշտպանի տրամադրության տակ է դատավորի համակ ուշադրությունը, նա պետք է այնպիսի բան ասի, որով կկարողանա սևեռել այդ ուշադրությունն իր ասելիքի վրա: Առաջին մեկ-երկու րոպեների ընթացքում պետք է գրավեք դատավորի ուշադրությունը, որպեսզի նա շարունակի լսել ձեզ: Հիշեք, որ առաջին տպավորությունը մնայուն է: Ի սկզբանե ձեր կողմից ներկայացված թեման շարունակելը սկսելու համար լավ ձև է: Ահա մի քանի օրինակներ.

«Հանցագործի թյուր ճանաչում: Սա մի գործ է, որտեղ վկան, ով չէր կարող հստակորեն տեսնել, թե ինչ է տեղի ունեցել հուլիսի 14-ի գիշերը, ճանաչման համար ներկայացված մարդկանցից ընտրել է մի անձի, ով այժմ կանգնած է բանտ ընկնելու վտանգի առջև մի հանցագործության համար, որը նա չի կատարել»:

Կամ նույն թեման ներկայացնելու մեկ այլ ճանապարհ.

«Նա չէ իրական հանցագործը: Հաճախ է պատահում, երբ տեսնում ենք ինչ-որ մեկի և կարծելով, թե ճանաչում ենք նրան, ձեռքով ենք անում, որպեսզի պարզենք՝ արդյոք դա այն անձն է ում մեր կարծիքով տեսել ենք: Սա մի գործ է, որտեղ վկան կարծել է, թե տեսել է ինչ-որ մեկի, բայց իրականում իրեն ավելի քան ամոթալի իրավիճակում է դրել, քանի որ մեղադրել է անմեղ մարդու»:

Կամ, մեկ այլ գործով.

«Սա վրեժխնդրության վերաբերյալ գործ է: Մեղադրյալն այդ պատճառով է սպանություն կատարել և ապացույցները հստակորեն ապացուցում են դա»:

«Ատելությունը սարսափելի բան է. այն կարող է սպառել մարդուն և դրդել նրան սարսափելի արարքների: Այս դեպքում այն դրդել է մեղադրյալին սպանել անմեղ մարդու՝ Պետրոս Պետրոսյանին, մի բանի համար, որ իր կարծիքով Պետրոսը կատարել է իր նկատմամբ»:

Ինչպես որ դատաքննության մյուս փուլերի, այնպես էլ այս փուլի համար սահմանված բացարձակ ձև գոյություն չունի, ստեղծագործական մոտեցում ցուցաբերեք:

Անցյալում փաստաբանները դատական վիճաբանությունների առաջին րոպեն վատնում էին դատավորին շնորհակալություն հայտնելու վրա: Այս մոտեցումն աստիճանաբար դուրս է մղվում, քանի որ գնալով ավելի ու ավելի շատ փաստաբաններ են գիտակցում, որ դա դատավորին չի տպավորում և որ այդ քարացած մոտեցմամբ սկսելով իրենք վատնում են առաջին րոպեն:

B. Վիճարկե՛ք

Դատական վիճաբանությունը ոչ այլ ինչ է եթե ոչ վիճաբանություն: Դատավորը չի ցանկանում լսել վկաների ասածի միապաղաղ կրկնությունը, նա լսել է այդ ցուցմունքները: Դատական վիճաբանության նպատակը բոլոր վկաների ցուցմունքների միաձուլումն է՝ ցույց տալու համար, թե ինչպես է պաշտպանի տեսությունն ապացուցվել: Պետք է նշեք վկայի անունը, երբ մատնանշում եք նրա վկայության այն մասը, որը ձեր տեսության օգտին է: Եթե պաշտպանը կրկնի վկաներից յուրաքանչյուրի ասածը, դատավորը կձանձրանա և կվիրավորվի, քանի որ նա արդեն լսել է դրանք: Ձեր խնդիրն է ցույց տալ, թե ինչպես են ցուցմունքների կտորները միահյուսվում՝ հաստատելով ձեր տեսակետը: Կամ էլ, քանի որ որպես պաշտպան, դուք չեք կրում ապացուցման բեռը, կարող եք պարզապես ցույց տալ, որ վկաների ցուցմունքներն իրենց համակցության մեջ դատախազի տեսության օգտին չեն: Սա նույնքան արդյունավետ չէ, որքան ցույց տալը, որ պաշտպանական կողմի գործը ցույց է տվել, որ մեղադրյալն անմեղ է, բայց հաճախ սա միակ բանն է, որ պաշտպանը կարող է անել:

i.Արդյունավետությունը.

Որոշ փաստաբաններ դատական վիճաբանությունների ժամանակ երկար ելույթ ունենալու միտում ունեն, ինչը հանգեցնում է նրան, որ դատավորի մոտ քնելու ցանկություն է առաջանում: Եթե անգամ ի վերջո փաստաբանը լավ միտք ներկայացնի, դատավորը դա բաց կթողնի: Եթե գործը շատ բարդ չէ, դատական վիճաբանությունները 40 րոպեից ավել չպետք է տևեն: Ուստի, պաշտպանից պահանջվում է նախապատրաստվել դատական վիճաբանությունների ընթացքում կարևորագույն թիրախներին հարվածներ հասցնելու: Ավելին, անտեղի մի ծանրաբեռնեք դատավորին գործի բոլոր անէական մանրամասներով, նա դրանք չի հիշելու և դրանով կկանգնեք ոչ կարևոր փաստերի խառնաշփոթի մեջ կարևորագույնները կորցնելու վտանգի առջև:

ii.Ռազմավարական նկատառումներ

1. Օգտագործե՛ք բացման խոսքում օգտագործած պիտակավորումն ու թեման.

Հետահայաց վերհիշեք ձեր բացման խոսքը: Այնտեղ թեմաներ և պիտակավորումներ եք օգտագործել: Կրկնե՛ք դրանք: Եթե թեման մեղադրյալի սխալ ճանաչումն է, կրկնե՛ք այն: Իրականում կարող եք դատավորին հիշեցնել, որ բացման խոսքում ասել եք, որ ապացույցները ցույց կտան դա: Օրինակ.

«Ինչպես ասացի ձեզ բացման խոսքում, սա սխալ ճանաչման վերաբերյալ գործ է: Պարոն Ղազարյանը քննիչի անփույթ աշխատանքի զոհ է, քանի որ ակնհայտ էր, որ արժանահավատ ճանաչում տեղի չի ունեցել: Դժբախտաբար, քննիչն ավելի շատ անհանգստացած է նրանով, որ գործն ավարտվի և ոչ թե նրանով, որ գործն արդար ավարտվի»:

Կամ, մեկ այլ գործ մեղադրող կողմի տեսանկյունից կաշառված սպայի վերաբերյալ.

«Սա գործ է մի սպայի մասին, ով ձեռքերը մեկնել էր ոչ հենց այնպես, այլ այլոց գրպանները մտցնելու նպատակով»:

C. Առաջ տարեք գործի ձեր տեսությունը

Բացման խոսքում արդեն ներկայացրել եք դատավորին ձեր տեսությունը: Այժմ պետք է բացատրեք նրան, թե ինչու է ձեր տեսությունն ապացուցվել դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցներով: Հղում կատարելով առանձին վկայության և/կամ իրեղեն ապացույցի, փաստաթղթի վրա՝ հյուսեք պատմությունը, որը ցույց կտա, որ թեման, որը ներկայացրել եք բացման խոսքում, ապացուցվել է դատաքննության ժամանակ: Սա նշանակում է հավաքել տարբեր վկաների ցուցմունքների կտորները ձեր միտքն ապացուցելու համար: Մի հակիրճ օրինակը բավական է, որպեսզի գաղափար կազմեք, թե ինչպես պետք է դա անել:

Կաշառված սպայի գործով.

«Դատարանը լսեց մի շարք վկաների ցուցմունքներ և տեսավ ցուցանմուշներ, որոնք հստակորեն ցույց են տալիս, որ Գևորգ Ղազարյանը կաշառվել է: Դատարանը լսեց Աննա Մովսիսյանի ցուցմունքն առ այն, որ նա ստիպված է եղել կաշառք տալ մեղադրյալին իր ռեստորանը բացելու թույլտվություն ստանալու համար: Նա մանրամասնորեն ներկայացրեց եղելությունը, թե ինչպես է գնացել թույլտվությունը ստանալու, և թե ինչպես են իրեն ասել, որ մինչև 2 000 000 դրամ չվճարի, չի ստանա թույլտվությունը: Նա ասաց դատարանին, որ դա իր ամբողջ կյանքի երազանքն էր: Ասաց, որ կարող էր վճարել այդ գումարը, քանի որ իր հորեղբայրը մահացել էր ԱՄՆ-ում և իրեն որոշ գումար էր թողել: Նրա վկայությունը հաստատելու համար ներկայացվեց

Աննայի բանկային քաղվածքները, որոնք ցույց տվեցին, որ 2010թ-ի ապրիլի 26-ին նրա հաշվից 2 000 000 դրամ է հանվել:

Մեղադրանքի կողմը նաև ներկայացրեց մի քանի վկաների ցուցմունք, համաձայն որոնց մեղադրյալը 2010թ-ի ապրիլի վերջերին որոշ գնումներ է կատարել իրենցից: Այդ գնումների ընդհանուր գումարը կազմել է 1 700 000 դրամ:

Դատարանը նաև լսեց Մարիաննա Ասրյանին՝ այն գործակալության հաշվապահի վկայությունը, որտեղ մեղադրյալն աշխատել է: Նա ասաց, որ մեղադրյալի աշխատավարձը ամսական 120 000 դրամ է կազմել և նա ներկայացրեց գործակալության վճարային փաստաթղթերը, որոնք հաստատեցին նրա ցուցմունքը:

Որտեղի՞ց է մեղադրյալն այդքան գումար ձեռք բերել: Չնայած որ մեղադրող կողմն է կրում ապացուցման պարտականությունը՝ մեղադրյալը, ով ցուցմունք է տվել, չկարողացավ տալ որևէ բացատրություն, որը հնարավոր լիներ հաստատել որևիցե փաստաթղթով»:

f.Ոչ ոք չի ցանկանում լսել ձեր անձնական կարծիքը

Ձեր անձնական կարծիքն ապացույց չէ: Դատավորը ենթադրում է, որ դատախազը կկարծի, որ մեղադրյալի մեղքը ապացուցվել է, իսկ պաշտպանը՝ որ դա ապացուցված չէ: Դատավորը չպետք է որոշում կայացնի այս կամ այն կողմի կարծիքի հիման վրա՝ իրենց ճշմարտացիության մասին: Դատավորը է կայացնում ապացույցների հիման վրա: Պաշտպանը պետք է ասի, որ ապացույցներից չի հետևում, որ մեղադրյալն է եղել բանկից դուրս վազող ավազակը, կամ որ ապացույցը ցույց է տալիս, որ հնարավոր չէ, որ վկան կարողանար ճանաչել բանկից դուրս վազողին:

D. Օգտագործե՛ք ցուցանմուշներ

Մեզանից շատերը տեղեկություն են ձեռք բերում իրենց աչքերի և ականջների միջոցով: Հոգեբանական փորձերը ցույց են տվել, որ մարդիկ երկու անգամ ավելի շատ տեղեկություն են պահում, եթե այդ տեղեկությունը և՛ լսողությամբ, և՛ տեսողությամբ են ձեռք բերում, քան դրանցից միայն մեկով: Կարող եք ապացույցները օգտագործել դատաքննության ժամանակ, կամ թողնել դրանց որոշ մասը դատական վիճաբանությունների համար: Սակայն, ցուցանմուշները, որոնք որպես ապացույց չեն ընդունվել, չեն կարող դրվել դատավճռի հիմքում: Դրանց օգտագործման նպատակը դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների կապը ցուցադրելն է:

Վիզուալ ապացույցների օգտագործումը նաև ընդմիջում է դատավորի համար, որպեսզի նա պարզապես չլսի, թե ինչպես է պաշտպանը խոսում գործի մասին: Ցուցանմուշները կարող են օգտագործվել ցույց տալու համար դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը, ցուցակների մեջ կարևոր փաստերը գտնելու համար, ինչպես օրինակ՝ հաշվարկներ, որոնք ցույց են տալիս փողի հոսքերը կամ մի շարք այլ բաներ, որոնք պաշտպանը ցանկանում է ընդգծել դատավորի համար:

Պետք է այնպես անեք, որ ուշադրությունը բևեռվի ձեր ցուցանմուշների վրա, երբ պատրաստվեք խոսել դրանց մասին: Եթե դրանք ներկայացնեք, ուշադրությունը ձեր ասածից դեպի իրենց կողմը կգրավեն: Ծածկած պահեք դրանք մինչև օգտագործելը և օգտագործելուց հետո նորից ծածկեք:

գ.Օգտագործեք հռետորական հարցեր

Հռետորական հարցն այն հարցն է, որը տրվում է առանց պատասխանի ակնկալիքի: Լսողի համար պատասխանը պարզ է լինում հենց հարցից: Այսպիսի հարցերը կարող են օգտագործվել ընդգծելու համար հակառակ կողմի գործի ամենամեծ թերությունը:

Դատավորը չի կարող պատասխանել այս հարցերին դատաքննության ժամանակ, բայց պաշտպանը փորձում է արմատավորել դրանք դատավորի մտքում, որպեսզի որոշում կայացնելիս դրանք նրան հանգիստ չտան: Ահա երկու օրինակ՝ մեկը մեղադրող կողմի, մյուսն էլ պաշտպանական կողմի համար.

«Այս գործում պարզապես այնպես է պատահել, որ առավոտյան ժամը 2:00-ին մեղադրյալը մեքենան վարելիս է եղել 2 թաղամաս այն կողմ այն վայրից, որտեղ ոստիկանությունը ձերբակալել է մեկ այլ անձի, ում մոտ հայտնաբերվել է հերոինի 5՝ 20 կգ քաշով փաթեթ: Մեղադրյալը որմնադիր է, բայց այնպես է պատահել, որ նրա մեքենայում մի ծրար է եղել, որի մեջ 20,000 դոլարին համարժեք գումար է եղել: Ի՞նչ գործ ունի որմնադիրն այդ ժամին այդքան փողով: Ինչու՞ պետք է այդ նույն մարդու մեքենայի ետնամասի նստատեղին հերոինի հետքեր լինեն, եթե նա չի զբաղվում թմրաղեղի բիզնեսով և հենց նոր գործարք չի կատարել»:

«Որտե՞ղ է սպանության զենքը: Եթե, ինչպես դատախազն է պնդում, պարոն Ղազարյանը իսկապես սպանել է Աննային, այդ դեպքում ինչպե՞ս է պատահել, որ ոստիկանությունը չի գտել զենքը նրա տանը, մեքենայի մեջ, իր մոտ, կամ որևէ այլ տեղ, որտեղ նա եղել է: Հարցրեք ինքներդ ձեզ՝ ինչպե՞ս է պատահել, որ դատախազը չի ներկայացրել մի վկայի, ով կասեր, որ պարոն

Ղազարյանը եղել է այն սենյակում, որտեղ Աննան է եղել, երբ սպանվել է: Այն դեպքում, երբ նա պարզապես հանցանքի վայրին մոտ է գտնվել»:

(E) Օգտագործեք համեմատություններ և նմանատիպ պատմություններ

Երբեմն հանցագործության ուղղակի ապացույց չկա: Ուղիղ ապացույցն այն է, երբ ինչ-որ մեկը կարող է ասել, որ բռնել է մեղադրյալին տնից դուրս գալիս իր (վկայի) ունեցվածքը ձեռքին: Երբեմն, միակ ապացույցը այսպես կոչված հանգամանքային ապացույցն է: Հանգամանքային ապացույցն այն է, երբ մի շարք փաստեր կան, որոնց հիման վրա դատավորը կարող է որոշակի եզրակացության գալ: Օրինակ՝ տան կողոպուտի տուժողն անսովոր վերարկու է ունեցել և տանը շատ փող է պահել: Արծրունը, ով վերջին տարիներին աշխատանք չի ունեցել, մեղադրվում է այդ հանցանքը կատարելու մեջ: Հաջորդ օրը վկաները տեսել են, թե ինչպես է նա խոշոր գումարներ ծախսում, իսկ հագին էլ տուժողի վերարկուն է եղել: Դատավորին ցույց տալու համար, թե որքան ուժեղ է ապացույցը, դատախազը կարող է օգտագործել հետևյալ համեմատությունը: Նա կարող է ասել.

«Այս գործը նման է մի իրավիճակի, երբ քնելու գնալիս երկինքը պարզ է եղել և ամբողջ օրը չի անձրևել: Առավոտյան արթնանում եք և ամենուրեք գետինը թաց է, իսկ ջրի կաթիլները թափվում են ծառերից: Չեք տեսել, թե ինչպես է անձրևել, բայց հաստատ գիտեք, որ ամբողջ գիշեր անձրևել է»:

D. Ընդգծեք ձեր ուժեղ կողմերը

Սա ոչ միայն դատախազին է վերաբերում, այլև պաշտպանին: Ակնհայտ է, որ դատախազն է կրում ապացուցման պարտականությունը, ուստի նա պետք է հաստատի, որ իր գործն ապացուցում է, որ մեղադրյալը մեղավոր է և ոչ թե պարզապես, որ մեղադրյալի բացատրությունն անիմաստ է: Երկու կողմերի համար էլ ավելի նախընտրելի է ցույց տալ, թե ինչու են իրենք ճիշտ, քան ցույց տալ, որ մյուս կողմը սխալ է: Երբ միայն կենտրոնանում եք մյուս կողմի թույլ կողմերի վրա, այնպիսի տպավորություն եք ստեղծում, թե ձեր կողմը թույլ է: Սա կարող է միակ բանը լինել, որ պաշտպանին մնում է անել այնպիսի գործում, որտեղ նա չի կարողանում հիմնավոր պաշտպանություն ապահովել: Այդ դեպքում նա պետք է մատնանշի, որ որպես մեղադրյալ իր վստահորդը պարտավոր չէ որևէ բան ապացուցել և որ մեղքը ապացուցելու պարտականությունը մեղադրող կողմն է կրում: Սա թույլ պաշտպանությունից խուսափելու ճանապարհ է: Հիշեք՝ փաստաբանը պետք է որոշի երբ օգտագործել ձեռնարկում զետեղված այս և այլ կանոնները և երբ՝ ոչ:

Ե. Հաղթահարեք թույլ կողմերը

Մի մտածեք, թե կարող եք գործում շրջանցել թույլ կողմերը: Հակառակ կողմը միանշանակ դրանք կմատնանշի: Ձեր թույլ կողմերին անդրադառնալու երկու հիմնական պատճառ կա: Առաջին հերթին դա թույլ է տալիս դատավորին տեսնել խնդիրը մի տեսանկյունից, որը ձեր կարծիքով ամենաբարենպաստն է: Քաղաքական գործիչները սա անվանում են «դեպքերի՝ քեզ համար բարենպաստ ընթացքով ներկայացում»:

Ամենակարևոր բանը, որ պաշտպանն ունի, իր արժանահավատությունն է: Ընդունելով իր թույլ կողմերը՝ պաշտպանն այնպիսի տպավորություն է ստեղծում, թե ինքն ազնիվ մարդ է, ում կարելի է վստահել և հավատալ: Եթե դատավորը տեսնի, որ կարելի է ձեզ հավատալ, կարելի է հուսալ, որ նա կընդունենն դեպքերի ընթացքի ձեր տարբերակը: Օրինակ.

«Ճիշտ է, որ պարոն Ազարյանն է վարելիս եղել մեքենան, որտեղ հայտնաբերվել է թմրամիջոցները, բայց դուք լսեցիք, թե ինչպես նա ասաց, որ ինքը առատաձեռն մարդ է, ով հաճախ է մեքենան օգտագործման տալիս այլոց: Թմրամիջոցները հայտնաբերվել է մեքենայի բեռնախցիկում: Ո՞վ գիտի, թե որքան ժամանակ է, որ այն այնտեղ է եղել: Մարդիկ մեքենա նստելուց առաջ չեն ստուգում բեռնախցիկները: Մեկ ուրիշը կարող էր թմրամիջոցն այնտեղ պահեստավորել, որպեսզի հետո մեքենան խնդրի պարոն Ազարյանից և առաքի այն: Այդ ժամանակ այդ անձը գիտեր, որ դրա համար ինքը պատասխանատվություն չի կրի »:

Եթե ձեր գործում ուժեղ կողմեր կան, թույլ կողմերի բացատրությունը պետք է տրվի դատական վիճաբանությունների միջնամասում: Ինչպես որ դատաքննության մյուս փուլերը, այնպես էլ դատական վիճաբանությունները պետք է սկսել և ավարտել տպավորիչ կերպով:

Վիճարկեք օրենքը և աշխատեք փաստերի վրա

Վիճարկեք օրենքը՝ ամրապնդելով գործով ձեր դիրքորոշումը, համոզվեք, որ օրենքը վիճարկելիս աշխատել եք փաստերի վրա:

Դատական վիճաբանությունների կազմակերպումը երկու կողմերի համար

Դատական վիճաբանությունները սովորաբար ունենում են որոշակի կառուցվածք, որը, կարող է հանգամանքներից կախված, գործից գործ տարբերվել:

a. Ուշադրություն գրավող սկիզբ

b. Հիմնահարց (ի՞նչ պետք է ապացուցվի կիրառելի օրենքով՝ մեղադրյալին դատապարտելու համար)

c. Ի՞նչ է իրականում տեղի ունեցել և ձեր տեսությունը հաստատող ապացույցները: Սա պետք է ներառի ձեր հրավիրած վկաների ցուցմունքները, ցուցանմուշներ, որոշ հարցերի վերաբերյալ հակառակ կողմի վկաների կողմից արված հաստատումներ, ողջախոհություն և հավանականություններին արված կոչեր:

d. Բացատրել, թե ինչու է հակառակ կողմի գործը թույլ: Օրինակ՝ ցույց տալ, թե որտեղ ապացույցներով չի հաստատվում մեղադրյալի մեղքը: Սրա մեջ մտնում է հակառակ կողմի վկաների ցուցմունքների վրա հարձակում գործելը և միգուցե նաև հռետորական հարցերի օգտագործումը: Հաճախ ձեր փաստարկման այս մասի սկզբում կարող եք քննարկել ձեր գործում առկա թույլ կողմերը: Դատախազը չի կարող մեղադրյալի կողմից չասվածի, չարվածի վերաբերյալ մեկնաբանություն անել, քանի որ այդ դեպքում դատաքննությունն անվավեր կհամարվի: Մեղադրյալը երբեք պարտավոր չէ որևէ բան անել դատաքննության ժամանակ, միայն դատախազն է կրում մեղադրյալի մեղքն ապացուցելու պարտականությունը:

e. Անդրադարձե՛ք ապացուցման պարտականությանը և քննարկե՛ք, թե որքանով է մեղադրող կողմը կատարել այն (օրինակ՝ թմրամիջոցների վերոհիշյալ գործում, որտեղ մեղադրող կողմը պետք է ապացուցեր, որ մեղադրյալն իմացել է, որ իր մոտ թմրադեղ է եղել, բայց չի կարողացել ապացուցել դա): Արե՛ք սա, մատնանշելով, որ մեղադրող կողմը պետք է ապացուցի հանցակազմի յուրաքանչյուր տարրը ողջամիտ կասկածից դուրս և բացահայտի ոճրագործի անձը, ինչպես նաև նշելով, թե ինչու մեղադրող կողմը չի կարողացել կատարել այդ պարտականությունը յուրաքանչյուր տարրի համար կամ ապացուցել, որ ձեր վստահորդն է եղել ոճրագործը:

f. Խնդրեք, որ ձեր ակնկալած դատավճիռը կայացնեն: Դատախազը կխնդրի մեղադրյալին մեղավոր ճանաչել առաջադրված բոլոր մեղադրանքներով: Պաշտպանն էլ կարող է խնդրել մեղադրյալին անմեղ ճանաչել բոլոր առաջադրված մեղադրանքներով: Սակայն, պաշտպանն այլ տարբերակներ էլ ունի: Նա կարող է ձգտել, որ անմեղ ճանաչման վճիռ կայացվի որոշ մեղադրանքների համար կամ մեղադրական դատավճիռ, բայց դատախազի առաջադրած մեղադրանքներից ավելի քիչ թվով մեղադրանքներով: Օրինակ՝ սա կարող է պատահել այնպիսի գործում, որտեղ պարզ է, որ մեղադրյալն է սպանությունը կատարել,

բայց պաշտպանական կողմը պնդում է, որ սպանությունը աֆեկտի ազդեցության տակ է եղել, երբ մեղադրյալը տուժողին իր կնոջ հետ է բռնացրել:

գ. Եզրակացություն

Դատական վիճաբանությունները դատարանի հետ խոսելու ձեր վերջին հնարավորությունն է: Ժամանակ տրամադրեք պատրաստելու համար պարզ, հակիրճ և ողջամիտ ելույթ: Դա կարող է կարևոր դեր խաղալ այն հարցում, թե արդյոք կշահեք, թե տանուլ կտաք գործը:

Առարկություններ

Քրեական դատավարության օրենսգրքից պարզ չէ, թե որ առարկություններն են թույլատրելի և երբ պետք է դրանք արվեն: Այս ձեռնարկում կներկայացվեն այն առարկությունները, որոնք արվում են դատաքննության ժամանակ ամերիկյան դատարաններում: Այն նաև կքննարկի դրանցից յուրաքանչյուրի հիմնավորումները, որոնք փաստաբանը պետք է դատավորին ներկայացնի ցույց տալու համար, թե ինչու պետք է իր առարկությունը ընդունվի:

A. Անե՞լ արդյոք առարկություն

Մինչ առարկություն անելը փաստաբանը նախ պետք է որոշի՝ արդյո՞ք նա ուզում է դա անել: Անընդհատ առարկություն անելը կարող է այնպիսի տպավորություն ստեղծել, թե փորձում եք այդպիսով ինչ-որ բան թաքցնել կամ թույլ չտալ, որ ճշմարտությունը բացահայտվի: Կլինեն դեպքեր, երբ հարցն առարկելի է, բայց պետք է առարկություն չանեք:

1.Էակա՞ն է արդյոք տեղեկությունը, որը ցանկանում եք ստանալ:

Եթե, օրինակ, հակառակ կողմը հարցնում է վկային, թե որտեղ է նա ապրում կամ աշխատում կամ նման այլ բաներ, պատասխան ամեն դեպքում կլինի, դրանք այն հիմնական հարցերից են, որոնք սովորաբար տրվում են: Օրինակ՝ եթե մեղադրողը հարցնում է վկային. «Դուք Ամիրյանի փողոցի 34 հասցեի չորրորդ հարկու՞մ եք բնակվում»: Սա սխալ հարց է, քանի որ այն ուղղորդող է և բարդ: Կարող եք առարկել, բայց ի վերջո հակառակ կողմը կհասկանա, թե որն է հարցը տալու ճիշտ ձևը: Այս դեպքում, հավանաբար, չպետք է առարկություն անեք, որպեսզի սկզբնական մասն

ավարտելով դատաքննությունն առաջ ընթանա: Մյուս կողմից պետք է ի սկզբանե առարկեք ուղղորդող հարցերի դեմ, որպեսզի ավելի ուշ անելու դեպքում դատավորը չասի, որ սկզբում դեմ չեք եղել այդպիսի հարցերին, այժմ ինչո՞ւ պետք է դրանց դեմ լինեք:

B. Ոչ ժամանակին

Կարևոր է, որ փաստաբանը ոչ ճիշտ հարցի դեմ առարկի մինչև վկային պատասխանելու հնարավորություն ընձեռվելը՝ հարցին տրվող պատասխանն ընդհատելու համար:

Իր կարծիքով ոչ պատշաճ հարց լսելուց անմիջապես հետո պաշտպանը պետք է ոտքի կանգնի և ասի «Առարկում եմ», որպեսզի դատավորն իմանա, որ պաշտպանի կարծիքով հարցը ոչ պատշաճ է: Այնուհետև, պաշտպանը պետք է ներկայացնի առարկության իրավական հիմքը: Առարկությունը լսելուց հետո դատավորը պետք է որոշի՝ արդյոք առարկությունը հիմնավոր է, թե ոչ: Եթե առարկությունը հիմնավոր է, վկան չի կարող հարցին պատասխանել:

C .Հարցերի դեմ առարկություններ

1. Ասեկոս

Սա այն դեպքն է, երբ վկային խնդրում են ցուցմունք տալ մի բանի վերաբերյալ, որի մասին նա անմիջական տեղեկություն չունի: Օրինակ՝ բանկի վրա ավազակային հարձակման մեր օրինակում, եթե վկան ցուցմունք չի տվել առ այն, որ հուլիսի 14-ին նա Ազատության պողոտայում է գտնվել, ապա պետք է առարկություն անել: Եթե այդ օրը կողոպուտի ժամանակ նա այնտեղ չի եղել, նա կարող է ցուցմունք տալ միայն այն բանի վերաբերյալ, թե ինչ է մեկ ուրիշն իրեն ասել: Ամեն անգամ, երբ վկային հարց է տրվում և հաստատված չի լինում, որ վկան ունի առաջին ձեռքի տեղեկություն, պետք է առարկություն անել:

Այս առարկության հիմնավորումն այն է, որ վկայի պատասխանի ճշմարտացիությունը չի կարող ստուգվել խաչաձև հարցաքննության միջոցով: Օրինակ՝ եթե վկան ցուցմունք է տալիս առ այն, որ Դավիթը ասել է իրեն, որ Գևորգն է կողոպտել բանկը, ինչպես կարող է պաշտպանն այնպիսի հարցեր տալ, ինչպիսիք են՝ որտեղ է կանգնած եղել Դավիթը, ինչ հեռավորության վրա է նա գտնվել, ինչպիսին է եղել լուսավորությունը, ճանապարհին որևէ խոչընդոտ կար, թե ոչ, արդյոք Դավիթը կարճատես է և այլն:

Հայաստանում թույլատրվում է ոչ միայն սկզբնական, այլ նաև ածանցյալ ապացույցների օգտագործումը: Օրինակ որպես ապացույց կարող են օգտագործվել այն վկայի ցուցմունքները, ով հայտնում է տեղեկություններ, որոնք լսել է այլ անձանցից (օրինակ ականատես վկայից), սակայն միայն այն դեպքում, երբ նա նշում է այդ տեղեկության ստացման աղբյուրը:

Այս ձեռնարկում մեծապես խորհուրդ ենք տալիս փաստաբանին խաչաձև հարցաքննության ժամանակ անմիջապես փորձել գտնել տեղեկության աղբյուրը:

Եթե մի գործ է, որտեղ ցուցմունքը ներառում է այն, թե ինչ է մեկ ուրիշը ենթադրաբար տեսել, հարվածները պետք է ուղղվեն այնպիսի բաների վրա, ինչպիսիք են՝ կոնկրետ որտեղ է անձը ենթադրաբար կանգնած եղել, երբ տեսել է դա, ինչպիսին էր լուսավորությունը, կային արդյոք դեպքին ականատես լինելու ճանապարհը փակող խոչընդոտներ: Արդյո՞ք մեքենաներ, ավտոբուսներ կամ բեռնատար մեքենաներ անցել են վկայի և նրա տեսադաշտը փակող առարկայի միջև և եթե այո, ապա քանի անգամ և ինչ տևողությամբ: Առարկան ստվերում է եղել, թե ոչ: Ինչպիսի տեսողություն ունի անձը՝ արդյոք նա կարճատես կամ հեռատես է, ունի արդյոք տեսողական խնդիրներ, արդյոք դալտոնիկ է, կրում է արդյոք նա սովորաբար ակնոց, արևի դիրքը, որտեղ էին գտնվում փողոցի լույսերը, արդյոք աշխատում էին փողոցի բոլոր լույսերը, արդյոք լուսավորված էր առարկան ետնամասից, արդյոք դիտողի աչքերը երբևէ հետազոտության ենթարկվել են և եթե այո, ապա ինչպիսին են եղել այդ հետազոտության արդյունքները: Ինչ էր անձն անում պատահարին ականատես լինելուց անմիջապես առաջ, որքան է տևել պատահարը և դրանից որքան ժամանակ հետո է վկան ստացել տեղեկությունը: Ունեցել է արդյոք վկան խմելու որևէ բան և եթե այո, ապա ինչ է դա եղել և դրանից որքան է նա խմել և պատահարից որքան ժամանակ առաջ: Արդյոք վկան ընդունում էր որևէ դեղամիջոց, եթե այո, ապա ինչ չափաբաժնով և ինչու էր նա այդ դեղը խմում: Արդյոք վկան թմրամիջոց օգտագործում էր, եթե այո, ապա՝ ինչ թմրադեղ, որքան չափաբաժնով և երբ: Դրա առաջի գիշերը քանի ժամ է վկան քնել: Ինչ էր վկան անում մինչև ենթադրաբար պատահարին ականատես լինելը և արդյոք նա մտազբաղ էր որևէ այլ բանով: Քանի տարեկան է վկան և տառապում է արդյոք որևէ հիվանդությամբ: Արդյոք ուներ գլխացավ, մրսածություն և եթե այո, ապա արդյոք նրա աչքերը ջրակալված էին և ջերմություն ուներ: Եթե գործում անձը պնդում է, որ ինչ-որ բան է լսել, նրան պետք է նշված հարցերը տալ, գումարած այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ խոսող(ներ)ից ինչ հեռավորության վրա է նա գտնվել, ունի արդյոք ենթադրյալ լսողը որևէ լսողական խնդիր, արդյոք նրա լսողությունը երբևէ հետազոտվել է և եթե այո, ապա ինչպիսին են եղել դրա արդյունքները, ինչպիսին է եղել շրջապատող աղմուկի մակարդակը այն ժամանակահատվածում, երբ դիտողի պնդմամբ ինքն ինչ-

որ բան է լսել, եղել է արդյոք խանգարող աղմուկ, ինչպես օրինակ՝ անցնող բեռնատար մեքենաներ, ինչ-որ մեկի բղավոցը, արդյոք խոսակցության որոշ մասը շշուկով է արվել, այնպես, որ նա չկարողանար դրա որոշ մասերը լսել, ինչպիսի արտահայտություն ունեին մասնակիցների դեմքերը, ձայնի ինչպիսի բարձրությամբ էին մասնակիցները խոսում, արդյոք փոփոխվում էր այն, եթե այո, ապա երբ և ինչպես:

Օրինակների ցուցակը վերոհիշյալով չի սահմանափակվում: Պաշտպանի նպատակն է հարցերի միջոցով վկայից ստանալ այնպիսի մանրամասներ, որոնք նա կկարողանա օգտագործել այն մարդու խաչաձև հարցաքննության ժամանակ, ով պնդում է, որ տեսել կամ լսել է, թե ինչպես է դեպքը տեղի ունեցել: Հավանականությունը, որ մեկ այլ անձից իրեն հայտնի դարձած տեղեկությունների մասին ցուցմունք տված վկան գիտի այս բոլոր հարցերի կամ դրանց մեծ մասի պատասխանները, չափազանց փոքր է: Վկային նաև պետք է հարցնել՝ արդյոք նա մեկ ուրիշից է լսել այն ամենն ինչ ասել է, թե ոչ, արդյոք անձը, ումից նա լսել է եղել է ականատես վկա, թե ոչ:

Կարող է այնպիսի գործ լինել, որտեղ այնպես պատահի, որ եռակի կամ քառակի աստիճանի ասեկոսը թույլատրելի համարվի: Այդ դեպքում կարող են տրվել այլ հարցեր միջանկյալ մարդկանց և նրանց արժանահավատության վերաբերյալ: Պաշտպանը կարող է անգամ փորձագետ հրավիրել՝ նրա հետ քննարկելու համար պատմությունը վերապատմելու և սխալներ անելու հավանականության մեծացման հետ կապված խնդիրները: Իսկապես, եթե դատաքննության ժամանակ ի հայտ գա, որ վկան գիտի բոլոր այս հարցերի պատասխանները՝ չափազանց կասկածելի տպավորություն կթողնի, ինչը կվկայի այն մասին, որ ականատես վկան երբեք դատաքննությանը ցուցմունք տալու նպատակ չի ունեցել: Եզրափակելով խաչաձև հարցաքննությունը՝ փաստաբանը պետք է դատարանի առջև ջախջախի ասեկոս ներկայացրած վկայի ցուցմունքը, ներկայացնելով այն որպես բոլորովին անարժանահավատ, այնպես, որ այն բոլորովին հաշվի չառնվի: Եթե փաստաբանը, որպես պաշտպան է հանդես գալիս, ապա նա պետք է դեմ կանգնի քննությանը հետագա ընթացք տալու ցանկացած փորձի: Եթե դատախազը չի կարողացել ականատես վկային դատարան ներկայացնել, ապա նրա վստահորդը չպետք է դրանից տուժի և նույնը վերաբերում է նաև այն դեպքին, երբ պաշտպանը հրավիրում է ոչ ականատես վկայի:

Առերեսման դրույթին համարժեք ոչինչ չկա Հայաստանի սահմանադրության մեջ: Բայց, համաձայն Սահմանադրության 19-րդ հոդվածի, մեղադրյալին երաշխավորվում է արդար դատաքննություն և պետք է պնդել, որ առանց ականատես վկայի հետ առերեսման և նրան խաչաձև հարցաքննության ենթարկելու իրավունքի ոչ մի դատաքննություն արդար համարվել չի կարող:

«Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) յուրաքանչյուր ոք արդար դատաքննության իրավունք ունի:

Հոդված 6 – Արդար դատաքննության իրավունք:

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ` այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

...3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու` իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները, ...>>:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածը ուղղակի սահմանում է անձի դեմ ցուցմունք տվողին առերես հարցաքննելու իրավունքը՝

<<1. Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում: ... >>: Իհարկե, սա բավարար երաշխիք չէ, քանի որ տվյալ հոդվածով նախատեսված առերեսումը տեղի է ունենում նախաքննության ընթացքում, երբ մեղադրյալը/կասկածյալը տեղեկություն չունեն գործով հավաքված ապացույցների մեծամասնության վերաբերյալ:

Որոշակի երաշխիքներ է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի առաջին մասը, որի համաձայն, 1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական

քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 231-րդ հոդվածի համաձայն՝

1. Առերեսումը նախօրոք հարցաքննված երկու այն անձանց միաժամանակյա հարցաքննությունն է, որոնց ցուցմունքներում կան էական հակասություններ:

2. Առերեսումը կատարվում է հարցաքննության՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

3. Մինչև առերեսվողներին հարցեր տալը քննիչը պարզում է, թե արդյոք նրանք ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Դրանից հետո քննիչն առերեսվողներին տալիս է նրանց ցուցմունքներում առկա էական հակասությունները պարզաբանող հարցեր: Քննիչի հարցերն ավարտվելուց հետո առերեսվողները, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված դեպքերում հարցաքննության ժամանակ հարցեր տալու իրավունք ունեցող անձինք, կարող են հարցեր տալ առերեսվողներին:

4. Առերեսվողների նախորդ ցուցմունքների հրապարակումը թույլատրվում է նրանց կողմից առերեսման ընթացքում ցուցմունքներ տալուց և դրանք արձանագրության մեջ գրառելուց հետո, իսկ եթե առերեսվողն օգտվում է սույն օրենսգրքով սահմանված լռելու իրավունքից, ապա այդ մասին արձանագրության մեջ նշում կատարելուց հետո:

Պատշաճ ապացուցման սկզբունքն ամրագրող՝ Նախագծի 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի դատապարտումը չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չեն ունեցել:

Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները սահմանող՝ Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի հակընդդեմ հարցման ենթարկել իր դեմ վկայած անձանց կամ, որ այդ անձինք ենթարկվեն հակընդդեմ հարցման, ինչպես նաև, որ իր օգտին վկայող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ վկայած անձինք:

Հակընդեմ հարցման իրավունքի երաշխավորմանն է ուղղված ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտը, որի մասին արդեն իսկ նշվել է:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք կոչված են երաշխավորելու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող հակընդդեմ հարցման իրավունքը:

2. Անհստակություն

Սա առարկություն է, որն ընդհանրապես արվում է խաչաձև հարցաքննության ընթացքում: Այն սովորաբար արվում է այն կողմի կողմից, ով հրավիրել է վկային: Սրա նպատակն է պաշտպանել վկային, այնպես անել, որ այնպիսի տպավորություն չստեղծվի, որ նա չգիտի՝ ինչ է խոսում, կամ որ խաբում է: Այս դեպքում առարկությունն այն կլինի, որ հակառակ կողմի տված հարցը չափազանց անհստակ է վկայի համար: Ահա մի օրինակ. «Կողոպտիչը բարձրահասա՞կ էր»: Բարձրահասակը հարաբերական հասկացություն է, այն ինչ բարձրահասակ է մեկի համար, կարող է բարձրահասակ չհամարվել մեկ այլ անձի համար: Այլ անհստակ հարցերի մեջ մտնում է նաև այն, թե արդյոք անձը հարուստ է, կարճահասակ, գեր, գեղեցիկ, արագավազ, դանդաղաքայլ: Ահա անհստակ հարցի ևս մի քանի օրինակներ. <<մե՞ծ գումար էր, մե՞ծ շինություն էր, փո՞քր տուն էր, մե՞ծ շուն էր>> և այլն: Այլ կերպ ասած, հարցեր, որոնց վերաբերյալ մարդիկ տարբեր կարծիքներ կարող են հայտնել: Ահա խաչաձև հարցաքննության ժամանակ հարցը տալու ճիշտ ձևը. «Բանկը կողոպտողի հասակը 1 մ. 62 սմ.՞ էր» կամ նույնիսկ «Ինչպիսի՞ հասակ ուներ անձը, որը ձեր պնդմամբ կողոպտել է բանկը»:

Պաշտպանի՝ առարկություն անելու ցանկության պատճառն այն է, որ վկան կարող է տալ մի պատասխան, որն իր կարծիքով ճիշտ է, բայց խաչաձև հարցաքննության ժամանակ կարող են այնպես անել, որ այնպիսի տպավորություն ստեղծվի, թե նա ճշմարտությունը չի ասել: Օրինակ.

Q: Բանկը կողոպտողը բարձրահասա՞կ էր:

A: Այո:

Պաշտպանական կողմը հրավիրել է վկայի, ով չափել է մեղադրյալի հասակը և վկայում է, որ մեղադրյալի հասակը 1մ 58սմ է: Եթե վկան կարճահասակ լիներ 1մ 58սմ-ը կարող էր նրան բարձր թվալ: Մյուս կողմից, եթե նա բասկետբոլ խաղացող լիներ, ապա 1մ 58սմ-ը կարող էր նրան կարճ

թվալ: Եթե հարցը թույլ տրվի, այնպիսի տպավորություն կստեղծվի, թե վկան սխալ մարդու է ճանաչել:

Ահա մեկ այլ օրինակ.

Կողոպուտի օրվան հաջորդող օրը պարոն Ղազարյանը շատ փող է ծախսել ձեր ռեստորանում, այնպես չէ՞:

A: Այո:

Q: Փաստորեն պարոն Ղազարյանն այդ օրը ձեր ռեստորանում միայն 5.000 դրա՞մ է ծախսել:

A: Այո:

Q: Բայց ասացիք, որ նա շատ փող է ծախսել. ուզում եք դատարանին ասել, որ 5.000 դրամը շա՞տ փող է:

A: Իմ կարծիքով՝ այո:

Սա կարող է այնպիսի տպավորություն ստեղծել, թե վկան փորձում է ծածկել իր ցուցմունքում կատարած սխալը: Միգուցե իսկապես 5 000 դրամը նրա համար մեծ գումար է, բայց դատավորը չի հավատա, որ որևէ մեկը կարող է այդպես կարծել և այդպիսով ցուցմունքի արժանահավատությանը վնաս կհասցվի:

Փաստաբանը պետք է միշտ համոզվի, որ վկան հստակ գիտի, թե ինչ են իրեն հարցնում: Վերոհիշյալ գործում մեղադրողը պետք է առարկի առաջին հարցի դեմ՝ հայտարարելով. «Առարկում եմ: Ոչ հստակ հարց է»:

Հարցի ճշգրտությունը կարևոր է ուղիղ հարցաքննության ժամանակ: Եթե վերոհիշյալ օրինակի առաջին հարցի նման հարց տաք և պաշտպանն իմանա, որ մեղադրյալը միայն 5 000 դրամ է ծախսել, նա հանգիստ կնստի և առարկություն չի անի՝ գիտակցելով, որ կոպիտ սխալ եք թույլ տվել և վկայի վրա հարձակում կգործի խաչաձև հարցաքննության ժամանակ՝ հնարավոր ջախջախիչ հարված հասցնելով նրան:

Այն դեպքում, երբ անորոշ հարցը խաչաձև հարցաքննության ժամանակ է տրվում, որոշելը՝ արդյոք առարկել, թե ոչ, մարտավարության հարց է: Հակառակ կողմի պաշտպանը կարող է զգալ, որ վկան կարող է այնպիսի պատասխան տալ, որը կզինի իրեն խաչաձև հարցաքննության համար:

Կարող է նաև այնպես պատահել, որ վկան այնպիսի պատասխան տա, որն անսպասելի է և վնասող:

3. Վերաբերելիություն

Այն դեպքում, երբ մյուս կողմը տալիս է մի հարց, որն ուղղակիորեն կապ չունի գործի հետ, առարկություն կարող է արվել հարցի ոչ վերաբերելի լինելու հիմքով: Օրինակ՝ եթե բանկի կողոպուտի գործում հարց տրվեր, թե մեղադրյալն ինչ է կերել նախաճաշին: Որպես այդ հարցի շարունակություն, կարող է հարց տրվեր, թե արդյոք մեղադրյալն ունի ընկերուհի: Նրա համար հարցը կարող է ոչ վերաբերելի թվալ: Սակայն, միգուցե պաշտպանի նպատակն է ի վերջո ցույց տալ, որ ընկերուհին թանկարժեք ճաշակ ունի, ուստի և հարցը վերաբերելի է, քանի որ դրանով կարող է հանցանքի շարժառիթը որոշվել:

<u>Հիմնավորման առաջարկ</u>

Սա վերաբերում է նրան, որ այն բանից հետո, երբ դատավորը որոշում է, որ հարցը ոչ վերաբերելի է, պաշտպանը բացատրելով հիմնավորում է, թե ինչու է վկայությունը վերաբերելի և ասում, որ նա պետք է թույլ տա, որ ինքը տա հարցը: Դատավորը կարող է փոխել իր որոշումը: Եթե նույնիսկ նա այդպես չի վարվում, դա պաշտպանի համար հիմք կհանդիսանա բողոքարկման համար: Նա կկարողանա վերաքննիչ դատարանում վիճարկել այն, որ քանի որ սխալմամբ թույլ չի տրվել իրեն տալ մի հարց, որը կբերեր խիստ կարևոր ցուցմունքի, դատավճիռը պետք է բեկանել: Ուստի կարևոր է, որ հիմնավորման առաջարկ անելիս պաշտպանը հանգամանորեն բացատրի, թե ինչու է հարցը վերաբերելի և ինչու պետք է ինքն այն տալու թույլտվություն ստանա: Հիմնավորման առաջարկի ժամանակ պաշտպանը ասում է դատավորին, թե վկայություն տալու թույլտվության դեպքում վկան ինչ ցուցմունք կտար: Մեկ այլ օրինակում պաշտպանը պարզ կերպով ներկայացնում է, թե իր կարծիքով թույլտվության դեպքում ինչի կարող է հասնել հարցերի միջոցով. սա կարող է արվել ուղիղ կամ խաչաձև հարցաքննության ժամանակ:

4. Վկայի՝ իրավասության բացակայությունը

Այս առարկությունը հիմնված է այն բանի վրա, թե արդյոք վկան իրավասու է տալ ցուցմունքը, որ իրեն խնդրում են տալ: Օրինակ՝ եթե թմրամիջոցների գործով մի ոստիկան հանդես է գալիս որպես վկա և նրան հարցնում են. «Ինչ էր այն փոշենման զանգվածը, որ առգրավեցիք»: Նա իրավասու չէ ասել, թե զանգվածն ինչ է եղել, եթե ինքը չէ անձամբ հետազոտել այն և այդպիսի

հետազոտություն կատարելու համապատասխան որակավորում չունի: Նա միայն կարող է ասել, որ մեղադրյալից սպիտակ փոշենման զանգված է առգրավել, քանի որ որոշելու համար, թե ինչ է այդ զանգվածը, անհրաժեշտ է քիմիական հետազոտություն կատարել: Ուստի, քանի դեռ սպիտակ փոշենման զանգվածը համապատասխան որակավորմամբ մարդու կողմից համապատասխան հետազոտության չի ենթարկվել, ոստիկանը չի կարող իմանալ, թե դա ինչ է: Այս առարկությունը կարող է արվել նաև փորձագետի ցուցմունքի դեպքում, եթե նա խնդրո առարկայի համար համապատասխան որակավորում (մասնագիտական հմտություններ, գիտելիքներ) չունի: Օրինակ՝ էլեկտրոնիկայի բնագավառում փորձագետը կարող է չունենալ մասնագիտական գիտելիքներ մի հարցի վերաբերյալ, որը պահանջում է քիմիայի բնագավառի գիտելիքներ:

5. Ուղղորդող

Արդեն քննարկել ենք, թե ինչ է իրենից ներկայացնում ուղղորդող հարցը: Եթե դատաքննությանը ուղիղ հարցաքննության ժամանակ այդպիսի հարց է տրվում, հակառակ կողմի պաշտպանը կարող է առարկել: Ահա թե ինչպես պետք է դա արվի. «Առարկում եմ. Հարցն ուղղորդող է»:

6. Բարդ հարց

Բարդ հարցն այն հարցն է, որն իրականում երկու հարց է պարունակում: Օրինակ՝ «Տեսե՞լ եք, թե ինչպես է մեղադրյալը բանկից դուրս վազել և կա՞ր արդյոք նրա ձեռքում հրազեն» «Ոչ»: Վկան ո՞ր հարցին պատասխանեց «ոչ»: Մեղադրյալը ձեռքին հրազեն չունե՞ր, թե՞ նա չի տեսել, թե ինչպես է մեղադրյալը բանկից դուրս վազել: Բարդ հարցի հետ կապված խնդիրն այն է, որ ոչ ոք չգիտի, թե ինչին է վերաբերում վկայի պատասխանը: Վերոհիշյալ հարցը պետք է տրոհվի երկու առանձին հարցերի: Այս հիմքով առարկություն անելու պատշաճ ձևը հետևյալն է. «Առարկում եմ: Բարդ հարց է»:

7. Վկային խնդրել, որ նա ենթադրություններ չանի

Սա մի հարց է, որի պատասխանը հնարավոր չէ, որ վկան իմանա և որը ստիպում է նրան ենթադրություններ անել: Ընդհանուր առմամբ սրանք հարցեր են, թե ինչ էր մեկ այլ անձ մտածում կամ նա ինչ մտադրություն ուներ: Օրինակ՝ «Ի՞նչ էր մեղադրյալը մտածում, երբ նա դուրս հանեց իր ատրճանակը» կամ «Մտադի՞ր էր արդյոք մեղադրյալը ավարտին հասցնել գործարքը»:

Ենթադրություններ ակնկալող հարցի դեմ առարկություն անելու պատշաճ ձևը հետևյալն է. «Առարկում եմ: Այն վկայից ենթադրություններ է ակնկալում»: Պաշտպանը կարող է անգամ հեռուն գնալ և ասել. «Պաշտպանը խնդրում է, որ վկան կարդա մեղադրյալի միտքը»:

8. Շփոթեցնող կամ անհասկանալի հարցեր

Լինում են դեպքեր, երբ հակառակ կողմը տալիս է հարց, որն իմաստ չի արտահայտում կամ շատ շփոթեցնող է: Եթե դուք չեք հասկանում, թե ինչ է հարցնում հակառակ կողմը շատ մեծ հավանականություն կա, որ վկան էլ դա չի հասկանա: Հատկապես խաչաձև հարցաքննության ժամանակ պաշտպանը պետք է համոզվի, որ իր վկաները շփոթմունքի մեջ չեն ընկնում, քանի որ դա նրանց կստիպի պակաս արժանահավատ երևալ: Ինչպես որ վերը՝ ձեռնարկի համապատասխան մասում ենք նշել, մինչդատական նախապատրաստման ժամանակ պաշտպանը պետք է վկային զգուշացնի, որ եթե նա չի հասկանում հարցը, ապա պետք է խնդրի բացատրել այն: Սակայն, լավ փաստաբանը հույսը դրա վրա չպետք է դնի: Հնարավոր է, որ վկան չցանկանա ասել, որ չի հասկացել հարցը: Ուստի փաստաբանի պարտականությունն է պաշտպանել իր վկային առարկություն անելով և այնպես անելով, որ հակառակ կողմը վերաձևակերպի հարցը: Ահա թե ինչպես պետք է դա անել. «Առարկում եմ: Հարցը շփոթեցնող է» կամ նույնիսկ «Առարկում եմ: Չեմ հասկանում, թե ինչ է հարցնում մեղադրողը»: Վերջին մեթոդը կարող է օգնել վկային, ով ամաչում է, որ չի հասկացել հարցը, բայց չի ուզում ընդունել դա: Վկան կարող է իրեն լավ զգալ՝ տեսնելով, որ պաշտպանը նույնպես չի կարողանում հասկանալ հարցը: Եթե դատավորը ձեր առարկությունից հետո հարցնում է վկային՝ արդյոք նա հասկացել է հարցը, նա ավելի շատ ցանկանում է ընդունել, որ ինքն էլ չի կարողացել հասկանալ, թե ինչի մասին է հարցը:

9. Չհաստատված փաստերի վերաբերյալ հարցեր

Սա այն դեպքն է, երբ տրվում է հարց մի բանի վերաբերյալ, որը հաստատված չէ: Օրինակ՝ բանկի կողոպուտի գործում վկային հարցնում են, թե որ կողմ է վազել կողոպտիչը մինչ հաստատելը, որ բանկի կողոպուտ է տեղի ունեցել, որ նա այնտեղ է եղել և ականատես է եղել դրան: Պաշտպանը պետք է առարկի: Ահա թե ինչպիսին կլիներ առարկությունը. «Առարկում եմ: Հարցը վերաբերում է չհաստատված փաստերի»*:*

Այս առարկությունից խուսափելու համար հարցեր տվողը պետք է ուղիղ հարցաքննության ժամանակ դանդաղորեն կառուցի հիմքը վկաներից յուրաքանչյուրի ցուցմունքի համար: Առաջ շարժվեք մանկան քայլերի նման քայլերով:

10. Վիճաբանություն

Փաստաբանները ներկա են դատաքննությանը, որպեսզի հարցեր տան վկաներին և ոչ թե վիճեն նրանց հետ: Եթե տրվում է այնպիսի հարց, որի նպատակն է պարզապես վիճել վկայի հետ, պետք է առարկություն անել: Առարկությունը կլիներ հետևյալը. «Առարկում եմ, սա ոչ թե հարց է, այլ վիճաբանություն»:

11. Հիմքի բացակայություն

Այս առարկությունները ամենից հաճախ արվում են այն դեպքում, երբ վկային տալիս են հարցեր, որոնք վերաբերում են չվավերացված փաստաթղթի: Վավերացնել նշանակում է հաստատել, որ ինչ-որ բան իսկական է: Որպեսզի վկան քննարկի զեկույցի, զննման արձանագրության, օրագրի կամ որևէ այլ գրավոր կամ լուսանկարչական նյութի բովանդակությունն, անհրաժեշտ է ցույց տալ, որ այն վավերացված է: Օրինակ՝ որպեսզի վկան կարողանա պատասխանել որևէ հարցի այն բանի վերաբերյալ, թե ինչ է ցուցադրված լուսանկարում, նախ պետք է հաստատել, որ լուսանկարը ճշգրտորեն ներկայացնում է դեպքի վայրը, որը դրանում ցուցադրված է: Ձայներիզային ձայնագրության դեպքում պետք է հաստատել, որ ձայներիզը բնօրինակ է և դրա միջի ձայնագրությունից ոչինչ չի ջնջվել կամ դրան ոչինչ չի ավելացվել: Օրինակ, եթե դա ինչ-որ մեկի կողմից գրված ինչ-որ բան է, փաստաբանը պետք է հաստատի, որ դա մեղադրյալի կամ տուժողի կամ զեկույցում նշված մեկ այլ անձի ձեռագիրն է: Ուստի, եթե ինչ-որ մեկին խնդրում են նկարագրել, թե ինչ է ցուցադրված նկարում, այդ մեկը, հնարավոր է հենց վկան, վկայի, որ դա դեպքի վայրի իրական և ճշգրիտ պատկերն է: Եթե դա չի արվել, ապա հակառակ կողմը պետք է առարկի այն հիմքով, որ վկայության համար հիմք չկա:

Արդյո՞ք հարցը չի խախտում մեղադրյալին օրենքով տրված երաշխիքները:

Սահմանադրության 22-րդ հոդված

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքով կարող է նախատեսվել ցուցմունք տալու պարտականությունից ազատելու այլ հիմքեր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ևս սահմանված են երաշխիքներ: Ահա դրանք.

Հոդված 19 Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը

1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում գործին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչին:

4. Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները:

5. Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ:

Հոդված 20 Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը

1. Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ:

2. Անձը, որին քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց և նյութեր տրամադրելուց:

3. Սույն օրենսգրքով կարող են նախատեսվել վկայություններ տալու և տեղեկություններ հայտնելու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Հոդված 65 Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

1. Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:

2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

…

4) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.

Հոդված 334 Մեղադրյալի դիրքորոշման ճշտումը

1. Նախագահողը ամբաստանյալին պարզաբանում է նրան ներկայացված մեղադրանքի էությունը, արարքի իրավաբանական որակումը, նրան ներկայացված քաղաքացիական հայցի հիմքերը և չափը: Մի քանի ամբաստանյալի առկայության դեպքում նման պարզաբանում տրվում է նրանցից յուրաքանչյուրին:

2. Նախագահողը ամբաստանյալներից յուրաքանչյուրին հարցնում է, թե նա արդյոք իրեն ճանաչում է մեղավոր և կոնկրետ ինչում: Ամբաստանյալին պետք է պարզաբանվի, որ նա կաշկանդված չէ նախաքննության ընթացքում մեղքն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ արված հայտարարությամբ, պարտավոր չէ պատասխանել առաջադրված հարցերին և, որ պատասխանելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա:

3. Նախագահողը հարցնում է ամբաստանյալին, թե նա լրիվ կամ մասնակի ընդունում է արդյոք իրեն ներկայացված քաղաքացիական հայցը: Եթե ամբաստանյալը պատասխանում է այս հարցին, նա իրավունք ունի պատճառաբանել այն:

4. Կողմերն իրավունք ունեն ամբաստանյալին տալ այնպիսի հարցեր, որոնք ուղղված են ամբաստանյալի դիրքորոշումը ճշտելուն:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ

Հոդված 22. Պատշաճ ապացուցումը

6. Խոստովանական ցուցմունքը չի կարող անձին դատապարտելու հիմք հանդիսանալ, եթե այն չի հիմնավորվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցների բավարար ամբողջությամբ:

Հոդված 26. Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը

2. Անձը, ում վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել այնպիսի տեղեկություններ կամ տրամադրել այնպիսի նյութեր, որոնք հետագայում կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր տրամադրելուց

Մեղադրյալի իրավունքները սահմանող՝ Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասին 10-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի պահպանել լռություն կամ ցուցմունք տալ պաշտպանի ներկայությամբ։ Նույն հոդվածի 1-ին մասի 8_րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության կամայական սահմանափակման։

Հոդված 88. Մեղադրյալի ցուցմունքը

Մեղադրյալի ցուցմունքը՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում սույն օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են։

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 381-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատական ակտն անվերապահորեն ենթակա է բեկանման, եթե մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա։

Վերը նշված նորմերը կարող են դրվել առարկության հիմքում, եթե հարցն ակնկալում է տեղեկություն, որը խախտում է մեղադրյալի վերը նշված երաշխիքները, խախտում նրա իրավունքը։ Եթե պատասխանը տրվում է մինչ առարկության ընդունումը, խնդրեք, որ պատասխանը հաշվի չառնվի։

11. Երկար պատասխան ակնկալող հարցեր

Փորձագետ չհանդիսացող վկաներին տրվելիք հարցերը պետք է գործի հանգամանքների նեղ շրջանակին վերաբերեն։ Ուստի, վկային խնդրելը. «Խնդրում եմ ներկայացրեք դատարանին, թե ինչ է տեղի ունեցել 2010թ-ի հուլիսի 14-ի գիշերը» սխալ է։ Սրա պատճառն այն է, որ եթե վկային չսահմանափակեք հարցերով, որոնք վերաբերում են նրա վկայության միայն փոքր մասերին, ապա

ասեկոսներ, ենթադրություններ, իրավասությունից դուրս գտնվող բնագավառների քննարկումներ և այլն անխուսափելի կլինեն:

Եզրափակիչ միտք

Կան բազմաթիվ այլ առարկություններ, որոնք կարող են արվել, ինչպես օրինակ, առարկություն այն հիմքով, որ հարցն ակնկալում է ստանալ օրենքով պաշտպանվող տեղեկատվություն, որ հակառակ կողմը թյուր կերպով է ներկայացնում ապացույցը կամայլ: Վերը նշված առարկությունները ամերիկյան դատաքննությունների ժամանակ ամենից հաճախ կիրառվողներն են:

B. Վկայի պատասխանները

Չնայած փաստաբանների կողմից արվող առարկությունների մեծ մասը վերաբերում են վկաներին տրվող հարցերին, կան նաև վկայի որոշակի կատեգորիայի պատասխաններ, որոնք նույնպես պատշաճ չեն: Երբ վկան տալիս է ոչ պատշաճ պատասխան, փաստաբանը պետք է առարկի դրա դեմ: Առարկությունը հիմնավորելուց հետո նա պետք է խնդրի դատավորին հանել այդ պատասխանը դատաքննության պաշտոնական արձանագրությունից և չառնել այն դատավճիռ կայացնելիս: Եթե դատավորը հետագայում իր դատավճիռը հիմնում է այդ պատասխանի վրա, անթույլատրելի ապացույցի օգտագործումը կարող է հիմք ծառայել հաջողակ բողոքի համար:

1. *Ասեկոս*

Ենթադրենք դատախազը տալիս է կատարելապես լավ հարց: *Q: «2010թ-ի հուլիսի 14-ին Ազատության պողոտայի բանկի վրա ավազակային հարձակում գործած անձն այսօր դատական նիստերի դահլիճու՞մ է», որին վկան պատասխանում է. «Այո, ըստ իմ ընկեր Արթուրի: Նա ասել է, որ Գևորգն է դա արել և նա նստած է ա՛յ այնտեղ»:* Առանց դատաքննության ժամանակ որևէ այլ հաստատող ապացույցի ներկայացման պատասխանն ակնհայտորեն ասեկոս է և պաշտպանը պետք է առարկի և այնպես անի, որ պատասխանը հաշվի չառնվի: Նա պետք է ասի. *«Առարկում եմ: Պատասխանն ասեկոս է»:* Եթե դատավորն ընդունում է առարկությունը, պաշտպանը պետք է այնուհետև ասի. *«Միջնորդում եմ պատասխանը հաշվի չառնել»:*

2. Հարցին չպատասխանող պատասխաններ

Սա այն դեպքն է, երբ վկայի տված պատասխանն այն չէ, ինչ հարցն էր ակնկալում: Պատասխանը կարող է մասամբ կամ ամբողջությամբ չպատասխանող լինել: Եթե հարցն ամբողջությամբ պատասխանող չէ, պաշտպանը պետք է առարկի ամբողջ պատասխանի դեմ: Եթե պատասխանը մասամբ է չպատասխանող, անհրաժեշտ է այդ մասի դեմ առարկել: Օրինակ. *Ք: «Տեսե՞լ եք պարոն Մեհրաբյանին 2010թ-ի հուլիսի 14-ին BMW մակնիշի կանաչ մեքենա վարելիս» Ա: «Ոչ, երկար տարիներ է գիտեմ պարոն Մեհրաբյանին, և մի քանի անգամ նա ինձ ասել է, որ ատում է BMW մակնիշի մեքենաները և երբեք դրանք չէր վարի»: «Ոչ»* բառը նրա պատասխանի միակ մասն է, որը պատասխանում է հարցին: Հակառակ կողմը պետք է անի հետևյալ առարկությունը. «Առարկում եմ պատասխանի՝ «ոչ» բառին հաջորդող մասի դեմ»: Եթե դատավորն ընդունում է առարկությունը, պաշտպանը պետք է ներկայացնի միջնորդություն առ այն, որ պատասխանի համապատասխան մասը չընդունվի և չդրվի դատավճռի հիմքում:

Զարմանալի է, որ շատ փաստաբաններ դրանից հետո այնպիսի հարց չեն տալիս, որով կկարողանային ետ՝ դեպի վկայի ցուցմունք վերադարձնել պատասխանի՝ դատավարության արձանագրությունից հանված մասը:

3. Հիմքի բացակայություն

Մի քանի առիթներ կան, երբ կարելի է վկայի պատասխանի դեմ այս առարկությունն անել.

Հարց. «Քայլու՞մ էիք արդյոք Ազատության պողոտայով 2010թ-ի հուլիսի 14-ին»:

Պատասխան: «Դա այն օրն էր, երբ Աշոտն այնտեղի բանկը կողոպտեց»:

Հարցը լավն է, դատախազը հիմք է նախապատրաստում՝ սկսելով նրանից, որ վկային ճիշտ տեղում է դնում: Պատասխանը հիմք չունի, քանի որ այդ պահին վկայի ցուցմունքի մեջ չկա մի բան, որը ցույց կտար, որ նա Ազատության պողոտայի վրա ճիշտ տեղում էր, ճիշտ ժամանակին, որ նա տեսել է որևէ բան կամ այնպիսի դիրքում է եղել, որտեղից կարող էր որևէ բան տեսնել… Քանի որ այս պահին մեր իմացած ամբողջ տեղեկությունը, որ նա տալիս է, գալիս է իր ընկերոջից և դա հաստատող որևէ ապացույց չկա…

Մյուս օրինակը վերաբերում է մասնագիտական գիտելիքների: Օրինակ.

Հարց. «Ձեզ հայտնի՞ է որևէ բան 2010թ-ի օգոստոսի 30-ին Քոչարի 19 հասցեում տեղի ունեցած հրդեհի մասին»

Պատասխան. «Այո, դա միտումնավոր հրդեհում էր, որի արդյունքում տունը գետնին էր հավասարվել»:

Պաշտպանը կմիջնորդեր ասվածից որևէ բան չընդունել, քանի որ պատասխանը հիմք չունի: Դեռևս ոչինչ չկա, որը ցույց կտար, որ այս վկան ունի մասնագիտական գիտելիքներ իմանալու համար, որ դիտավորյալ է հրդեհվել, իսկապես, այս պահին որևէ բան չկա, որը կհաստատեր անգամ այն, որ նա տեսել է տունը: Որքանով որ բոլորը տեղյակ են, վկան հրդեհի մասին կարդացել է լրագրում և այն, որ դա դիտավորյալ հրդեհում է եղել, նա նույնպես այնտեղից է իմացել: Պատասխանը ոչ պատշաճ է նաև այն հիմքով, որ «այո» բառից հետո ասվածը չպատասխանող պատասխան է:

4. Կարծիք

Փորձագետներից բացի մնացած բոլոր վկաները հրավիրվում են փաստեր ներկայացնելու: Ուստի, եթե, օրինակ, վկային հարց են տալիս, թե ինչ է անձն անելիս եղել կողոպտվող բանկից դուրս, հարցը լավն է, քանի դեռ այն որոշակի է ժամանակի, ամսաթվի և տեղի առումով: Սակայն, եթե վկան պատասխանում է «Այո, նա տեղանքն էր հսկում», այդ պատասխանը վկայի կարծիքն է այն բանի վերաբերյալ, թե ինչ էր անում այդ մարդը: Պատշաճ պատասխանը պետք է սահմանափակվի փաստերով: *«Նա անընդհատ իր շուրջն էր նայում: Քայլում էր դեպի բանկի դիմացի մասը և նայում երկու կողմերը, հետո ետ էր գնում և անում նույնը»:* Մյուս կողմից, եթե վկան ոստիկանության փորձառու սպա է, ում գիտելիքներն ու փորձը բացահայտվել են դատախազի կողմից, ով ուսումնասիրել է սպայի փորձը տեղանքը հսկողի դեր կատարող՝ բանկի կողոպտիչների կողմից դրսևորվող վարքագծի հետ, նա կարող է իր կարծիքը հայտնել առ այն, որ իր փորձի վրա հիմնված ինքը կարծում է, որ անձը տեղանքն է հսկելիս եղել:

Այն բանից հետո, երբ հաստատվում է փորձագետի համապատասխան որակավորումը, կամ երբ նրա նշանակումից հետո դատարանը կայացնում է այդպիսի որոշում, փորձագետը կարող է իր մասնագիտական գիտելիքների շրջանակներում կարծիք հայտնել: Վկայությունը, որը եզրակացություններ է տալիս նույնն է ինչ կարծիքը: Այսպիսով, ոստիկանը կարող է ասել, որ տուժողի վրա կրակել են, բայց միայն դատաբժիշկ փորձագետը կարող է ներկայացնել եզրակացություն առ այն, որ տուժողն այդ կրակոցից է մահացել:

Եզրափակիչ մտքեր

Ինչպես դատաքննության մի շարք հարցերի, այնպես էլ այն բանի վերաբերյալ, թե երբ պետք է պաշտպանն առարկություն անի, խստորեն սահմանված կանոններ չկան: Պատշաճ կերպով առարկություն անելը ժամանակ և փորձ է պահանջում, իսկ Հայաստանի դեպքում դատավորներից էլ է որոշ ժամանակ պահանջվում, որպեսզի հարմարվեն դրանց:

ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐ

Ցուցանմուշը դա մի բան է, որը դատավորը կարող է տեսնել, լսել, կամ որի հոտը կարող է զգալ: Լավ ցուցանմուշը կարող է շատ զորեղ ազդեցություն ունենալ դատավորի վրա: Այն կարող է մի այնպիսի ճանապարհով մի այնպիսի միտք ներկայացնել, որն անելն անհնար է ցուցմունքի միջոցով: Օրինակ՝ մահու չափ ծեծված մարդու նկարը շատ ավելի հուզիչ է, քան պարզապես նկարագրելը, թե ինչպիսի տեսք է ունեցել տուժողը: Աղյուսակի միջոցով ներկայացրած տեղեկությունն ավելի հեշտ ըմբռնելի է, քան վկայի կողմից ներկայացված թվերի կամ անունների շարքը: Ինչ վերաբերում է փաստաթղթերին, ինչպես օրինակ նամակներին, բանկային հաշիվներին և նման այլ բաներին, դրանք առավել արժանահավատ են, քան վկան, քանի որ դրանք, եթե իհարկե կեղծված չեն, չեն խաբում և չունեն թերի հիշողություն: Իմ դատական գործերով դատաքննություններից (իսկ իմ բոլոր գործերով դատաքննությունները երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատաքննություններ են եղել) ես եկել եմ այն եզրակացության, որ երդվյալ ատենակալները հակված են ավելի շատ հիմնվել փաստաթղթի, քան վկայի ցուցմունքի վրա, եթե երկուսն էլ վերաբերում են նույն եղելությանը: Պատճառ չկա մտածելու, որ Հայաստանի դատավորները որևէ այլ կերպ կտարբերվեն:

Ցուցանմուշները նաև մի այսպիսի առավելություն ունեն. դրանք կենտրոնացնում են դատավորի ուշադրությունը այն մտքի վրա, որը փաստաբանը ցանկանում է ներկայացնել այնպես, ինչպես վկայի ցուցմունքը հազվադեպ է կարողանում անել: Ցուցանմուշի օգտագործումը բանավոր ցուցմունքի հետ մեկտեղ տեղեկությունը ներկայացնելու երկու ճանապարհ է տալիս փաստաբանին: Ինչպես ավելի վաղ է նշվել ձեռնարկում, հոգեբանական թեստերը ցույց են տվել, որ միաժամանակ տեսնելու և լսելու համակցված ազդեցությունը երկու անգամ ավելի մեծ է, քան միայն մի զգայարանի օգտագործման ազդեցությունը:

Ցուցանմուշների կիրառման ստորև ներկայացված կարգը կիրառվում է Միացյալ Նահանգների դաշնային շրջանային դատարաններում, որոնք դաշնային համակարգում առաջին ատյանի դատարաններ են, որտեղ դատաքննություններ են անցկացվում:

A. Այնպես անել, որ ցուցանմուշը որպես ապացույց ընդունվի

Գոյություն ունի ցուցանմուշների երկու կիրառություն: Ամենաարժեքավորն այն է, որ այնպես անեք, որ ցուցանմուշը որպես ապացույց ընդունվի: Երկրորդ կիրառությունը պարզապես բացման խոսքում կամ դատական վիճաբանությունների ժամանակ դատավորի համար որևէ բան հստակեցնելն է: Երկուսն էլ իրենց արժեքն ունեն, սակայն որոշում կայացնելիս դատավորը իր որոշումը կարող են հիմնել միայն այն ցուցանմուշների վրա, որոնք ընդունվել են որպես ապացույց: Ուստի, ձեռնարկի՝ ցուցանմուշների վերաբերյալ հատվածը հիմնականում զբաղված կլինի ցուցանմուշներով, որոնք փաստաբանը պլանավորում է որպես ապացույց ընդունել տալ:

Ցուցանմուշը որպես ապացույց ընդունել տալը, ինչպես որ դատաքննության մյուս մասերը, պահանջում են մինչդատական նախապատրաստում: Փաստաբանը ոչ միայն պետք է որոշի, թե ինչ իրեր է ներկայացնելու որպես ցուցանմուշ, այլև պետք է համոզվի, որ ունի անհրաժեշտ վկաներ, որոնք կարող են հաստատել դրանք: Գերազանց ցուցանմուշը, որը սակայն չի կարող ընդունվել որպես ապացույց, ժամանակի և փողի անիմաստ վատնում է: Փաստաբանը նաև պետք է որոշի, թե դատաքննության ժամանակ երբ է ցանկանում առաջարկել, որ ցուցանմուշը որպես ապացույց ընդունվի: Եվ վերջապես, փաստաբանը պետք է վկայի մինչդատական նախապատրաստման մի մասը հատկացնի այն վկայի նախապատրաստմանը, ով հաստատելու է ցուցանմուշները և ցանկացած այլ վկաների նախապատրաստմանը, ովքեր քննարկելու են դրանք:

1. Համարակալեք ցուցանմուշները

Միակ ճանապարհը, որ դատավորը և դուք կարողանաք համընթաց հետևել ցուցանմուշների ներկայացմանը՝ ցուցանմուշները համարակալելն է, օրինակ՝ «Մեղադրանքի ցուցանմուշ 1» կամ «Պաշտպանական ցուցանմուշ Ա»: Կարևոր չէ՝ թվեր կօգտագործեք, թե տառեր, միայն այնպես արեք, որ դուք և դատավորը իմանաք, թե ինչի մասին է խոսվում, երբ հղում է կատարվում ցուցանմուշի: Լավագույն տարբերակը համարակալումը դատաքննությունից առաջ անելն է: Նախ՝ ավելի դյուրին է և դատավորի մոտ թողնում է տպավորություն, որ պատրաստվել եք: Նախընտրելի է ցուցանմուշների համարակալումն այնպիսի հերթականությամբ անել, որով դրանք ներկայացնելու եք դատաքննության ընթացքում:

2. Ցույց տվեք ցուցանմուշը հակառակ կողմին

Դատաքննության ժամանակ փաստաբանը պետք է ցուցանմուշը ցույց տա հակառակ կողմին մինչև այն որպես ապացույց ընդունելու միջնորդություն ներկայացնելը: Սա հակառակ կողմին հնարավորություն է տալիս անել ցանկացած առարկություն, որ նա ցանկանում է անել: Հետո պետք է հակառակ կողմին այն ուսումնասիրելու համար ողջամիտ ժամանակ տալ:

«Ներկայացնում եմ պաշտպանական կողմի ___ ցուցանմուշը »:

3. Դատավորից թույլտվություն խնդրեք վկային մոտենալու համար

Մեծամասամբ փաստաբանը ստիպված է լինում ցուցանմուշը ցուցադրել վկային: Անհրաժեշտության դեպքում նա պետք է փորձի ստանալ դատավորի թույլտվությունը վկային մոտենալու համար: Սա քաղաքավարության դրսևորում է, որով ցույց է տրվում, որ դատավորը վերահսկում է իրավիճակը դատական նիստերի դահլիճում: Թույլտվություն խնդրելու պատշաճ ձևը հետևյալն է.

«Թույլ կտա՞ք մոտենալ վկային»:

4. Ցույց տվեք ցուցանմուշը վկային

Որպեսզի կարողանաք ձեր ճառում հղում կատարել ցուցանմուշին և հիմնվել դրա վրա, նախ պետք է այնպես անեք, որ այն ապացույց ընդունվի: Ուստի, նախ և առաջ այնպես արեք, որ դատարանը թույլատրելի համարի ցուցանմուշը:

5. Հիմք պատրաստեք ցուցանմուշի համար

Սրա մեջ մտնում է հաստատելը, թե ինչու ցուցանմուշը կարող է քննարկվել և ընդունվել: Ձեռնարկում՝ ստորև ավելի մանրամասն անդրադարձ կարվի սրան:

6. Առաջարկեք, որ ցուցանմուշն ընդունվի որպես ապացույց

Մինչ վկան կկարողանա քննարկել ցուցանմուշը, այն պետք է ընդունվի որպես ապացույց: Այստեղ փաստաբանի աշխատանքը հիմնականում կայանում է նրանում, որ հիմնավորի, որ ցուցանմուշը որպես ապացույց ընդունվելու բոլոր պահանջներին բավարարում է, և հիմք պատրաստի դատավորի որոշման համար: Եթե հակառակ կողմն ունի որևէ առարկություն, ապա սա այդ առարկությունն անելու վերջին հնարավորությունն է: Եթե դատավորն ընդունում է հակառակ կողմի առարկությունը, ապա այլևս դրա վերաբերյալ հարցեր չեն կարող տրվել վկային: Եթե առարկություններ չկան, կամ դրանք մերժվում են, փաստաբանը կարող է սկսել հարցաքննել վկային ցուցանմուշի վերաբերյալ: Ահա թե ինչպես պետք է առաջարկն անել. *«Առաջարկում եմ, որ պաշտպանական կողմի ցուցանմուշ 3-ն ընդունվի որպես ապացույց»:*

Դատավորը հարցնում է հակառակ կողմին՝ արդյոք նա որևէ առարկություն ունի՞, թե ոչ: Եթե առարկություններ չկան կամ մերժվել են դատավորի կողմից, ապա ցուցանմուշը կընդունվի:

Հիմք պատրաստելը

Հիմք պատրաստել նշանակում է հաստատել, որ ցուցանմուշը վավեր է, որ դա հենց այն է, ինչպիսին փաստաբանն այն ներկայացնում է: Սա անելու համար ունենք հետևյալ երեք պահանջները.

(1) Վկան պետք է իրավասու լինի այն քննարկել: Այլ կերպ ասած, նա պետք է ծանոթ լինի դրան և ի վիճակի լինի այն քննարկել:

(2) Այն, ինչպես և դատաքննության ցանկացած այլ բան, պետք է վերաբերելի լինի:

(3) Այն պետք է իսկական լինի:

Ստորև բերված է հիմք պատրաստելու մի օրինակ: Ձեռնարկի հետագա բաժիններում կներկայացվեն ցուցանմուշների որոշակի տեսակներ:

Q: Վկա Սերոբյան, ձեզ եմ ներկայացնում այն, ինչ նշված է որպես պաշտպանական կողմի ցուցանմուշ 1, այն ձեզ ծանո՞թ է :

A: Այո:

Q: Ի՞նչ է այն:

A: Այն նամակ է Գևորգ Հակոբյանից ուղղված Աննա Լալայանին, որն ուղարկվել է 2010թ-ի փետրվարի 23-ին:

Q: Ձեզ ծանո՞թ է պարոն Հակոբյանի ստորագրությունը: A: Այո:

Q: Կարո՞ղ եք ասել դատարանին, թե ինչպես է պատահել, որ ճանաչում եք նրա ստորագրությունը:

A: 10 տարի նրա մոտ քարտուղար եմ աշխատել և տեսել եմ, թե ինչպես է ստորագրում բազմաթիվ փաստաթղթեր:

Q: Ու՞մ ստորագրությունն է դրված ցուցանմուշի ստորին հատվածում:

A: Պարոն Հակոբյանինը»:

Քայլերը, որոնց պաշտպանը հետևեց, ներառեցին ցուցանմուշի ճանաչումը (դրա վերաբերելիությունը պետք է հաստատված լինի ավելի վաղ դատաքննության ժամանակ տրված վկայությամբ կամ փաստաբանի կողմից այն որպես ապացույց ընդունելու միջնորդությամբ): Վկան նախ հաստատում է իր իրավասությունը՝ բացատրելով, թե որտեղից գիտի պարոն Հակոբյանի ստորագրությունը և միայն դրանից հետո է ցուցմունք տալիս առ այն, թե ում ստորագրությունն է նամակի ստորին հատվածում:

C. **Ապացույցի առանձին տեսակները և ինչպես ներկայացնել դրանք**

Ապացույցները բաժանվում են չորս կատեգորիայի: Ինչպես ստորև կներկայացվի, կատեգորիաներից յուրաքանչյուրը որպես ապացույց ընդունելու գործընթացը որոշ չափով տարբերվում է.

1. Իրեղեն ապացույց

Այս կատեգորիայի մեջ մտնում են այնպիսի բաներ, ինչպիսիք են հրազենը, թմրամիջոցները, հագուստը, սերմնահեղուկը կամ ցանկացած այլ բան, որը նյութեղեն է:

2. Ցուցադրական առարկաներ

Սրանք այն ցուցանմուշներն են, որոնք ցույց են տալիս ինչ-որ բան, բայց իրենք ինքնին առարկա չեն: Այս տեսակի ապացույցի օրինակներ են լուսանկարները, մոդելները, քարտեզները, նկարչի կողմից արված գծանկարները կամ համակարգչային աղյուսակները:

3. Փաստաթղթեր

Սրանք այնպիսի փաստաթղթեր են, ինչպիսիք են նամակները, պարտավորագրերը և պայմանագրերը: Որպեսզի այս փաստաթղթերն ընդունվեն, անհրաժեշտ է, որ ստորագրությունները հաստատվեն, ինչպես որ վերոհիշյալ օրինակում՝ այդպիսով ապացուցելով, որ փաստաթուղթն իրական է:

4. Կազմակերպությունների ներքին փաստաթղթեր

Սրանք այն աշխատանքային զեկույցներն են, որոնք սովորաբար պահվում են բիզնեսների կողմից, ինչպես օրինակ բաժնետիրական արձանագրությունները, բանկային քաղվածքները և այլն: Սրա մեջ կարող են մտնել այնպիսի բաներ, ինչպիսիք են նամակագրությունը, կորպորացիաների զեկույցները և ֆինանսական զեկույցները, հաշիվ-ապրանքագրերը և բեռնափոխադրման փաստաթղթերը, հեռախոսային խոսակցության ձայնագրությունները, կտրոնները կամ ցանկացած այլ տեսակի զեկույց, որը պահվում է որոշակի բիզնեսի կողմից:

5. Իրեղեն ապացույցի ընդունումը

Գոյություն ունի իրեղեն ապացույցի երկու տեսակ: Առաջինի մեջ մտնում են իրենց տեսակով եզակի բաներ, ինչպիսիք են եզակի նկարը, անսովոր մատանին, սերիական համարով հրազենը: Երկրորդ տեսակի մեջ մտնում են փոխարինելի առարկաներ, այլ կերպ ասած այնպիսի առարկաներ, որոնք եզակի չեն, ինչպես օրինակ դեղերը, արյունը և անմշակ թանկարժեք քարերը: Առաջին տեսակը որպես ապացույց ընդունել տալն ավելի դյուրին է: Ահա մի օրինակ.

Q: Վկա Նիկողոսյան, արդյո՞ք դուք եք գտել տուժող Սերգեյ Հարությունյանին դին:

A: Այո:

Q: Երբ գտաք դին, արդյո՞ք տեսաք որևէ բան, որը ընկալեցիք որպես սպանության զենք:

A: Այո: Նրա մեջքին դանակ կար խրված:

Այնուհետև փաստաբանը ցուցանմուշը ցույց է տալիս հակառակ կողմին և վկային մոտենալու թույլտվություն է խնդրում դատավորից.

Q: Այժմ ներկայացնում եմ ձեզ այն, ինչ նշված է որպես մեղադրական ցուցանմուշ 1: Այն ձեզ ծանո՞թ է:

A: Այո: Կնքված պոլիէթիլենային տոպրակում գտնվող դանակն այն դանակն է, որը խրված էր տուժող Հարությունյանի մեջքին: Կնիքի վրա Ալբերտ Գևորգյանի անունն է:

Q: Ինչու՞ եք մտածում, որ դա հենց այն դանակն է, որը տեսել եք տուժողի մեջքին:

A: Դանակն ունի ոսկե բռնակ և սղոցաձև շեղբ: Բայց ամենակարևորն այն է, որ բռնակի վրա կարող եք տեսնել, որ անվանս առաջին տառն ու ամսաթիվն եմ փորագրել:

Q: Դանակը նույն վիճակու՞մ է, ինչ-որ առաջին անգամ եք այն տեսել:

A: Դե, բռնակի վրա մնում են անվանս առաջին տառերն ու ամսաթիվը, բայց, կարծես թե, արյան որոշ մասը բռնակից ու շեղբից անհետացել է:

Q: Դա չհաշված արդյո՞ք այն նույն վիճակում է:

A: Այո:

Q: Առաջարկում եմ մեղադրանքի ցուցանմուշ 1-ն ընդունել որպես ապացույց:

Վերոհիշյալ ցուցմունքում կարող եք տեսնել, թե ինչպես է մեղադրողն առաջ ընթանում անհրաժեշտ քայլերով, որպեսզի այնպես անի, որ ցուցանմուշն ընդունվի: Նախ՝ նա ցույց տվեց վերաբերելիությունը, հաստատեց, որ վկան իրավասու է ցուցմունք տալ՝ հաստատելով, որ նա այն անձն է, ով հայտնաբերել է մարմինը: Նա հաստատեց, որ ցուցանմուշը վերաբերելի է, երբ վկան ասաց, որ դա այն դանակն է, որը խրված է եղել տուժողի մեջքին: Մեղադրողն այնպես արեց, որ վկան ցույց տա, որ գիտի, թե ցուցանմուշն ինչպիսի տեսք է ունեցել համապատասխան ժամանակ և որ այն հիմնականում անփոփոխ է դատաքննության ժամանակ: Նա այնքան լավ էր հիշում դանակի տեսքը, որ կարողացավ առկա տարբերությունը բացատրել: Ուշադրություն դարձրեք այն փաստի վրա, որ հավանաբար բազմաթիվ դանակներ կան, որոնք նման կլինեին ցուցանմուշին: Առանց վկայի անվան առաջին տառերի կամ որևէ այլ տարբերակիչ բանի դանակն ընդունելի չէր լինի, քանի որ վկան չէր կարողանա տարբերել այն նմանատիպ այլ դանակներից: Առանց տարբերակիչ հատկանիշների պաշտպանը կառարկեր դրա ընդունման դեմ, ինչն էլ իր հետագա ազդեցությունը կունենար դրա նկատմամբ կատարված հետազոտությունների առումով:

Հաջորդ օրինակում, որը ներառում է դանակի վրայի արյան հետազոտում, ոստիկանության սպան կներկայացնի, թե ինչ միջոցներ է ձեռնարկել ապացույց հանդիսացող արյունը պահպանելու համար: Նախ՝ դանակի փաթեթավորումն ու կնքումը: Այս քայլը կարևոր է, քանի որ այն թույլ չի տալիս, որ արյունը խառնվի այլ արյան հետ կամ կորչի: Չնայած դանակի կնքումն ինքն իրենով լավ պրակտիկա է, այն որոշիչ չէ դանակի որպես ապացույց ընդունման հարցում, քանի դեռ վկան կարող է ճանաչել դանակը, այս դեպքում՝ անվան սկզբնատառերի միջոցով: Սակայն, չկնքելը խնդիր կառաջացներ որոշելիս, թե ում արյունն է եղել դանակի վրա:

Մյուս ցուցմունքը վերաբերում է արյանը, որը հայտնաբերվել է դանակի վրա: Այն դեպքում, երբ մեղադրողն առնչվում է փոխարինելի առարկաների հետ, ինչպես օրինակ արյան կամ դեղերի, նրանից պահանջվում է ցույց տալ, որ այն առարկան, որի վերաբերյալ ցուցմունք է տրվում, նույն առարկան է, որն ընդգրկված է վարույթում: Փոխարինելի առարկան մի առարկա է, որն իր վրա չունի տարբերակիչ հատկանիշներ՝ տարբերակելու համար այն այլ նմանատիպ առարկաներից: Օրինակ՝ սպիտակ փոշենման զանգվածները հիմնականում նույն տեսքն ունեն: Մեղադրողը պետք է հաստատի, որ սպիտակ փոշենման զանգվածը, որն ինքը փորձում է որպես ապացույց ներկայացնել, նույն փոշենման զանգվածն է, որը հայտնաբերվել է մեղադրյալի մոտ: Այն դեպքում, երբ փոխարինելի առարկան հետազոտվել է, անհրաժեշտ է հաստատել, որ հետազոտվել է, օրինակ, նույն սպիտակ փոշենման զանգվածը, ինչը որ առգրավվել է մեղադրյալից: Երբ առաջարկվում է, որ փոխարինելի առարկան կամ դրա հետազոտման վերաբերյալ ցուցմունքը որպես ապացույց ընդունվի, մեղադրողը պետք է հաստատի դրա "պահպանման շղթան": Պահպանման շղթան ցույց է տալիս, թե ամբողջ ընթացքում որտեղ է առարկան եղել, ինչպես նաև ինչպիսի վիճակում է եղել, որպեսզի դատավորն իմանա, որ դա կոնկրետ առարկան է իր սկզբնական վիճակում, կամ թե ինչ փոփոխության է այն ենթարկվել: Ստորև ներկայացված է ցուցմունք, որը վերաբերում է վերոհիշյալ սպանության գործին.

Q: Դանակը հայտնաբերելուց հետո ի՞նչ արեցիք դրա հետ:

A:Դրեցի այն պոլիէլիթենային տոպրակի մեջ և կնքեցի:

Q: Կարո՞ղ եք նկարագրել կնիքը, որն օգտագործել եք:

A: Բաժնի կողմից օգտագործվող ստանդարտ կնիք էր, փաթեթը չէր կարող բացվել առանց կնիքը վնասվելու: Ես նաև ստորագրություն դրեցի կնիքի վրա, որպեսզի եթե անգամ որևէ մեկը բացի այն, ստորագրությունս չկարողանա փոխարինվել:

Q: Ի՞նչ արեցիք այն կնքելուց հետո:

A: Բերեցի Քննչական կոմիտե և դրեցի հատուկ սառնարանում, որտեղ պահում ենք այն ցուցանմուշները, որոնք սառը վիճակում պետք է պահվեն: Այնտեղի պատասխանատու ոստիկանության սպան ինձ ստացական տվեց:

Q: Ինչու՞ սառնարանում:

A: Որովհետև գիտեի, որ դանակի վրայի արյունը հետազոտության պետք է ենթարկվի և որպեսզի հետազոտությունը վավեր լինի, անհրաժեշտ է արյան նմուշները սառը վիճակում պահել:

Այնուհետև դատախազը ներս է հրավիրում փորձագետ քիմիկոսին՝ Անժելա Զաքարյանին: Այն բանից հետո, երբ հաստատվում է նրա որակավորումը որպես քիմիկոս, ով արյան հետազոտման վերաբերյալ վերապատրաստում է անցել, ինչպես նաև հաստատվում է նրա՝ արյան այդպիսի հետազոտություններ անելու փորձը, տրվում է հետևյալ ցուցմունքը.

“ Q: 2010թ-ի հոկտեմբերի 6-ին Քննչական կոմիտեի ապացույցների սենյակ գնալու առիթ ունեցե՞լ եք:

Q: Այո:

Q: Ինչու՞ եք գնացել այնտեղ:
A: Քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշում էր կայացրել և ինձ տեղեկացրել, որ փորձաքննության ենթակա դանակը գտնվում է ապացույցների սենյակում: Անհրաժեշտ էր հետազոտել դրա վրայի արյունը:

Q: Երբ տեսաք դանակը, ինչպիսի՞ վիճակում էր այն:

A: Այն կնքված պոլիէթիլենային տոպրակի մեջ էր, իսկ կնիքի վրա ոմն քննիչ Ալբերտ Գևորգյանի ստորագրությունն էր դրված: Դանակի բռնակը և շեղբը պատված էին արյունով:

Q: Ինչպիսի՞ վիճակում էր տոպրակը, արդյո՞ք այն որևէ կերպ վնասված տեսք ուներ:

A: Ոչ:

Q: Տոպրակը վերցնելուց հետո այն ու՞ր տարաք:

A: Ոստիկանության լաբորատորիա:

Q: Լաբորատորիա տանելուց հետո այն ի՞նչ արեցիք:

A: Կտրեցի կնիքը և դանակի շեղբի և բռնակի տարբեր հատվածներից արյան նմուշներ վերցրի:

Q: Նմուշներից յուրաքանչյուրն առանձի՞ն պիտակավորեցիք:
A: Այո, առանձին-առանձին պիտակավորեցի՝ նշելով, թե դրանցից յուրաքանչյուրը դանակի որ հատվածից է վերցված: Նաև համարակալեցի դրանք 1-10, որպեսզի կարողանամ տարբերակել դրանք:

Q: Նմուշները վերցնելուց հետո ի՞նչ արեցիք դանակի հետ:
A: Այն նոր տոպրակի մեջ դրեցի, կնքեցի և ստորագրեցի կնիքը:

Q: Իսկ արյան նմուշնե՞րը, դրանք ի՞նչ հետազոտության ենթարկեցիք:
A: Հետազոտության նպատակն էր որոշել՝ արդյոք նույն տեսակի արյանն են պատկանում նմուշները, թե ոչ :

Q: Ի՞նչ ցույց տվեցին արդյունքները:

A: Արդյունքները ցույց տվեցին, որ դանակի վրա երկու տեսակի արյան հետքեր կան: Մեկը O դրական, մյուսը AB դրական:

Q: Հետազոտության արդյունքները ամփոփելուց հետո ի՞նչ արեցիք նմուշների հետ:

A: Դրանցից յուրաքանչյուրն առանձին պոլիէթիլենային տոպրակի մեջ դրեցի, կնքեցի և կնիքի վրա անունս գրեցի:

Q: Հետազոտությունն ավարտելուց հետո ի՞նչ արեցիք դանակի և արյան նմուշների հետ:

A: Դանակը վերադարձրի սառեցման բաժին, իսկ արյան նմուշները պահեցի ոստիկանության լաբորատորիայի սառեցման բաժնում:

Այս վկայի ցուցմունքն ավարտին է հասցնում պահպանման շղթան: Նա ցույց տվեց, որ իրեն տվել են այն դանակը, որը ոստիկանը փաթեթավորել է, և դանակի հետ կապված իր գործն ավարտելուց հետո դրել է այն մի նոր տոպրակի մեջ, կնքել այն և ստորագրել կնիքը: Դատաքննության ժամանակ ոստիկանը ցուցմունք տվեց կնիքի վրայի անվան առնչությամբ: Նա նաև հաստատեց, որ արյունը, որ նա հետազոտել է, դանակի վրայի արյունից է եղել և որ դա նույնպես կնքվել է: Ենթադրաբար ցուցմունքի մնացած մասում նա ասել է, որ իր կատարած հետազոտությունների, ինչպես նաև տուժողի և ենթադրյալ սպանության արյան տեսակների վերաբերյալ զեկույց է կազմել: Եթե, օրինակ, այլ անձի կողմից արյան լրացուցիչ հետազոտություն է

արվել ԴՆԹ ապացույց ձեռք բերելու համար, ապա այդ անձը պետք է ցուցմունք տա առ այն, որ նմուշները ստացել է կնքված տոպրակներով, որոնց վրա եղել է Անժելա Զաքարյանի ստորագրությունը:

Ցուցադրական ապացույց

Ցուցադրական ապացույցի ամենատարածված տեսակը, որն օգտագործվում է դատաքննությունների ժամանակ, լուսանկարն է: Ահա մի օրինակ, որով ցույց է տրվում, թե ինչ պետք է անել, որ լուսանկարը որպես ապացույց ընդունվի:

Q: Ձեզ ծանո՞թ է Ազատության պողոտայի և Ներսիսյան փողոցի խաչմերուկի հատվածը:

A: Այո:

Q: Որքա՞ն հաճախ եք այդ ճանապարհահատվածում լինում:
A: Ամեն օր այդտեղով եմ աշխատանքի գնում և աշխատանքից վերադառնում»:

Q: Որքա՞ն ժամանակ է, որ այդտեղով եք քայլում:

A: Վերջին չորս տարին:

Q: Տեղյա՞կ եք, թե այդ ճանապարհահատվածն ինչ տեսք է ունեցել 2010թ-ի հուլիսի 14-ին:

A: Այո:

Ցուցանմուշը հակառակ կողմի պաշտպանին ցույց տալուց և դատարանից վկային մոտենալու թույլտվություն ստանալուց հետո.

Q: Այժմ ճանաչման համար ձեզ ցույց եմ տալիս այն, ինչ նշված է որպես Պաշտպանական ցուցանմուշ 2: Խնդրում եմ ուսումնասիրել այն, իսկ հետո խնդրում եմ ասել դատարանին, թե դա ինչ է:

A: Սա Ազատության պողոտայի և Ներսիսյան փողոցի խաչմերուկի լուսանկարն է:

Q: Արդյո՞ք այն ճշգրտորեն և անկողմնակալորեն ներկայացնում է, թե այդ ճանապարհահատվածը ինչ տեսք է ունեցել 2010թ-ի հուլիսի 14-ին:

A: Այո:

Q: Խնդրում եմ Պաշտպանական ցուցանմուշ 2-ն ընդունել որպես ապացույց:

Ուշադրություն դարձրեք բոլոր այն քայլերին, որոնց հետևեց պաշտպանը: Նախ՝ նա հաստատեց, որ վկան իրավասու է վկայություն տալ լուսանկարում արտացոլված ճանապարհահատվածի վերաբերյալ: Բանկի կողոպուտի վերաբերյալ ավելի վաղ տրված ցուցմունքով Ազատության պողոտայի այդ հատվածի վերաբերելիությունն արդեն իսկ հաստատվել է: Ճանաչման համար առաջին անգամ ցուցանմուշը վկային ներկայացնելուց առաջ պաշտպանն այն համարակալել էր այն տարբերակելու և դատարանի արձանագրությունում դրան հղում կատարելու համար: Այնուհետև նա այնպես արեց, որ վկան ընդունի, որ լուսանկարը համապատասխան ճանապարհահատվածի համապատասխան ամսաթվի ճշգրիտ և անկողմնակալ արտացոլումն է: Միայն այդ ամենից հետո պաշտպանն անցավ այն որպես ապացույց ընդունելու խնդրանքին: Այլ կերպ ասած, նախ և առաջ պաշտպանը պետք է հիմնավորի, որ ցուցանմուշը վերաբերելի է՝ մինչ դրա առանձին հատվածների վերաբերյալ հարցեր տալը, օրինակ, թե որտեղ է կանգնած եղել վկան: Հիմնավորելուց հետո փաստաբանը պատշաճ կերպով ստիպում է դատարանին ընդունել ցուցանմուշը և հետո սկսում է հարցաքննությունը:

Գծանկարի դեպքում էլ գործընթացը նույնն է: Պարտադիր չէ, որ վկան արած լինի գծանկարը կամ լուսանկարը, կարևորն այն է, որ այն ճշգրտորեն և անկողմնակալորեն արտացոլի դեպքի վայրը հանցանքի կատարման օրը:

Ձայնագրություններ և տեսաձայնագրություններ

Որոշ գործեր ներառում են ձայնագրություններ, ինչպես օրինակ՝ գաղտնի ձայներիզային ձայնագրություն (ձայնագրություններ կամ տեսաձայնագրություններ), հեռախոսային ձայնագրություններ և այլն: Կան որոշակի քայլեր, որոնց պետք է հետևել այսպիսի ձայնագրություններ ներկայացնելու համար, այլապես դրանք անթույլատրելի կհամարվեն: Ձայնագրությունը ներկայացնող փաստաբանը պետք է հաստատի, որ ձայնագրման սարքը ձայնագրելիս սարքին վիճակում է եղել, որ ձայնագրություն կատարող անձն իրավասու է եղել դա անել, որ սարքն ամբողջ խոսակցության ընթացքում նորմալ կերպով ձայնագրել է, որ վկան լսել կամ տեսել է այն ամենը, ինչ ձայնագրվելիս է եղել, որ այնուհետև ձայներիզը վերանայվել է՝ համոզվելու համար, որ ամեն ինչ ճշգրտորեն և ամբողջությամբ ձայնագրվել է, որ ձայներիզն այնուհետև պահվել է այնպես, որ բացառվի որևէ հավելում, փոփոխություն կամ ջնջում և վերջապես, որ վկան կարող է ճանաչել ձայնագրությունում խոսող անձանց և ձայները, ինչպես նաև տեսաերիզի անձանց և վայրը: Որոշ դեպքերում պահանջվում է մեկից ավելի վկա ձայնագրությունը վավերացնելու համար:

Պարտադիր չէ դատաքննության ընթացքում ամբողջ ձայնագրությունը միացնել, եթե հակառակ կողմին տրվել է ձայնագրության ամբողջական տարբերակը և դատարանը տեղեկացվել է, որ նրան ամփոփ տարբերակն է ներկայացվել: Այս դեպքերում հակառակ կողմը կարող է միացնել ձայնագրության այն բացթողնված հատվածները, որոնք իր կարծիքով օգտակար կլինեն գործի համար և այդպիսով ձայնագրությունն իր ամբողջական համատեքստով ներկայացնել:

Ահա մի օրինակ, որտեղ մի վկայի միջոցով կներկայացվի օգտագործման պատշաճ մեթոդը.

Q: Վկա, 2010թ-ի դեկտեմբերի 20-ին հանդիպե՞լ եք մեղադրյալի հետ:

A: Այո:

Q: Ձայնագրե՞լ եք այդ հանդիպումը:

A: Այո:

Q: Ի՞նչ ձայնագրման սարք եք օգտագործել:

A: Sony M327 մինի ձայնագրիչ:

Q: Մեղադրյալի հետ հանդիպումից առաջ երբևէ օգտագործե՞լ եք նմանատիպ սարք: A: Այո, շատ անգամներ:

Q: Այդ սարքից օգտվելու վերաբերյալ վերապատրաստում անցե՞լ եք:

A: Այո, ոստիկանության տեխնիկական անձնակազմն ինձ դասեր է տվել:

Q: Հանդիպումից առաջ փորձարկե՞լ եք սարքը:

A: Այո, դա ստանդարտ ընթացակարգ է:

Q: Արդյո՞ք այն սարքին վիճակում էր:

A; Այո:

Q: Հանդիպումից առաջ որքա՞ն ժամանակ եք այն փորձարկել:

A: Երկու ժամ:

Q: Դու՞ք եք սարքը մեղադրյալի հետ հանդիպումից առաջ միացրել:

A: Այո:

Q: Հանդիպումից որքա՞ն ժամանակ առաջ:

A: Մոտավորապես 5 րոպե առաջ, ավտոմեքենայիցս դուրս գալուց անմիջապես առաջ:

Q: Հանդիպման ընթացքում որտե՞ղ է դրված եղել սարքը:

A: Այն կրծքավանդակիս մեջտեղի մասերում էի ամրացրել:

Q: Նախկինում փորձարկե՞լ կամ օգտագործե՞լ եք այդ սարքը նույն տեղում ամրացված: A: Այո, և այդպիսով կարողացել եմ ձայնագրել ողջ խոսակցությունը:

Q: Մեղադրյալի հետ հանդիպման ժամանակ սարքը երբևէ անջատե՞լ եք:

A: Ոչ:

Q: Հանդիպումից որքա՞ն ժամանակ հետո եք անջատել սարքը:

A: Հինգ րոպե հետո, մեքենաս նստելուց հետո:

Ցուցանմուշը պաշտպանին ցույց տալուց և դատավորից վկային մոտենալու թույլտվություն ստանալուց հետո հարցաքննությունը շարունակվում է.

Q: Խնդրում եմ միացնել ցուցանմուշը: Ձայնը, որ հիմա լսում ենք, առաջինը, ով ձայնագրության մեջ ասում է բարև, դա ո՞ւմ ձայնն է:

A: Մեղադրյալի:

Q: Իսկ մյուս ձայնը, որ պատասխանում է բարև, դա ո՞ւմ ձայնն է:

A: Իմ:

Q: Արդյո՞ք կան այլ ձայներ, որոնց կլսենք ձայնագրության մեջ: A: Այո, միջնամասերում կլսեք, թե ինչպես է մեղադրյալի կինը սենյակ մտնում և հարցնում՝ արդյոք ցանկանում ենք թեյ խմել: Դա ձայնագրության մեջ հանդիպող միակ կողմնակի ձայնն է:

Այն դեպքում, երբ կողմերը ձայնագրության մեջ օգտագործում են, օրինակ, այնպիսի ծածկաբառեր, ինչպիսիք են <<20կգ>>-ը <<20կգ հերոին>>-ի փոխարեն, ձայնագրությունը կարելի է ընդհատել և վկային խնդրել, որ բացատրի, թե դա ինչ է նշանակում: Նաև խոսակցության որոշակի հատվածներ շեշտելու նպատակով մեղադրողը կամ փաստաբանը կարող են ցանկություն ունենալ տալ հավելյալ հարցեր, ինչպես օրինակ՝ «Ինչու՞ ասացիք դա», որպեսզի այնպես անեն, որ վկան

ավելի շատ բացատրություն տա տեղի ունեցածի վերաբերյալ: Սա նաև խոսակցության հատկապես կարևոր մի հատված շեշտելու լավ ճանապարհ է:

D. Փաստաթղթեր

Սրանք այն փաստաթղթերն են, որ փաստաբանը ցանկանում է որպես ապացույց ընդունել տալ և որոնցում ձեռագիրը կարևորություն է ներկայացնում: Հիմքի պատրաստման վերաբերյալ բաժնի սկզբում ներկայացվել է օրինակ, որում ցույց է տրվում, թե ինչպես պետք է ներկայացնել այսպիսի փաստաթուղթը:

E: Կազմակերպությունների ներքին փաստաթղթեր

Փաստաբանը հիմնականում փորձում է աշխատանքային զեկույցները ներկայացնել դատաքննության ժամանակ: Միացյալ Նահանգներում այդ զեկույցներն ազատված են ասեկոսի կանոնից, եթե դրանք ստացվել են աշխատանքային նորմալ ընթացքի արդյունքում: Տրամաբանությունն այն է, որ դրանք պատրաստվել են առանց կեղծելու որևէ պատճառի: Եթե փաստաբանը կարծում է, որ դրանք կեղծ են, նա կարող է դատավորից թույլտվություն խնդրել հարցաքննելու վկային՝ նախքան դատավորը որոշում կկայացնի դրանց թույլատրելիության վերաբերյալ: Հակառակ կողմի պաշտպանը կարող է նաև ավելի ուշ իր գործում վկա հրավիրել հաստատելու համար, որ զեկույցները կեղծ են: Այդպիսի զեկույցներ ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ մեկին, ով կվկայի, որ դրանք ընկերության պաշտոնական զեկույցներն են: Այդ անձը պետք է լինի զեկույցների պատասխանատուն, բայց պարտադիր չէ, որ նա լինի այդ զեկույցները կազմողը: Իսկապես, մեծ ընկերություններում զեկույցները կազմվում են բազմաթիվ մարդկանց կողմից: Նա միայն պետք է վկայի, որ զեկույցներն իսկապես ընկերության զեկույցներն են: Դա կարելի է հետևյալ կերպ անել.

Q: Պարոն Արշակյան, որտե՞ղ եք աշխատում:

A: Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերությունում:

Q: Որպես ի՞նչ:

A: Փոխտնօրենի երրորդ օգնական:

Q: Այդ պաշտոնը զբաղեցնելով արդյո՞ք դուք հանդիսանում եք ընկերության զեկույցների պատասխանատուն:

A: Այո:

Զեկույցները հակառակ կողմին ցույց տալուց և դատավորի կողմից վկային մոտենալու թույլտվություն ստանալուց հետո.

Q: Ճանաչման համար ձեզ ներկայացնում եմ այն ինչ նշված է որպես Պաշտպանական ցուցանմուշ 2: Այն ձեզ ծանո՞թ է:

A: Այո, դրանք Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության գործարքների վերաբերյալ արձանագրություններն են:

Q: Ո՞ր տարիների:

A: 2009-2010թթ:

Q: Արդյո՞ք սրանք այն արձանագրություններն են, որոնք պահվում են Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության կողմից որպես նորմալ աշխատանքային ընթացքի արդյունք:

A: Այո:

Q: Միջնորդում եմ Պաշտպանական ցուցանմուշ 2-ն ընդունվել որպես ապացույց:

F. Ամփոփագրեր

Այս ձեռնարկում մեկնաբանվելիք ցուցանմուշների վերջին կատեգորիան ամփոփագիրն է: Երկար ժամանակահատվածում կատարված բեռնափոխադրումների վերաբերյալ զեկույցներից յուրաքանչյուրն առանձին-առանձին ներկայացնելը, մի շարք բանկային հաշիվներից գումարի հանման և ավանդների վերաբերյալ քաղվածքները կամ կտրոնները ներկայացնելը շատ ժամանակատար է, շփոթեցնող և ձանձրալի: Ընդհանրապես, փաստաբանին հետաքրքրում է ոչ թե առանձին գործարքների, այլ հանրագումարների ներկայացումը: Համաձայն Միացյալ Նահանգների՝ ապացույցի վերաբերյալ դաշնային կանոնագրքի 1006-րդ կանոնի, առանձին գործարքների ամփոփագիրը թույլատրելի է, եթե դատաքննությունից առաջ գործարքների վերաբերյալ ամբողջական տեղեկությունը ներկայացվել է հակառակ կողմի պաշտպանին: Քանի որ ամփոփագիրը կարող է ենթարկվել խաչաձև հարցաքննության, այն պատշաճ հիմք է դատավորի

որոշման համար: Ստորև ներկայացված է ամփոփագիրը որպես ապացույց ընդունել տալու պատշաճ ճանապարհը:

Q: Խնդրում եմ ճանաչման համար նայել Պաշտպանական ցուցանմուշ 8-ին:

A: Այո:

Q: Ի՞նչ է Պաշտպանական ցուցանմուշ 8-ը:

A: Դա 2010թ-ի հունվարի 1-ից մինչև 2010թ-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության բանկային հաշվեհամարում գումարի ելքերի և ավանդների վերաբերյալ ամփոփագիր է:

Q: Դու՞ք եք ցուցանմուշը կազմել:

A: Այո:

Q: Ասացեք խնդրում եմ, ցուցանմուշը կազմելիս ո՞րն էր առաջին քայլը, որ արեցիք: A: HSBC բանկից վերցրեցի Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության բոլոր բանկային քաղվածքները 2010թ-ի օրացույցային տարվա համար: Հետո աչքի անցկացրի քաղվածքները և դուրս հանեցի ընկերության՝ գումարի ելքի և ավանդների վերաբերյալ քաղվածքները:

Q: Ինչպես տեսնում եմ, ցուցանմուշ 8-ը երկու սյունակ ունի՝ մեկը վերնագրված է որպես ավանդներ, մյուսը՝ գումարի ելքեր, իսկ ձախ կողմում ամիսներն են ներկայացված: Խնդրում եմ բացատրել՝ ինչ են այս սյունյակները նշանակում և ինչպես եք որոշել, թե որ սյունակում ինչ թիվ գրել:

A: Գումարել եմ ավանդները յուրաքանչյուր ամսվա համար, իսկ հետո յուրաքանչյուր ամսվա հանրագումարը մտցրել եմ ցուցանմուշի մեջ: Նույնը արել եմ գումարի ելքերի համար: Դիագրամի ստորին հատվածի թվերը պարզապես վերը ներկայացված առանձին հաշիվների հանրագումարն է:

Q: Առաջարկում եմ Պաշտպանական ցուցանմուշ 8-ն ընդունել որպես ապացույց:

Ինչպես տեսնում եք պաշտպանն այնպես արեց, որ վկան նկարագրի, թե ցուցանմուշն իրենից ինչ է ներկայացնում: Հետո այնպես արեց, որ վկան ներկայացնի դրանում մուտքագրվածի հիմքերը: Այլ կերպ ասած, պաշտպանը հիմք պատրաստեց դիագրամի համար՝ մինչ դրա վերաբերյալ հարցեր տալը: Հետո այնպես արեց, որ վկան ներկայացնի դիագրամում ցուցադրված կատեգորիաները, որպեսզի դատավորը կարողանա առանց հարցեր տալու հասկանալ դրանք:

Դատավորները չեն սիրում ընդունել, որ որևէ բան չեն հասկացել: Հակառակ կողմը կարող է առարկություն անել այն ժամանակ, երբ միջնորդվում է, որ դիագրամն ընդունվի որպես ապացույց: Նա կարող է նաև խնդրել դատարանին հետաձգել միջնորդության քննարկումը՝ մինչև իր կողմից վկային խաչաձև հարցաքննության ենթարկելը: Դատարանը ավելի հաճախ թույլ է տալիս այդպիսի խաչաձև հարցաքննություն հենց այդ ժամանակ, քան սպասում է մինչև վկան ավարտի իր ցուցմունքը դրա վերաբերյալ: Հակառակ մողմի տեսանկյունից սա նախընտրելի է, քանի որ, եթե նա կարողանա հիմնավորել, որ ցուցանմուշն անարժանահավատ է, նա դրանով կկանխի որևէ հակասող ցուցմունքի ի հայտ գալը:

Այս դեպքում դիագրամը պարզապես քաղվածքների հանրագումար է: Եթե դրանում որևէ բան լիներ, որը փորձաքննության կարիք ունի, օրինակ՝արդյոք որոշ բաներ որպես ունեցվածք, թե որպես պարտք պետք է համարել, ապա հաշվապահի մասնագիտացմամբ մեկի կարիքը կլիներ: Այդ դեպքում վկան նախ պետք է հաստատեր իր համապատասխան որակավորումը և հետո միայն անցներ նրան, թե ինչպես է դիագրամը կազմվել:

G. Անթույլատրելի ցուցանմուշներ

Շատ են պատահում դեպքեր, երբ փաստաբանը ներկայացնում է մի ցուցանմուշ, որը նա չի պատրաստվում միջնորդել օգտագործել որպես ապացույց: Սա կարող է լինել աղյուսակ կամ գծագիր, որը պաշտպանը ցանկանում է օգտագործել բացման խոսքի կամ դատական վիճաբանությունների ժամանակի: Օրինակ՝ նա կարող է ցանկանալ ներկայացնել դեպքերի ժամանկագրական հաջորդականությունը, որպեսզի կենտրոնացնի դատավորի ուշադրությունը այն բանի վրա, թե ինչը երբ է տեղի ունեցել: Դա կարող է լինել աղյուսակ, որտեղ ներկայացված են փորձագիտական եզրակացության եզրահանգումները, ինչպես նաև հիմնական խաղացողների անունները: Կարող են լինել գծագրեր, ցանկացած տեսակի աղյուսակներ, լուսանկարներ. ամեն բան կախված է ձեր երևակայությունից: Լավ պատրաստված լինելու դեպքում այդ ցուցանմուշները կարող են լինել շատ համոզիչ պաշտպանի տեսանկյունից կարևոր համարվող մտքերը դատավորին փոխանցելիս: Իհարկե, կարևոր է, որ աղյուսակները կամ գծագրերը լինեն ճշգրիտ, քանի որ ոչ ճիշտ ցուցանմուշը կարող է լրջորեն վնաս հասցնել փաստաբանի արժանահավատությանը: Այս հորդորի հետ մեկտեղ խորհուրդ ենք տալիս փաստաբաններին ցուցաբերել ստեղծագործական մոտեցում ցուցանմուշներ ստեղծելիս և այդ մասին մտածել դատաքննությանը նախապատրաստվելիս:

<u>ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՏՔԵՐ</u>

Այս ձեռնարկի նպատակն է հիմնարար հմտություններ փոխանցել փաստաբաններին, ում անհրաժեշտ է մրցակցային համակարգում հաջողությամբ գործեր վարել: Ձեռնարկը չի հավակնում ներկայացնել բոլոր այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են մեծ փաստաբան դառնալու համար: Ընթերցողները պետք է փնտրեն նաև այլ ուսուցման նյութեր, որոնք կանդրադառնան դատավարության պրակտիկայի նաև այլ կողմերին: Միայն մշտական փորձի միջոցով փաստաբանը ձեռք կբերի հմտություններ, որոնք անհրաժեշտ են իսկապես մեծ փաստաբան դառնալու համար: Ցանկանում եմ ավարտել՝ շեշտադրում կատարելով երկու հանգամանքի վրա, որոնք փորձել եմ արտահայտել ամբողջ ձեռնարկում և որը կարելի է գտնել դատավարական պրակտիկայի վերաբերյալ բոլոր այլ ձեռնարկներում. եղեք ստեղծարար և պատրաստվեք, պատրաստվեք, պատրաստվեք:

Հաջողություն բոլորիդ

Դանիել Լինհարթ